Մի բարձր պատի մոտ յերեխան կանգ առավ և նրա մյուս կողմը փոքրիկ քար գցեց։ Իսկույն պատի ներքև քարեր աղմկեցին և մի ծակ բացվեց։ Յերեխան չորեքթաթ անելով ներս սողաց և դ'Անտրեկոլին շշնջաց։

— Հետևեցեք ինձ, պարոն։

Պատարժան վանականն ստիպված էր ծունկ չոքել և դան պես սողալ ծակի մեջ։ Կըռռռ...ախ... ֆարաջի թևը մի կտոր քոզից մի սուր քարի վրա։

Բակում նրա թևն ընկան ու վոտի կանգնեցրին։ Նա ճանաչեց իր ծանոթին—վաղը կոտրողին։

Բակի մի անկյունում պլպլում էր հնոցը։ Բարձր խողովակը մթնոլորտի մեջ կայծեր էր փռում։ Կրակի առաջ լուռ շարժվում էին ինչ-վոր մութ ֆիգուրներ։ Դրանք վառարան վառողներն էին, վոր իրենց ծորերկարավոր գործն էին կատարում։

Բակում յերկու վառարաններ էլ կային։ Նրանք չէին վառվում։ Մեկից արդեն պատրաստ անոթներն էին հանում, իսկ մյուսում դեռ չթրծած ճենապակին էին դասում։

Բանվորները դ'Անտրեկոլին այս հնոցի մոտ տարան։ Հնոցի

առաջ, ծածկի տակ թափած երկու կալ բոլորակ տուփեր՝ կարմիր խորտուբորտ կափից։ Զիրծած, անփայլ գորշ ներկով պատած անոթները դասված էին այդ տուփերում։ Իրանցով էլ զրվում էին հնոցները։ Տուփերը թուլ չէին տալիս, վոր անոթները հնոցներում գոլորշի արձակեն, այդ պատճառով էլ նրանք տաքանում էին վոչ թե մի ժամանակից, այլ աստիճանաբար։

Փոքր թասերից մի քանիսը մխաին էին զրվում տուփերից յուրաքանչյուրում։ Մեծ վազերի համար տուփերն իրար վրա զրվելով ամբողջ սյունիկներ էին պատրաստված։ Հատակ ուներ մեկ ներքևի տուփը, իսկ մյուսները միայն կալե կլոր սյունիկներ էին, զրված մեկը մյուսի վրա և գորշ կավով իրար ծեփած։

Ճենապակիով լի տուփերը դնում էին հնոցը՝ լցնելով մինչև վերը։ Հետո հնոցի բաց տեղերը փակում էին աղյուսներով և կավով ծեփում։ Միայն ներքևում վառելու համար տեղ թողնելով։ Այնտեղ խախանների փայտ էին գցում։

Դ Անարեկոլը մոտեցավ մի հնոցի, վոր ուրիշներից ավելի էր։ Հնոցը յոթ որ այնքան էլ տաք չէին վառել, իսկ ութերորդ որն այնքան փայտ էին գցել, վորքան հարկավոր էր շատ ուժեղ կրակ տանելու համար։

Փայտերը բարձրաձայն ճաքճքում էին, կրակը մռնչում էր քան փոստանոց խողովակի մեջ, խուրձ-խուրձ կայծեր էին փռվում մթնոլորտի մեջ։ Փխրուն սպիտակ գնդվածը կրակի ուժով և չնաշխար արհեստավորների հմտության շնորհիվ հնոցում դառնում էր փայլուն ճենապակի։

Հնոցի վերևում փոքրիկ պատուհանիներ էին շինված, վորոնք փակած էին թեղեներով։ Հնոցապանը բարձրանում էր վառարանի վրա, նայում էր այդ փոքրիկ պատուհանիներից և յերկաթե փայտով յուր էր հրում վերևի կավե տուփի կափարիչը։ Կրակի ցոլքը խաղում էր նրա յերեսին։ Այդ անտանելի ցոլքի միջով նա աշխատում էր պիտել ճենապակին։

Սկզբում ճենապակին տաքանում էր կարմրելու չափ, հետո գեղին փայլ էր տալիս, վերջապես հալեցնելու չափ սպիտակ կրակով։ Այդ ժամանակ դադարեցնում էին վառելը։

Հնոցը յերկու որ սառչում էր, հետո ծեփհանում էին անում ու ճենապակին դուրս տալիս։

Ցավորոք հնոցի մոտ գրված էին ամուր, ներկերով նախշած վազերը և կարմիր փայլատ գավաթներ, վորոնք մարջանի էին նման։ Սյունից կախված լապտերի լույսի տակ բանվորները մեկը մյուսի յետևից տուփերը բաց արին և նրանց միջից սկսեցին հանել դեռ տաք անոթները։

Դ'Անտրեկոլլն ուշեց բոլորը տեսնել նա ևս բարձրացավ դեռևս վառվող վառարանը և փոքրիկ պատուհանից նայեց։ Կուրացնող լույսը խփեց նրա աչքերին։ Ձեռքով սրբելով թափվող արտասուքը, նա աչքի մեկը կրկին դեմ արավ պատուհանին։

Հանկարծ փոքրիկ տղան գլխիվայր ցած ընկավ պատի վրայից, վոտքով նա շարունակ նստած եր, և բանվորներին ինչ-վոր բան փնթփնթաց.

— Մանդարինը, մանդարինն և գալիս շրջիկի հետ... շշնջացին վախեցած բանվորները, իսկ նրբանցքում արդեն քայլերի ձայներ, զենքերի ղնդոց եր լսվում։ Մեկը թակում եր դարպասը։

Դ'Անտրեկոլլն ամբողջ թափով նետվեց դեպի ցանկապատը, սակայն բանվորները նրան թևանցուկ արին, տարան հնոցի մոտ, նստեցրին գետնին և ծածկեցին տուփերից շինած սյունիկով, վոր պատրաստել եյին մեծ վաղի համար։

— Նրանք արդեն դրանցքումն են, ձեզ կտեսնեն,—շշնջում եյին բանվորներն ու սյունը ծածկում կավե կափարիչով։

Մանդարինը տասը վոստիկանով արդեն բակն եր մտնում։

Նա մտածեյավ տեսնելու, թե ինչպես և վառվում հնոցը։ Հետո նա դեսից պատրաստի անոթները, հանդոցից բանվորներին, վորովհետև թասերից յերկուսը ճաքել եյին, և մոմանալով յերդորդ հնոցին, նստեց խեցեկուժի վրա ու սկսեց դիտել, թե բանվորներն ինչպես են վառարանը դնում անոթներով լի տուփերը։

Նա դ'Անտրեկոլլից մեյն յերկու քայլ եր հեռու։ Վերջինիս թուքը ցամաքել եր, սառը քրտինքը պատեց նրան. վախենում եր, թե մանդարինը նրան կգտնի։ Ինչ ամոթ, ինչ խայտառակություն կլիներ։ Մանդարինի գետնական բարեկամը յերեխայի պես ցանկապատի տակից ներս եր մտել, պատռված թևքով սպրդել եր կավե տուփերի մեջ։ Ուզում եր լաց լինել։ Բանվորների համար ևս կատակի ժամանակ չեր։ Ով գիտե, թե ինչպես կկատաղեր, յեթե գտներ դ'Անտրեկոլլին։ Դուրս և բանվորներին բանս նստացներ՝ վզներին փայտե կոճղ անցնելով, կամ մեմ կրակի վրա կխորովեր։ Չե վոր ոտարերկրացու հետն հնոցի մոտ թողել։

Ահա այսպիսի մտքերով բանվորները տուփերը հնոցն եյին կոխում անհետաքրքիր կերպով դանդաղեցնելով աշխատանքը։ Վերջապես բոլոր տուփերն արդեն հնոցումն եյին, մնացել եր միայն մի բարձր սյունիկ, վոր իբր թե վաղ եր պարունակում։

Նրանում նստած եր դ'Անտրեկոլլը։

Բանվորներն արդեն զոդոշուն ձեռքերով ժռռեցան կավե պատերին, վոր այս զարմանալի վաղը հնոց տանեն։

Հանկարծ մյուս վառարանից շառաչելով վայր թափվեցին խեցու

կտորները, լվիցին վայրի աղաղակները և յերկու բանվոր իրար կպած, դեսին գլորվեցին։ Նրանք կատաղած կռվում էին։

Մանգարինը վեր թռավ, վոստիկանները նետվեցին դեպի կռվողները։ Անհայտ պատճառից լապտերը հանգավ, մի անոթ զրնգաց, ժյուռ հնոցներից բանվորները վախան։ Կռվողները գլորվում էին վոստիկանների վոտների տակ այնպես, վոր նրանց գլորեցին իրենց վրա, Մանգարինը գոռաց։

— Ձեռագրները, նայեցեք հնոցի կրակին։

Այս իրարանցման ժամանակ դ'Անարեկոլլին դուրս քաշեցին տուփերի տակից ու կոխեցին ցանկի անցքը։ Տղան նրբանցքում սպասում էր նրան։

Բակում լապտերը վառեցին և մեկայն այդ ժամանակ պարզվեց, վոր վոստիկանները ծեծում են իրար, իսկ կռվողները հանգիստ կանգնած են հնոցներին մոտ։

Մանգարինը հրամայեց նրանց կրունկները փայտով ծեծել՝ աշխատանքի ժամանակ կռվելու համար։ Նա չգիտեր, վոր բանվորներն այդ իրարանցումը դիտմամբ էին սարքել, վորպեսզի ճանապարհ գնեն դ'Անարեկոլլին և ավելի մեծ պատժից պատսպեն ընկերներին։

Դ'Անարեկոլլը պատի տակից լսում էր փայտի խուլ հարվածները և բանվորների հառաչանքը։ Փոքրիկ տղան դարձյալ նրան ուրիշ նորություններով տարավ։

Մթության մեջ անձայն պլպլում էին հնոցները։

Տուն գառնալով, դ'Անարեկոլլը շտապով նկարեց վառարանի գծագիրը և վերջացրեց հայր Որբինին ուղղած նամակը։ Նրան գրեց, ինչ վոր իմացել էր թրծուածների մասին, իսկ իր արկածների մասին լռեմամանակ վանականը լռությունն պահեց։

Ինչու պետք է ամբողջ աշխարհին պատմեր, թե ինքն ինչպես է նոտել կավե տուփի մեջ և խցկվել ցանկապատի տակի ծակը։

Նա իր նամակը Ցեվրոպա ուղարկեց պորտուգալական նավով։ Այդ 1712 թվին էր։

Հայր Որբրին ճարպակալած աչքերը հիացմունքից փայլեցին, յերբ կարդաց նամակը։ Վերջապես ճենապակու գաղտնիքն ընկավ ճշմարիտների ձեռքը։

Նա գիտուն վանականներին կանչեց իր հովասուն խուցը և հանդիսավոր կերպով կարդաց նամակը։ Սակայն գիտուն հայրերը մեկայն իրենց ծոծրակները քորեցին։

— Հեշտ է ասել — կաո-լինն և պե-տուն-տան. իսկ դրանց քրիստոնեական անունները։

Հայր Որբրին բարկացավ։

— Ձեզ ասում են կաո-լինը սպիտակ կավ է, իսկ պե-տուն-տանն լեռնային կարծր քար։

— Աշխարհում պիտակ կավեր շատ կան, իսկ լեռնային քարերը դրանից էլ շատ են,— պատասխանեց վանականները, գլուխ տվին հայր Որբերին և սկսեցին իրենց հարցնելը դեպի

Այդ ժամանակ նա նամակը հանձնեց արքայական քիմիկոսներին և փիլիսոփաներին Նրանք յերկար ժամանակ գլուխ էին կոտրում

— Բայց գուցե մեզանում այդպիսի կավեր ու քարեր բոլորովին չկան,— ասացին վերջապես արքայական քիմիկոսները Ինչպես հողն այլ է, մերն՝ այլ

«Ինչ անել ուրեմն, մտածեց հայր Որբերին և գրեց դ'Անտրեկոլլին, վոր նա կատ-լինի և պե-տուն-տսիյի նժուշներ ուղարկի իրեն

Ուրբաթ առավոտյան, մինչև դ'Անտրեկոլլն իր յերկրորդ նամակն ուղարկեց նժուշների հետ Բայց ֆրանսիացիներին նմուշներն էլ չդուր եկան

Ֆրանսիացի գիտնականները դեռ յերկար զբաղվեցին վանականի նամակով և աշխատում էին հասկանալ թե ինչպես է շինվում ճենապակին Դ'Անտրեկոլլի այս նամակները մինչև այսոր էլ պահվել են, բայց չինական գաղտնիքը յեվրոպացոց համար բանալը նրանց չեր վիճակված

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱԼՔԻՄԻԿՈՍԸ

ԲԵՌԼԻՆԸ ՀՈՒԶՄՈՒՆԳԻ ՄԵՋ

Մինչ դ'Անտրեկոլը թափառում եր կինո-տեհնում, նայում եր պլպլան հոդ ինդերին և մանդարինի մոտ թեյ եր խմում, Ցեվրոպայում նուչնպես քնած չեյին։

Դեռ դ'Անտրեկոլի առաջին նամակը հայր Որբրի փափկիկ ձեռքը չեր հասել, նա դեռ պորտուգալական նավով նոր եր անցել Բարեհուսա հրվանդանը, յերբ Գերմանիայում այնպիսի դեպքեր տեղի ունեցան, որոնք աղմկեցին ամբողջ Ցեվրոպան։

Հանկարծ գրեդդեն յան անտիեդենի գործարանն խսկական սպիտակ ճհնապակուց թասեր արտադրեց։

Ո՞ւմ և ինչպես հաջողվեց հենավորց դատոնիքը բանալ։ Սկզբում այդ վոչ վոք չգիտեր։ Իսկ մենք, յերե ուղում ենք իմանալ, թե այդ ինչպես կատարվեց, պետք է յեթ դառնանք դեպի 1701 թվականը։

Հոհենհմբերգյան մի ամպամած որ Բեռլինը սաստիկ հուզված եր։ Հասարիկ քաղաքացիք աշխուժ կերպով զրուցում եյին փողոցներում։

— Լսել եք, հարևան, հազար տալեր նրան, ով այդ դատարկապորին բուրդոժխտի մոտ կրնիր։ Հազար տալեր՝ փընքռոտ տղայի համար, հե-հե հե։

— Ոհո,— պատասխանեց հարևանը, պատուհանի մոտ ծխամորճ քաշելով,— տղան հասարակ տղա չե, նա վոսկի յե շինում։

— Ո՞վ է վոսկի շինում, վոչ-վոք չի կարող վոսկի շինել,— ճղճղաց կիսախուլ մի ծերուկ— քիթը քթանոտ քաշելով։

— Դեղագործ Ցորնն ասում է, թե տղան հմայելով, նրա համար կես գուհատե վոսկի յե շինել։

— Չի կարող պատահել,— հոնքերը բարձրացրեց մի քաղաքացի տիկինս Ցես քանի անգամ եմ տանել նրան դեղատունը։ Ծուլի ու դանդաղկոտ մեկն է, վորի նամանները քիչ չեն, դրան էլ ավելացրած, վոր միշտ փոսի պես քնկոտ է։

— Ինկոտ ես, վորովհետև ամբողջ դիշերն իր վոսկին ես յափում,— բացատրեց հարևանը, հանդիսավոր կերպով մատը բթին տանելով։

Թիկնոցավոր ու կլոր գլխարկավոր դեղագործական աշակերտները, մեկական գավաթ գարեջուրը առաջներըս, վիճում եյին սովորականից բարձր։

Նա անդիկը յուացրել և յերկարավիզ սրվակում և հանկարծ հատակին վոսկի յև տեսել,—ասում եր մեկը՝ հուզմունքից աչքերը դես ու դեն գարձնելով։

— Գատարկ բան,—գոռում եր մի ուրիշը,—մուրացկան հույն, ձեր Լասկարինն և նրան նվիրել կախարդական վոգեթրմոցով լիքը սրվակ. նա ուզածդ մետաղը վոսկի յև գարձնում։

Լոբինների ծառուղում կանգ առավ մի կառք՝ դռնակաները զինանիշներով. պըճնըված պարոններ գուրս յեկան ու շշնջում եյին բարձր կեղծամերը շարժվում, արծաթե գլխով ձեռնափայտերը թակում եյին գետինը՝ շշնջյունի տակտով։

Լսել եք, բարոն, մեր նորաթուխ արքայական մեծամեծությունը վոսկե գրամների խիստ կարիք ունի։ Թագավորը վոսկի շինող ջանկին ձեռքից չի թողնի։

— Ինչպես չե, ինչպես չե... արդեն նրա յետևից մարդիկ են ուղարկվել—տասներկու հոգի՝ լեյտենանտի գլխավորությամբ...

— Պատերազմ կարելի յև սպասել, բարոն. այդ տղայի պատճառով պատերազմ կարելի յև սպասել Սաքսոնի այի հետ։

— Լսել եք, լսել եք, ծառուղում պատյանները գործելով խշխշում եյին չոր տերևները։

Այս բոլոր լուրերի առարկան տասնինը տարեկան մի պատանի յեր, վորին հազար տարեր եյին գնահատել, այդ ժամանակ մի վատ ձիով գնում եր դեպի սաքսոնական Վիտահներբերգ քաղաքը։

Ձերբ ճանապարհին նրան կապտագույն համազգեստով պրուսական գինվորներ եյին պատահում. նա ձին քշում եր՝ առանց իրեն հաշիվ տալու, կարծես մահից եր փախչում։ Բայց սաքսոնական սահմանին անցնելով, նա հանգստացավ, և ճանապարհորդական պայուսակից մի նամակ հանելով, սկսեց քնքշո՛ն շոյել Ծրարի վրա գրված եր «Վիտահներբերգյան համալսարանի ռեկտոր պարոն Կերբիտայերինդ»։

Մայր մետդ արևն իր ճառագայթները գցեց գյուղական զանգակատան կատարին։ Տանիքի տակի կլոր պատուհանը փայլից վոսկեզարմի պես։

— Վոսկի՛, շշնջաց պատանին, ցնցվելով. կարծես մի սարսափելի բան հիշեց։ Հետո գլուխը թափահարեց, ծիծաղեց ու ձին մարակեց։

Հեռվում աքղեն յերևում էին Վիտաենբերգի կարմրավուն աշտարակները, աշտարակները՝ պրոֆեսորների և ուլպան ուսանողների քաղաքի։

ԱԼՔԻՄԻԿՈՍՆԵՐ

— Հիմարություններ,—ասաց քաջարի մայոր Տիմանն իր լացող կնոջը։ Ծերբեք չեմ հավատա, թե Հանսը վոսկի կկերի։ Նա ավելի շատ ընդունակ է վոսկի «կեղտոտելու», քան թեկուզ մի վոսկե հատիկ «յուեելու»։ Ցավ մայորն աշխատելով թագցնել իր հուզմունքը, բարկացած կերպով սպիտակած բեխերն էր վոլորում։

Նրա խորթ վորդի Իոհանն Բոյտգերը դեռ տասնչորս տարեկան հասակից սովորում էր Բեռլինում, դեղագործ Ցորնի մոտ։ Տղան ընդունակ էր։ բայց դժբախտաբար զբաղվում էր ալքիմիայով։

Քիմիան այդ ժամանակ հարգի չէր,—բայց փոխարենն ալքիմիան, «բարձրագույն քիմիան», ինչպես անվանում էին, մեծ գիտություն էր համարվում։ Ալքիմիան սովորեցնում էր, թե ինչպես պետք է վոսկի շինել։

Վոչ միայն ուսանողների տաք գլուխները, այլև ծեր գիտունների գնդած ճակատները կռանում էին այն ոջախների վրա, ուր յերկարավիզ սրվակներում անդիկ էր շոգիացվում։ Դողդոջուն մատները նրա մեջ ծծումբ էին ցանում, ծխատար աչքերն ագահաբար կպչում էին սրվակին, հուսալով նրա հատակում տեսնել կարմրավուն հեղուկը մոգական վոգեթրմոցը, կամ այն փոշին, կամ փիլիսոփայական քարը, վոր մարդկանց մշտատև ջանելություն և տալիս, կամ բոլոր մետաղները վոսկի յի դարձնում։

Սնդիկը ծծումբին խառնելով, ալքիմիկոսները կինովար-կարմրագույն ծծմբատ սնդիկ էին ստանում։ Կինովարը վոչինչ չէր փոխում վոսկու։ Այդ ժամանակ ալքիմիկոսներն ասում էին, թե աշխատանքը բախտավոր որ չի յեղել սկսված, և նորից էին սկսում։

Նրանք հավատում էին կախարդությանը, իսկ ֆիզիկա և քիմիա վատ դիտեին։ Նրանք գաղտնիքով էին շրջապատում իրենց և «առեպտներ» էին կոչվում։

«Առեպտներից» մեկը կարծում էին, թե արևն ու աստղերը վոսկու հալված կաթիներ են։ Հարկավոր է մեզ կախարդական նշաններ գծել և նրանք կարդալ, և վոսկին կսկսի յերկնքից կաթել ուղղակի ալքիմիկոսների սրվակը։

Իսկական գիտնականները ծիծաղում էին նրանց վրա։ Քիմիկոս Լիմերին նրանց մասին այսպես էր ասում. «Ալքիմիայի սկիզբը պարծենկոտություն է, նրա շարունակությունը—ժլատությունը, իսկ վերջը—ժուրգկանությունը և թոքախտը»։

Ճերմակասարդ Բյուզերն սկսեց պարծենկոտությունից։ Նա շատ էր ընդունակ և հեշտ էր հիշում ամեն տեսակ գերխմաստու-

թյուն, չեթե նա իրոք դատարկ բան էլ լիներ։ Ալքիմիկոսները շուտով նրան «ադեպտ» դարձրին։

Ինչպես չպարծենար նա ընկերների առաջ, որ ինքն «ադեպտ» է, ինչպես չերևակայեր՝ թե ինքը վոսկի չկիսել գիտե։ Նա ամենքին մի կողմ վոսկի էր ցույց տալիս, որ իբր թե ինքն է չափել։

Նրան հավատում էին ամենքը—նույնիսկ իր ուսուցիչ դեղագործ Ծորնը։

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Ճերմակասարդ ալքիմիկոսի մասին յեղած լուրը հասավ պրուսական թագավոր Ֆրիդրիխոսի ականջը։ Այս անձի հետ կատակ անել չէր կարելի։

Այդ ժամանակներում թագավորները վոսկեգործի սատիկ կարիք ունեին։ Հարկերով գանձած փողը բավական չէր փառահեղ պալատներ կառուցելու, ազատնդազարդ բանկիրների համար։ Արքայական տուրքերը վերջնականապես քայքայում էին գյուղացիներին ու արհեստավորներին։

Ծուրաքանչյուր թագավոր ուզում էր ստանալ փիլիսոփայական քարը և իր տանը հեշտ ու հասարակ կերպով վոսկի շինել՝ յերկաթը կամ արճիճը վոսկու վերածելով։ Նրանք ևս փիղիկա ու քիմիա չգիտեին։

Թագավորներն ալքիմիկոսներին իրենց պալատներն էին հրավիրում, փորձերի համար նրանց փող էին տալիս և վոսկի էին սպասում։

Ալքիմիկոսներն ամենայն ճշտապահությամբ ուտում ու խմում էին արքայական սեղանից, աստղերու դուշակություններ էին անում և պալատական տիկիններին համար կոմբրանների էին յեփում, բայց վոսկի չէր լերևում։

Իր հովանավորի աչքին թոզ փչելու համար ալքիմիկոսը հրավիրում էր նրան իր փորձերին. պալատական մեծամեծները լցվում էին ալքիմիկոսի մասյ լաբորատորիան։ Դարակների վրա աղոտ կերպով առկայծում էին փղշոտ սրվակները, կմախքն անկյունից իր դեղնավուն ատամներն էր ցույց տալիս, բուն խրտվիլակը թևերն էր տարածում ոջախի վրա։

Ճարտարենակ Նշանների կարած փոմիզ հագած ալքիմիկոսը արվակի մեջ անդրկ, ծծումբ ու արճճ եր խոյնում, վորոնք պետք և վոսկի դառնային։ Այս բոլորը նա յեռացնում եր կրակի վրա, բազադրությունը խառնելով պղնձե ձողով։ Ջուղը ներքից դառարկ եր, իսկ մեջը վոսկի յեր թագցրած։ Նա աննկատելի կերպով անցնում եր սրվակի մեջ։

Ցերք փորձը վերջանում եր, ալքիմիկոսը բոլորին ցույց եր տալիս սրվակի հատակի վոսկու կտորը։ Բոլորը զարմանում էին, հավանավորը նրան փող եր տալիս, վոր ավելի շատ վոսկի յերիր։ Իսկ վորպեսի ալքիմիկոսն իր գաղտնիքով չվախչի, հաճախ նրան բանտ էին դնում և աշխատում էին հարցուփորձով տանջելով վերլուծողական քարի գաղտնիքն իմանալ։

Ֆրիդրիխոս Առաջինից հարյուր տարի առաջ սակայնական կուրֆիրստը բանտում տանջանքներ տալով չարչարեց շոտլանդացի ալքիմիկոս Սիմոնին, վորովհետև Սիմոնը չկարողացավ բանալ նրա համար այն գաղտնիքը, վոր ինքն էլ չգիտեր։

Ֆրիդրիխոս Առաջինն արդեն կանգնած ուշարկից սիքանչի ալքիմիկոսների վորոնք չէին կարողանում գոյություն չունեցող գաղտնիքը հայտարերել։

Լսելով յերիտասարդ ալքիմիկոս Բյոտգերի մասին, Ֆրիդրիխոսը նրան իր մոտ պահանջեց։ Բայց Բյոտգերը չեր ուզում կախարդանքը բարձրանալ Թագավորի ուղարկած մարդիկ չգտան Իոհաննին վոչ գեղատունը, վոչ էլ չարչախի խցիկում։

Այդ ժամանակ Ֆրիդրիխոսը մարդիկ ուղարկեց նրա յեղբոր մոտ և հազար տալեր խոստացավ նրան, ով կգերիր փախատականին։

Զարմանալի չե ուրեմն, վոր Բյոտգերի մայրը լաց եր լինում, իսկ մայրը վորդուն վիճակով աննգատացած, բնիսին եր կրծում։

Մի յերեկո նրանց դուռը բախեցրին։ Մի մարդ մի թղթի կտոր տվեց ու գնաց։ Թղթի վրա գրված եր. «Մի անհանգստանաք ինձ համար, թանգագին մայր։ Ցես կհնդանի յեմ և առողջ և սովորում եմ համալսարանում։ Առողջ յեղիք և դուք»։ Ստորագրություն չկար, բայց մայրը ճանաչում եր վորդու ձեռքը և հանգստացավ, իսկ մայրն ասաց։

— Նա, քո Հ. նոր, միշտ բանիմաց տղա յեր։

Նամակի մասին նրանք վոչ-վոքի չպատմեցին։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐԸ ՍԼԱՑԱՆ

Այն ժամանակ Գերմանիան բաղկացած էր զանազան մանր պետություններից։ Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր թագավորը, իր մայրաքաղաքը և իր դեսպաններըՙ հարևան թագավորների մոտ։ Բյոտգերը պրուսական թագավորությունից սաքսոնականը փախավ։ Այդ ժամանակ սաքսոնական թագավորը Ոգոստոս Ուժեղն էր, իսկ Դրեզդենն քաղաքը նրա մայրաքաղաքն էր

Ոգոստոս Ուժեղը դեմ չէր, որ ինքը հարևան Լեհաստանի թագավորն էլ դառնար, այդ պատճառով էլ հաճախ էր գնում Վարշավա — Լեհաստանի մայրաքաղաքը։ Այդ ժամանակ նրա փոխարեն Սաքսոնիան կառավարում էր նախարար Ֆյուրստենբերգը։

Այն որը, յերբ Բյոտգերի մայրը և մայոր Տիմմենը Իոհաննեի նամակն ստացան, իշխան Ֆյուրստենբերգը նստել էր Դրեզդենում և կարդում էր Բեռլինից ուղարկված գաղտնի նամակը։

Սաքսոնական դեսպանը Բյոտգերի մասին գրում էր նրան. «Մենք կարող ենք չնորհավոր ել ձեզ, որ յերիտասարդ ալքիմիկոսը գտնվում է մեզ մոտ, Սաքսոնիայում։ Նա յեթե ձեզ համար շատ վոսկի կշինի և կլցնի թագավորական գատարկ դանձարանը։ Հարկավոր է նրան հակել...»

Մի ժամից հետո սուրհանդակը Ֆյուրստենբերգի նամակով սլանում էր Վարշավա, ուր սաքսոնական թագավոր Ոգոստոս Ուժեղն աշխատում էր լեհական թագը ձեռք գցել։

Ոգոստոս Ուժեղին վոսկի գրամներ նույնքան էին հարկավոր, որքան և Ֆրիդրիխոսին։ Ալքիմիկոսի հայտնվելը շատ է դուր նրա։ «Ձերբակալել նրան, հետևել և իմանալ վոսկու գաղտնիքը», շտապեց պատասխանել թագավորն իր նախարար Ֆյուրստենբերգին։

Իսկ Ֆրիդրիխոսն իր մարդկանց ուղարկեց Դրեզդեն՝ պահանջելով յերիտասարդ ալքիմիկոսի հանձնումը, վորպես վոճրագործի, վոր փախել էր դատից։

Թագավորները պատրաստ էին կռվել ալքիմիկոսի պատճառով, ինչպես շներըՙ վոսկրի պատճառով։

Դրեզդենից Ֆրիդրիխոսին չէին պատասխանում։

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՈՒՄԱՆՈՂԸ

Մեր կիրքմայերը— Վիտտենբերգյան հայժալսարանի ռեկտորը, միանգամից իր ուսանողների շարքն ընդունեց ուրախ, վառվռուն աչքերով պատանուն, վորը Բեռլինի գիտնականների նամակով էր եկել։

Բյոտգերն ամեն որ ուրախ յեղջ սուլելով, անցնում էր հայժալսարանի կամարավոր միջանցքով։

Հերձարանում նա մեռած ձեռներ ու վոտներ էր կտրտում և տեսնում էր, թե մկաններն ինչպես են դյուսված իրար հետ։

Նա մոռացավ ալբիմիկոսների հրաշքներն ու ցանկացավ բժիշկ դառնալ։ Լաբորատորիայում նա գործ ուներ կմախքների ու թորանոթների հետ—հեշտ լուծելով այն խնդիրները, վորոնց վրա ուրիշ ուսանողներ յերկար ժամանակ քրտինք եյին թափում։

— Ընդունակ ուսանող եւ Պարզ գլուխ և վոսկե ձեռներ,—նրա մասին ասում եյին հին պրոֆեսորները։

Հանկարծ նա չքացավ նույնքան անսպասելի կերպով, ինչպես հայտնվել էր։

Նրա ընկերները հարևաններից իմացան, վոր դիշերը սևում փաթաթված մարդիկ յեկել ուսանողին կառնեն են նստեցրել և տարել են՝ հայտնի չե թե ուր։

Այն թորանոթները, վոր Իոհաննը թողել էր լաբորատորիայում, փոշու եյին ծածկվել, նրա քայլերն այլևս չեյին զրնգում մելանցքի սալաքարերի վրա։

Նա յերբեք չվերադարձավ համալսարան։

ՁԻՆԱՆՇԱՆՈՎ ՏՈՒՆԸ

Կառեթը թոչկոտելով, Իոհաննին մի ժուռ տեղ հասրեց։ Նրա ուղեկիցը, վոր դիմակով եր, պատրաստ ուներ մի մեծ աւրճանակ և մեռածի պես լուռ եր։ Ծիրկու կողմից հավորները եյին աշշավում։ Բյուգերը չգիտեր, թե իրեն ուր են տանում։

Մյուս օրվա յերեկոյան գիմ կառեթը կանգ առավ մի մեծ քաղաքում, դարպասների վրա քարե զինանշան ունեցող մի տան առջև։ Բյուգերին տարան իշխան Ֆյուբուսենբերգի մեռաքսապատ առանձնասենյակը։

Սիրուլը ու շղթաքրիճ Ֆյուբուսենբերգը, վորին փայլ եյին տալիս մատների ագամանդե մատանիները, Բյուգերին ասաց, թե Ոգոստոս թագավորը ցանկանում է նրանից իմանալ վոսկու գաղտնիքը։ Բյուգերն ապրելու յե պալատում և թագավորի համար վոսկի յեփե։ Ցեմա մասին փախչել, նրան բանտ կնստեցնեն։

Բյուգերը գունատված, դողդոջ շրթունքներով հրաժարվեց վոսկի յեփելուց։ Նա ուզում եր համալսարան վերադառնալ և սովորել։ Բյուգերը, ձևքերը կատաղելով, վազվզում եր առանձնասենյակում և պահանջում եր ազատ թողնել իրեն։

Ֆյուբուսենբերգը միայն ժպտում եր։

— Ցեմա դուք մեզ համար չբանաք վոսկու գաղտնիքը, դուք կվնթարկվիք նույն վիճակին, վորին յենթարկվել են մյուս խաբեբաները։ Գիտեք ինչ վիճակ է այդ։

Բյոռգերը գիտեր—այդ կախաղանն էր։ Նրան թվաց, թե ողկոյզն արդեն սկսում է իր կոկորդը հեկեկալով ընկալ բազկաթոռի վրա ուժասպառ ծածկեց։

Ֆյուբսաենբերգն դղրդյուն կերպով բռնեց նրա ուսը և բանալով դուռը, ցույց տվեց նրա համար պատրաստած սենյակները։ Թավշե բազկաթոռների վրա կիսագոծած վոտներն անդրադառնում էին պարկեշտ հայելում։

— Ձեռնանաք, որ այժմ ձեզ «բարոն Շրադեր» են անվանում, ասաց Ֆյուբսաենբերգը,—այլևս վոչ մի Բյոռգեր չկա։ Այդ հարկավոր է, վորպեսզի պրուսական թագավորի հետապնդողները ձեզ չգըտնեն։ Բայց գլխի, բարոն Շրադեր։

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ ԶԻՐՆՀԱՈՒԶԸ

Դրեզդենում վաղուց ի վեր ամենքն էին ճանաչում Փողոցում նկատելով նրա բարձր հասակը՝ ձեռնափայտով, յուրաքանչյուր դրեզդենցի շտապում էր սիրալիր կերպով բարևել նրան և բարի առավոտ ցանկանալ, մորպեսզի փոխարենը նրանից մի սիրալիր ժպիտ առնան։

Մաթեմատիկոս Զիրնհաուզին ամբողջ ՅԱվրոպայում էին ճանաչում։ Նա գիտնական էր և իմաստուն գյուտարար։ Մեծ ֆիզիկոս Լեյբնիցը նրա բարեկամն էր։

Զիրնհաուզի տանը դռնվում է ինն նրա շինած կիզիչ հայելիները, որոնք մեկ էլիս մեծ լայնք ունեին։ Նրանց պղնձե փայլեցրած մակերեսն արևի ճառագայթներն այնպես էր անդրադարձնում, որ նրանք ավելի բարձր ջերմություն էին տալիս, քան փայտի վառարանները։

Վերցրեք մի խոշորացնող ապակի և նրանով արևի ճառագայթ բռնեցեք։ Ապակու տակի թղթի վրա մի լուսավոր, վառ բիծ կընկնի։ Դուք կտեսնեք, որ թուղթը շուտով կվխա, իսկ ապակու տակ գրված տառը կդառ, որ պայծառ բիծը վառվում է։ Սա նրանից է առաջ գալիս, որ արևի ճառագայթներն ապակու միջով անցնելով, բեկվում և բոլորը մոդովվում են մի կետի մեջ։

Այսպես էլ Զիրնհաուզի հայելիներն էին շինված, բայց շատ ավելի ուժեղ էին։ Նրանց կրակի վրա կարելի էր մի քանի րոպեում մի դրամ հալել։

Ջիրնհառուը պապենական կալվածքում ապակու գործարան էր հիմնել, և այնտեղ մանրադիտակների ու հետազոտականների համար ապակի էր շինում։

Ցերը Վալաեր Ֆոն Ջիրնհառուը Ֆյուրստենբերգից տոմսակ ստացավ՝ գնալ նրա մոտ ընթրիքի և ծանոթանալու մի յերիտասարդ ալքիմիկոսի հետ, նա գեաքը գժգոհ կերպով կնճռոտեց։ Նա չէր ուզում գնալ. նա ալքիմիայի հրաշքներին չէր հավատում. Բայց հետո մտաձեց. «Գուցե յայ մի ժպրախտ ալքիմիկոս փորձանքի մեջ ընկավ։ Գուցե կարողանամ վորևե կերպ ոգնել նրան»։

Նա ծածկեց իր յեռանկյունի գլխարկը, վերցրեց ձեռնափայտը և գնաց պալատ։

ԲԱՐՈՆ ՇՐԱԴԵՐԸ

— Թույլ տվեք ներկայացնել ձեզ իմ յերիտասարդ բարեկամ բարոն Շրադերին,—ասաց Ֆյուրստենբերգն իր հյուրերին, յերբ դահլիճ մտավ վարազուն բաճկոնավոր բարեկամի յերիտասարդը։

Բաց սեղանը փայլում էր արծաթով և բյուրեղապակե բաժակներով։ Ջահերն իրենց բրոնզե թևերով դեղին մոմեր էին պահում նրանց վերևում։

«Բարոն Շրադերը» դունատ էր, հոնքերը վեր քաշած, բերանի շուրջը դառը ծալք։

— Ուրախ ենք, վոր ձեզ Դրեզդենում ենք տեսնում, թանգագին բարոն,—ասաց նրան սաքսոնական հանքահորերի պետ հասուկիկ Պաբստը։ Մենք լսել ենք, վոր դուք մեծ գանձ—փիլիսոփայական քար եք փնտրում։

— Գանձ՞,— ծիծաղեց բարոնը,—աշխարհում միակ գանձն ազատությունն է, իսկ յես դրանից յես գերի յեմ։

— Շշ՜... մեջ մտավ սիրալիր Ֆյուրստենբերգը,—դուք գերի չեք, դուք միր հյուրն եք, սիրելի բարոն։ Ցեվ նա նրա բաժակը դինի յեր լցնում։

Կամաց-կամաց գինին սկսեց ազդվել պատանու գլխուն։ Նրա այտերը կարմրել էին։ Նա սկսեց տաք-տաք ու դյուրագրգիռ կերպով խոսել, վոր ալքիմիկոսներն իսկական փորձեր չեն անում, չվիտեն մետաղների հատկությունը։ Նրանք ոգնա մարդիկ են։

— Մեզ գիտություն և պետք և վոչ թե կախարդանք,— բացականչեց նա։

Ջիրնհառուը խրախուսիչ կերպով գլխով եր անում։ Պաբստը բարոնին իր հանգերից հանքանյութ ու լեռնային քարեր առաջարկեց փորձերի համար։

— Ցեթե ձեզ ձեր փորձերի համար բարձր ջերմաստիճան և

հարկավոր, չես ձեզ իմ կիզակայլինները կատ, և—չեկեք միասին աշխատենք,—ասաց Զիրնհաուզը։

Բյուգներն ուրախ թյունից բորբոքվեց։ Գիտնական Զիրնհաուզն ուզում է աշխատել իր նման կրիտասարդ ուսանողի հետ։ Նա ուրախ էր։

Ֆյուրտանները դեռ և Պարսար վարվում էին նրա հետ՝ վորպես կարևոր անձի հետ։ Գինին հաճելի կերպով ազդում էր գլխում։ Նա խմում էր բաժակ բաժակի յետևից, ծիծաղում, խոսում էր Ֆյուրտանները կրկին ուսին, պարծենում էր, թե փիլիսոփայական քարի գաղտնիքը գիտե և խոստանում էր թագավորի համար հարյուր հազար տալերի վոսկի յուրել Զիրնհաուզը նայում էր նրան խելացի, տխուր աչքերով։

Ցերը հյուրերը հրաժեշտ տվին և բարոնն անհասատատ քայլերով գնաց իր ննջարանը, Ֆյուրտանները դեռ մոտ կանգնեցրեց մաթեմատիկոսին.

— Ինչ կասեք դուք ալքիմիկոսի մասին —հարցրեց նա։

— Ընդունակ տղա յե, բայց պարծենկոտ է,—պատասխանեց Զիրնհաուզը և հառաչեց։

Նա ափսոսում էր պատանուն, վորից կարող էր լավ գիտնական դուրս գալ, յեթե նրա կյանքին չխառնվեր հիմար փիլիսոփայական քարը։

ԹԱՆԿԱՐԴԻՄ

Իոհաննն Բյուգերն արթնացավ ծանր մեռաքան վարագույրներով մեծ ննջասենյակում։ Նրա գլուխը ցավում էր։ Սառն առավոտը մտավորներն նայում էր պատուհանի վանդակից։

Նա հիշեց յերեկվա որն ու հառաչեց։ Իր հիմար պարծենկոտությամբ իր բանտի դռներն ավելի ամուր փակեց։ Նա իշխանին խոստացավ վոսկու ամբողջ լճակներ։ Այժմ իրեն այլևս բաց չեն թողնի։ Իսկ յերբ հայտնի դառնա, վոր նա վոսկու գաղտնիքը չգիտե,— նրան կկախեն։

— Բայց յես չեմ կարող, չեմ ցանկանում կախվելիմ նրանից,—զոչեց նա։ Անկողնից վեր թռչելով, նա մոտեցավ պատուհանին ու բռնեց չուգունե վանդակից։

— Ի՞նչ է կամենում բարոնը,—վարպետների յետևից դուրս գալ հարցրեց մի ժպրմնող սպասավոր։ Նա դռան յետևում լսում էր Բյուգերը կատաղեց։

— Կորիր այստեղից, սրիկա, լրտես։

Բյուգերը կոշիկը շպրտեց դեպի սպասավորը և վայր գցեց լվացվելու թասը՝ փորչի հետ միասին։

Մեկ սպասավորն վոխարեն յերկուսը դարձան։ Նրանք ժոռը բռնեցին կատաղած պատանուն։

— Դե, դե,—ասաց Ֆյուբսաենքերգը,—ժպիտը դեմքին լոքելով փորչի ու հատակին գոյացած լճակի վրայով,— ինչ կարիք կա այդպես աղմկելու։ Նա հրամայեց, վոր սպասավորները հեռանան։

— Ազատ թողեք ինձ։ Ինչմե յեք պահում ինձ, յես վոճրագործ չեմ,—գոռում ևր Բյուգերը։

Ֆյուբսաենքերգը լրջացավ։

— Ազատությունը ձեր ձեռքումն է, սիրելիս։ Հայտնեցեք ինձ վոսկու գաղտնիքը, և դուք հենց նույն ժամին ազատ կլինեք։ Մի հաժառեք, բարոն։ Լաբորատորիան ձեզ է սպասում։

ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ՎՈԳԵԹՐՄՈՑ

Բյուգերը յերեկ որ աշխատեց լաբորատորիայում։ Ջորրորդ որը նա կանչեց Ֆյուբսաենքերգին։ Սկզբից դնելով ամանի մեջ՝ նա սկսեց գոլորշիացնել այն, վրան ինչ-վոր կարմրագույն հեղուկ ավելացնելով։

Ո՛չ, հրաշք։ Ցեռացնելուց յերկու ժամ անց ամանի հատակին վոսկու մի անկանոն կտոր յերևաց։

Ֆյուբսաենքերգը սրտանց գրկեց ալքեմիկոսին։

— Տվեք ինձ վոգեթրմոցը, բարոն, ամենև Վարշավա՝ Ոգոստոս Թագավորին։ Ձես ինքս նրա մոտ կգնամ։ Ինչք եմ տալիս, վոր Վարշավայից ձեզ համար աղաչություն կբերեմ։ Իսկ մինչ այդ պահպանից վոչ մի տեղ չգնաք, այլ սպասեցեք իմ վերադարձին։

Ֆյուբսաենքերգը գնաց Վարշավա։ Յեթե նա իմանար, վոր ամենուրեք վոսկի յերևաց վոչ կախարդական վոգեթրմոցից, այլ միակ վոսկե զրամից, վոր կորված եր հին թիլինոցի աստառում։ Հենց այն թիլինոցի, վորում դեղատան աշակերտը վաճառել եր Բեռլինից։

Յեթե նա գիտենար, վոր Բյուգերը վոսկի զրամն ամենն եր գցել, հուսալով ժամանակավորապես թուլացնել հսկողությունը և հեռու վաճառել կախարդական վոգեթրմոց վորոնողներից։

ԱՆՊԱՏԿԱՌ ԲԵՐԾԸ

Ոգոստոս Թագավորը նստած եր վարշավյան իր առանձնասենյակում, կապտագույն բազմոցի վրա։ Նա գորգի վրա յերբ դրել իր սիրելի սրազունչ քերծին, յերբ դուներում յերևաց Ֆյուբսաենքերգը՝ պալատական խոնարհ յերկրպագություններով։

Ֆյուբստենբերգն արծաթե տուփը գրեց թագավորի առջևի բազկոնոյա սեղանին և ասաց.—ահա վիլիսոփայական քարը, որի վրա հարյուրավոր տարիներ աշխատել են ալքիմիկոսները. Այդ գանձն այժմ ձերդ մեծությանն է պատկանում։

Ոգոստոսի դժգույն աչքերը փայլեցին, քիթը հափշտակիչ կերպով սրվեց հատ գեմքի վրա։ Նա ճանկեց տուփը։

— Այս բանն ալքիմիկոսից եք ձեռք բերել,—խզզուն ձայնով հարցրեց նա։

—Այժմ, յես ևս պետք է նրա փորձը կրկնեմ ձեր առաջ։ Ձերդ մեծությունը կտեսնի, թե հասարակ մդիկն ինչպես վոսկի կդառնա։

— Կտեսնենք,—ասաց Ոգոստոսը, տուփը սեղանի վրա դնելով,—իսկ այժմ գործերով զբաղվենք։

Նրանք անցան կաղնե սեղանի մոտ։ Ֆյուբստենբերգը թագավորին եր տալիս թղթերը։ Ոգոստոսը փետուրե գրիչը թաթախում եր արծաթե թանաքամանի մեջ ու արագ ստորագրում։

Սրադունչ շնիկը գորգի վրա լուռ յեր փնտռում, իսկ հետո սկսեց իր պոչը վորսալ։

Հանկարծ մի թրխկոց ու ծվոց հարկադրեցին թագավորին շուռ գալ։ Շնիկը պատռտներ եր անում գորգի վրա—ծալելով ոսկեսաղ թաթիկը։ Բարակ վոտներով սեղանն ընկած եր հատակին։ Արծաթե տուփը բացվել եր, կոտրված սրվակից կարմրաղուն հեղուկը թափվել ու գորգի վրա լճակ կազմել։

— Մեր վոգնեբմրցը,—դառնությամբ բացականչեց Ֆյուբստենբերգը։

ՀԵՏԱԶՈՒՄ

Բյուգերին չհայողվեց փախչելու Նրան նույնքան աչալուրջ հետևում եյին։ Նա սարսափով սպասում եր իշխանի վերադարձին։

«Իմ վոգնեբմրցը վարշավայում, իհարկե, վոսկի չի շինի։ Ֆաբեբայությունը բացված է, ինձ կախաղան է սպասում»,—հուսահատ կերպով մտածում եր նա։ Նրան չեյին ուրախացնում վոչ պալատական դերձակների կարած թավշե կարճ վերնազգեստները, վոչ իշխանական խոհարարի պատրաստած համով ճաշերը։ Ցերկյուղից նրա ծնկները կթոտեցին, յերբ Ֆյուբստենբերգը վերադարձավ և նրան իր մոտ կանչեց.

«Ինչե՞ս,—մտածում եր Ֆյուբստենբերգը, նայելով դողացող ալքիմիկոսին,—նա անազատ վիճակում կարողից նիհարել է։ Ցեվ իշխանն ամաչեց, վոր սրվակը վոգնեբմրցով չի կարողացել պաշտպանել անպիտան շնիկից։

— Սիբելիս,—ասաց նա, թագավորը խնդրում է մինչդամ ևս վոգնեբմրց շինել...Ձեր ինձ տված սրվակը...ը՛...կոտրվեց։

— Կատվից,— Բյոտգերը փիչ եր ձեռք ուրախությունից ցատկեր։

— Ահա նորին մեծության նավակը,— ասաց նա։

— Բյոտգերի սիրտն սկսեց թրթռալ վառարան առած։ անցավ։ Ոգոստոսը նրան գրում եր, թե ալքիմիկոսը դեռ իր գործով կարող է չտապիլ Թող «բարոն Շրադերն» աշխատի ինչպես ուզում ու նրա բոլոր ցանկությունները կկատարվեն։ Բայց քանի դեռ վոսկու գաղտնիքը թագավորի ձեռքին չե, բարոնն ազատություն չե ստանա։

Բյոտգերն ուրախ եր, վոր հարցը հետաձգվել է։

ԿԱՄԱՂԱՆԻ ՏԵՍԻԼԸ

Բյոտգերն սկսեց քանասիրությամբ ուսումնասիրել այն հանքանյութերն ու լիռնային քարերը, վոր տալիս եր նրան Պարսից Չիրնհաուզր հաճախ եր գալիս նրա հետ և միասին աշխատում եյին։

Դրեզդենյան գիտնականներն սկսել եյին յերեկոները պալատ ժողովվել «Բարոն Շրադերը» ցույց եր տալիս նրանց իր փորձերը և իր նոր գիտելիքները բաժանում եր նրանց հետ։ Շուտով բոլորը տեսան, վոր «բարոն Շրադերը» մի խելոք և ընդունակ գիտնական է և կանգնած է գիտական մեծ դյուտերի ճանապարհի վրա։ Գիտությամբ հափշտակված, Բյոտգերը նորից մոռացավ ալքիմիայի մասին։ Իսկ յերբ հիշեց, վոր թագավորը շուտով նորից վոսկի կպահանջի, նա սարսափից և նրան թվաց, թե ոզակն արդեն սեղմում է կոկորդը։ Այդ ժամանակ մոռացության տալու համար, հաճախ տոներ եր սարքում։ Յերիտասարդ թյունը լցնում եր պալատի դահլիճները։ Պնդված զույգերը պարում եյին փայլեցրած պարկետի վրա։ Ամենից ուրախը յերիտասարդ տաներեր գունդած բարոն Շրադերն եր։ Նա նորանոր զվարճություններ եր հնարում.—դիմակահանդեսներ, խաղեր, ուրախ խնջույքներ։

Յերիտասարդ ազնվական գոն Շենկին Ֆյուրտենբերգը հանձնարարեց տոներ սարքել «բարոն Շրադերի» համար։ Գոն Շենկը գժի պես դես ու դեն եր ընկնում ու կատարում «բարոնի» յուրաքանչյուր քմահաճույքը։ «Բարոնին» վոչինչ չեյին մերժում, բայց ազատություն չեյին տալիս։

Յերբեմն խնջույքի կեսին Բյոտգերը գունատվում, սառած աչքերով նայում եր հեռուն և հանկարծ հրամայում եր ծառաներին մոմերը հանգցնել, իսկ հյուրերին՝ քաշվել գնալ։

Նա փակվում եր իր սենյակում։ Յերեք մոտը մարդ եր մտնում կատաղում եր։ Ամենաանհամար բաներ նետվում եյին յերեկվա բարեկամների գլխին։

Նրան տանջում եր կախաղանի տեսիլը։

ՈԴՈՍՏՈՍԸ ՎՈՍԿԻ ՅԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Մի տարի անցաւ։ Ոդոստոսը հիշեց ալքիմիկոսին, որը խոստացել եր վոսկի շինել։

Մի ժառանգապահ գիշեր ալքիմիկոսն անհայտացավ պալատից։ Ամեն կողմ մարդիկ ուղարկեցին նրան գտնելու։ Մուլ ու փոքրիկ Ենսե քաղաքում վախճանականին բռնեցին ու պահակների հսկողությամբ յետ բերին։

Ոդոստոսը վոսկի յեր պահանջում։

Այդ ժամանակ ալքիմիկոսը դռան վարագույրի քուղն արձակեց, գցեց լարորատորիայի առաստաղի կաղնե գերանին և ծայրին ողակ շինեց «Լավ է ինքս յեռնեմ, քան թե ամեն որ մահի սպասեմ», վճռեց նա։

Նրան ողակից հանեցին և ուշքի բերին։

Ոդոստոսը վոսկի յեր պահանջում։

ԱԼԲՐԵԽՏՍԲՈՒՐԳ ԱՄՐՈՑԸ

Յերկու տարի ևս անցավ։ Այլևս վոչ թե պալատում, այլ վազեմի Ալբրեխտսբուրգ ամրոցում եր ապրում Բյոտգերը։ Վարագույրած ամուր գուռը բաժանում եր նրան վոչ աշխարհից։

Պալատի ուրախ կյանքը վերջացավ։ Նրա խցիկի մերկ պատերը կանաչ բորբոսով եյին ծածկվիլ։ Ամեն տեղ ել փորձերի համար մի փոքրիկ չուգունեն վառարան եր ծխում։

Յերիք բանվոր Ալբրեխտսբուրգի ատրճղկրյա ներքնատներում մեծ հնոցներ եյին սարքում։

Դրանցում թագավորի համար վոսկի պետք և յեփվեր։

Ոդոստոսը վոսկի յեր պահանջում։

Ազատության, պատ աշխարհի սաստիկ կարոտն ատիպեցին Բյոտգերին վոսկու գաղտնիքին կպչիլ, վորից իր ազատությունն եր կախված։ Նա անդադրին աշխատում եր, նոր բաղադրություններ եր շինում ու փորձում նրանց։ Յերբեմն նա լինքն եր հավատում հաջողությանը և Ոդոստոսին խոստանում եր, թե շուտով շատ վոսկի յե լինելու։

Բայց վոսկին չեր յերևում։ Բյոտգերն անհաջողությունից հուսահատվում եր։ Միայն իմաստուն Չիրնհաուզն եր մխիթարում ու հանգստացնում նրան։

Չիրնհաուզը համոզում եր Ոդոստոսին, վոր նա Բյոտգերից վոսկի չպահանջի, այլ թույլ տա նրան զբաղվել իսկական գիտությամբ — քիմիայով, վորն ընդհանուր վոչինչ չուներ փիլիսոփայական քարի և ուրիշ սատանայական բաների հետ։

Ոդոստոսը խփում եր Չիրնհաուզի ուսին.

— Եվ, դուք մաթեմատիկոսներ, միթե բացի պլյուսներից ու մինուսներից ուրիշ բան չեք հասկանում։ Մի խառնվեք ուրիշի գործերին։

Ոդոստոսը յերեսակայում եր, թե նա աշխարհի բոլոր մաթեմատիկոսներից ավելի խելոք է։

Ոդոստոսը վոսկի յեր պահանջում։

ՑԵՐԵՔ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐՈՎ ՊԱՐՈՆԸ

Շվեդական թագավոր Կարլոս XII ժառանգ լեհական թագը խլել Ոդոստոսից։ Նա Վարշավան վերցրեց ու իր զորքերով ներխուժեց Սաքսոնիա։

Շվեդները մոտեցան Դրեզդենին։ Մեկ անգամ սաքսոնական հեծելազորային մի վաշտ մոտեցավ անմատչելի կենդրոնային բերդին, վորի քարե աշտարակները ելքայի վրա եյին բարձրանում։ Նրանք, շվեդներից փրկելու համար, հետները բերել եյին թագավորի դանձարանը, այլև կառքով մի պարոնի՝ յերեք սպասավորներով։

Այդ պարոնին անմիջապես բանտարկեցին։ Մի սպա նրան շաքարը յերկու անգամ կես ժամով զրոսանքի յեր դուրս բերում բանտային պատնեշը։ Ամեն անգամ պարոնի դեմքն ավելի ու ավելի յեր գունատ լինում, ձեռնափայտին հենված նա ավելի ծանր եր քայլում։ Ինչպես յերևում եր, նա միշտ մրսում եր, վորովհետև յերեք սպասավորները նրա սենյակում մի ահագին վառարան եյին դրել, վորի խողովակից գիշեր-ցերեկ ծուխ եր բարձրանում։ Բայց դուքս և բոլորովին ցուրտ չեր, դուքս նա այդ վառարանում բան եր յեփում։

Շվեդներին Դրեզդենում ասացին, թե թագավորի ալքեմիկոսը փախել է Բավարիա և նրա հետքը կորել է։

Անցավ մեկ տարի։ Շվեդները հեռացան Դրեզդենից։ Կառքերով նշանավոր մարդիկ յեկան կենդրոնային խորհրդավոր պարոնի յեռեից։ Նրանք, ովքեր տեսել եյին, թե նրան ինչպես կառքի նստեցրին, հետո պատմում եյին, թե նա գունատ եր, հիվանդ ու իրեն չարչարում եր, չեր ուզում գնալ, թեպետ պարոնները նրա համար Ոդոստոս թագավորից թանգագին վոսկեկեր բաճկոն եյին վեր քերել։

ՆՈՏՈՒՍ

Դրեզդենում, ելքայի ափին, մեծ հնոցներով մի պավիլիոն եր շինվում։ Քաղաքացիք գուշակում եյին, թե այնտեղ ինչ է լինելու։

Պավիլիոն բերին «խորհրդավոր պարոնին» իր յերեք սպասավորների հետ միասին։ Նրան այժմ Նոտուս եյին անվանում։

Լուր տարածվեց, թե պավիլիոնի հնոցներում նա վոսկի պիտի յփի։

Այդպես ելեր Ոդոստոսը վոսկի չեր պահանջում, Բյոտգերն (այժմ նրան Նաուս եին անվանում) աշխատում եր ուժից վեր, բայց վոչինչ չեր դուրս գալիս։ Նա, կարծելով, թե վոսկին հեռու բարձր ջերմությունից, իր հնոցները տաքացնում եր վորքան կարող եր։ Հալոցները, վորոնց մեջ նա մետաղներ եր հալում, տրաքում կամ այդպիսի ջերմությունից հալվում եին։

Պետք եր այնպիսի ալոցներ շինել, վորոնք ամենաբարձր ջերմության դիմանային։ Բյոտգերի պահանջով դանազան կավեր եին ուղարկում և նա փորձում եր թրծել։ Պարզվեց վոր նյուրնբերգյան կարմիր կավը ամենաուժեղ կրակի յև դիմանում։ Թրծելուց հետո նա դառնում եր ամուր գրնգուն, գեղեցիկ և կարմիր գույնի։

Բյոտգ բը նյուրնբերգյան կավից շինած հալոցները ցույց տվեց Զիրնհաուզին։

— Այո, այս կավից կարելի յե կարմիր ճենապակե անոթներ պատրաստել։ Ահա ձեզ համար իսկական գործ,— բացականչեց Զիրնհաուզը։

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ

Զիրնհաուզը գնաց թագավորի մոտ և նորից սկսեց համոզել նրան Բյոտգերից վոսկի չպահանջել։ Արդեն վից տարի յե ալքիմիկոսն իր խոստումով յեփում ե, իսկ վոսկին չկա ու չկա։

— Սաքսոնական ավերված ե պատերազմից,— ասում եր Զիրնհաուզը,— բայց նրա հողում են անգին հարստություններ կան—հանքանյութեր, քարածուխ և դանազան կավեր։ Հանենք այդ բոլորը, ֆաբրիկներ և գործարաններ հիմնենք։ Սաքսոնական անտառները մեզ վառելիք կտան, լեռնային գետերը մեր ջրաղացների անիվները կպտտեցնեն։ Մենք ապակու գործարան ունենք, անոթի ֆաբրիկ ևս կառուցենք։ Մենք շատ լավ քիմիկոս ունենք։ Նա հարկավոր կավերը կգտնի, ներկեր ու ապակեներկեր կշինի։ Նա հենց հիմա էլ կարող ե կարմիր ճենապակե անոթներ պատրաստել։

«Ճենապակի» բառի վրա Ոդոստոսն ականջները սրեց։ Նա չինաստանի ճենապակի գնելու համար չափազանց շատ փողեր եր ծախսում։ Նա յեր վոր պրուսական թագավորին մի գունդ զինվոր ավեց մի քանի չինական վազերի համար։ Նա կամ ցանկանում նոր պալատը գնեց և այն լցրեց չինական թանգագին ճենապակիով։ Այդ պալատի

աշտարակում մինչև այսօր էլ կանգուն են լուսարձակ կայծյա վահերը, որոնց արժեքն Ոգոստոսն իր զինվորներով վճարեց։

«Ճենապակին վոսկուց վատ չէ,—ժտածեց Ոգոստոսը։ Ցեթե յես ճենապակու ֆաբրիկ ունենամ, Ցեվրոպայի բոլոր թագավորները նախանձից կճաքեն, իսկ վոսկին, առանց վորևե փիլիսոփայական քարի, գետի պես կհոսի իմ գանձարանը։

Նա հրամայեց ճենապակու գործարան կառուցել։

ՔԻՄԻԿՈՍ ԻՈՀԱՆՆ ԲՅՈՏԳԵՐԸ

«Բարոն Շրադերը», «յերեք սպասավորներով պարոնը» և «Նոտուսը» իրենց փիլիսոփայական քարի հետ միասին կոտը ընկան։

Նրանց փոխարեն ելրայի վրայի պավիլիոնում աշխատում էր ուրիշ, առողջացած քիմիկոս Իոհաննը Բյոտգերը։ Այժմ նրան իր խնամկան անունով էլին կանչում։ Նրա համար պավիլիոնի մոտ նույնիսկ փոքրիկ պարտեզ էլին շինել։ Նրան նույնիսկ փողոց դուրս գալ էր թույլ տրված։

Ազատ ժամանակ նա սև մարգերում վոսկեգույն հասրևյան կակաչ էր բուսցրել։

Բյոտգերն իր ուրախ ձեռքով գրել էր պավիլիոնի դռների վրա՝

Որհնում եմ յես այս տունը,
Այստեղ ալքիմիկոսը դարձավ բրուտ։

Նա ուրախ էր, վոր ազատվել էր անիծված փիլիսոփայական քարից։ Ոգոստոսն այժմ վոչ թե վոսկի, այլ ճենապակի էր պահանջում։

Բյոտգերը և Զիրնհաուզը կավերի նմուշներ էլին հալում։ Կիրահայելինգերն արևածագից մինչև արևամուտ փայլում էլին աբեգակի տակ։

Մինչև կոկորդը խրված էլին աշխատանքի մեջ։ Հարկավոր էր լավ հրավիժգկուն կավ գտնել, վորից կարելի լիներ կլոր տուփեր, կամ, ինչպես ասում էլին, կապսելներ շինել անոթների համար։ Այդ էլ գտան։

Անոթները թրծելու համար հարկավոր էր նոր հնոցներ հնարել։ Այդ հնոցները շինեցին Ալբրեխտսբուրգում։ Հարկավոր էր բանվորներին անոթները սրել սովորեցնել։ Այս գործն իր վրա վերցրեց վարպետ Զգեներբախը։

Շվարած, ընկճված Բյոտգերը հաճախ յերեք գիշեր չէր քնում։ Նրա աշնականները հնոցի մոտ կանգնած էլին նրհռում։

Նա սիրած աշխատանքից չէր կարողանում կարվել։

ԿԱՐՄԻՐ ԱՆՈԹ

Ոգոստոս թագավորն ու Ֆյուբոսանեքերզը յեկան Ալբրիխասբուրգ։ Բյոտգերը և նրա բանվորները առոթերկրյա նկուղում, ջահերի լույսի տակ, հանում էին մեծ հնոցի բացվածքը փակող կաշվե ու աղյուսները։ Սա կարմիր անոթների առաջին թրծվածքն էր։ Հնոցը վառելուն հինգ որ, հետո նա սառեց յեւ որում։

Թագավորն ուզում էր տեսնել, թե անոթն ինչպես է դուրս գալու հնոցից։ Անհամբերությունից Բյոտգերի ձեռները դողում էին։ Նա գազազած աղյուսները դես ու դեն էր գցում, հնոցի մեջ անցքին էր նայում։

— Ի՞նչ կա այնտեղ՝ կապտելներում. իսկական կարմիր անոթ, թե գուցե միայն սեւ կղմինդրներ։

Նրա թուքը ցամաքել էր։

Ահա և վերջին աղյուսը նետվեց։ Բյոտգերը վերցնում ու բացում է խորատեղորտ կապտելը։ Նրա հատակին սիրուն, կարմիր թասիկներ են։ Վառարանում վոչ մեկը չի ճաքել, վոչ մեկը չի ծռվել։ Նրանք ամուր են և զրնգուն։ Նրանցից տաքություն է բուրում վորպես կենդանի մարմնից։

Ոգոստոսն ու Ֆյուբոսանեքերզը դիտում են թ սիրը, նրանք գոհ են։

Բյոտգերը հրամայում է մի դույլ սառը ջուր բերել։ Նա հնոցի մեջտեղից հանում է դեռ բոլորովին տաք թասը և թաթախում սառը ջրի մեջ։ Իսկ յերեք թասը ճաքի... բայց նա չի ճաքում. նա նուրբ ամուր է ու զրնգուն, միայն ջրից ավելի փայլից ու ավելի գեղեցիկ։

— Իսկական ճենապակի յեւ,—ասում է Ֆյուբոսանեքերզը։

— Հա,—իր մաքուր զրնգոցով պատասխանում է թասը։

ՀԱՂԹԱՆԱԿ

Յերբ կարմիր անոթը թրծուվից դուրս յեկավ, նա փայլուն չէր, այլ փայլատ էր։ Բայց փոխարենը կարելի յեր հղկել և տաշել, վորպես թանգագին քար։ Այն ժամանակ նա կվայլիր։ Կարելի յեր նրան վոսկով ու զանազան ներկերով նախշել։ Բյոտգերը սև ապակեներկ շինեց։ Նա սիրուն սև վազեր շինեց և արծաթով նախշեց։

Գործարանը վոչ միայն թասեր, պնակներ, փարչեր ու վազեր, այլև մանրիկ ծաղկեփնջուրներ արտադրեց։

Ամենից առաջ հենց իր՝ Ոգոստոսի փոքր արձանը շինեցին։ Այդ ֆիգուրը մինչև այժմ էլ պահված է։

Ոգոստոսը կանգնած է պրահով. նրա վահանը փողփողում է, գլուխը հպարտ բետ է ձգած, հոնքերը կիտած են։ Այն պես է թվում, թե խնդրյո կպատանչի, վոր վոսկի յեվեք իր համար, թե չե ձեղ կաղաչան կուզարկի։

Կավից շինում եյին նաև ծիծաղելի մարդուկներ—միմոսներ և թզուկներ։ Նրանք ծռմռվում և այլանդակ դեմք եյին ընդունում։

Դրեզդենի պատկական տոնավաճառում հարուստ վաճառականներն ու ժանեկավոր տիկիններըը բյոտգերյան կարմիր ճենապակուց պատրաստած անոթներն ու զարդարանքները իրար ձեռքից եյին խլում։

Նրա հաչակը տարածվեց վողջ Գերմանիայում։

ՉԻՐՆՀԱՈՒԶԻ ԱՎԱՆԴԸ

Գործն առաջ եր գնում, գործարանն աշխատում եր։ Չիրնհաուզն ու Բյոտգերը միասին մտածում եյին, թե ինչպես սպիտակ ճենապակե անոթ պատրաստեն։

Անսպասելի կերպով Չիրնհաուզը հիվանդացավ ու մեռավ։ Մեռնելիս նա շշնջում եր. «Հաղթանակ, հաղթանակ», վորովհետև յուրաքանչյուր որը փոքրիկ գործարանի համար մի նոր գյուտ եր բերում։

Բյոտգերն ամեն որ շողոքուն աչքերով իր ուսուցչին նոր անոթներ եր ցույց տալիս—յերբեմն սև ապակենկերով, յերբեմն կարմիր, նոր ձևով հղկած։ Նրանք միասին մտածում եյին, թե ինչպես անեն, վոր ապակենկերի վրա ճեղքվածքներ չլինեն, ինչպես իսկական չինական ներկեր շինեն, վորոնք կրակում թրծվեն, բայց ջրում չփչանան։

Բայց Չիրնհաուզը մեռավ և աշխատանքը կանգ առավ։ Բյոտգերը փակվեց իր սենյակում և յերկար շաբաթներ դարդ եր անում։ Նա իսպառ թողեց գործարանը։ Վարպետներն առանց նրան եյին աշխատում։ Որերն ու շաբաթներն իրենց հետ վոչ մի նոր բան չեյին բերում։

«Պետք է աշխատանքը շարունակվի», գրում եր Ֆյուրստենբերգին անմխիթար քիմիկոսին, իսկ Բյոտգերն իրրև պատասխան գրում եր. «Զգիվելով բարձր ու սիրելի բարեկամիցս, չեմ կարողանում հաղթանակել վիշտս»։

Ճերբեմն Բյոտգերը մոտենում եր պատի մոտ գտնվող փոքրիկ դարակին և ձեռքն եր առնում փոքրիկ գավաթը։ Այդ գավաթը շինել եր Չիրնհաուզը ինչ վոր սպիտակ կավից և կտակել եր Բյոտգերին։ Գավաթը մութ փայլուն եր, ապակու նման, իսկ պատերը ծուռն եյին և ճխլտված։

Բյոտգերը հառաչելով, գավաթը դրեց գարակը։ Վոչ, սա նման չե չինական սպիտակ գավաթին։ Բայց յեթե Զիրնհաուզը կենդանի լիներ, յեթե նրանք առաջվա պես միասին աշխատեին, հավանորեն կլուծեյին չինական գաղտնիքը։ Նրանք այնպիսի սպիտակ կավ կգըտնեյին, վոր կրակից դուրս կգար վոչ թե պղտոր ու ճխլուված, ինչպես այդ գավաթն եր, այլ սպիտակ և ամուր։

Բյոտգերն ընկնում եր մահճակալի վրա ու աչքերը խփում։ Նա թախծում եր։

ՓՈՇԵՑԱՆՎԱԾ ԿԵՂԾԱՄԸ

Պալատական սպասավորը, վոր իր համազգեստի վրա Ոգոստոսի զինանշանն եր կրում, Բյոտգերին պալատից մի տոմս տվեց։ Թագավորն ուզում և խոսել գործարանի դիրեկտորի հետ։ Թագավորն սպասում և նրան իր առանձնասենյակում կեսորին։ Նա ցանկանում և իմանալ, թե Բյոտգերը վերջին ամսում ինչ նոր անոթ և շինել։

Վոչ մի նոր անոթ չկար։

Բյոտգերը նստած բազկաթոռում անտարբեր կերպով նայում եր պատուհանին։ Այնտեղ, Ալբրեխտսբուրգի աշտարակների վրա հնոցների ծուխն եր բարձրանում։

Պալատական վարսավիր Ֆրենցը, վեր վեր թռչելով ու յերգելով, դիմափոշի յեր ցանում Բյոտգերի բարձր ու խումճ կեղծամին, վորով քիմիկոսը պետք և ներկայանար թագավորին։

Ֆրենցը կեղծամը ճարպատում եր, վոր փոշին կպչեր։ Հետո վերցնելով փոշով լի մի աման, նրա մեջ մի կաղ խծուծ եր թաթախում ու խծուծով այդ փոշին ցանում եր խոպոպներին։

— Իսկ քաղաքում, ձերդ վողորմածություն,—շատախոսում եր վարսավիրը,—քաղաքում ասում են—մեր կարմիր անոթները լավ են, սակայն չինականից հետու յին։ Ահա, ասում են, հոլանդացի առևտրականները կհավաքվեն գարնան տոնավաճառին, հետները չինական վազեր, սկուտեղներ ու թասեր կբերեն, դարձյալ թագավորը կգնի կոմսուհի Կոզելի համար...

— Կլանա, քե վոչ, Ֆրենցլ, ակռնջա տարար քո շատախոսությունով։ Շուտ վերջացրու։ Քիմիկոսի սափրված դեմքը դայրույթից ծամռվեց։

— Իսկույն, իսկույն...—շատախոսափրիչը—Ա՛յ, միայն քունքերը փոշոտեմ։ Ցավ նա սկսեց պատմյա գալ քիմիկոսի շուրջը, ճարպիկ կերպով խոպոպները դնելով նրա քունքերին։

Բյուգլերը ցրվածությամբ մի պտղունց փոշի քերեց վերնազգեստի ծալքերից։ Նա հոգնած նայում էր պատուհանին, դուրսը դեռ ծխում էին ծխնելույզները, և ակամա սկսեց դիմափոշին տրորել բթամատի և ցուցամատի միջև։ Փոշին կլոլվում, կպչուն գնդիկ էր դառնում։

Հանկարծ քիմիկոսը ցնցվեց, հոնքերը ձգվեցին, աչքերը սուր կերպով կանգ առան սպիտակ գնդիկի վրա։

Նա այնպես արագ վեր թռավ, որ Ֆրենցելը չհարցացավ ձեռքը չետ քաշել ու մեծ կեղծամն ընկավ քիմիկոսի ձախ ականջին։

— Այս ինչվե՞ս ինձ վրա է, անբան,—գոռաց նա, բռնելով վարսավիրի ուսից։ Վե՛րադարձ ես վերցրել այս դիմափոշին։

Վարսավիրի բերանը բաց մնաց։ Նա դող լսկաց—Ես պատասխաներ, սասանվ կտոր,—գոռում էր Բյուգլերը և խեղճին այնպես թափահարեց, որ նրա ծնկները ծալվեցին և հառաչելով նստեց հատակին։

—Դե,—Բյուգլերը կարմրած ու շնչասպառ կերպով կանգնել էր նրա գլխավերը։

— Ձես կարծում եյի, հնկեկում էր վարսավիրը, թե ձերդ վողջամտությա՛ն հայտի չի... Ֆրանսիական փոշին թանգ է, սեզոնում բոլորն այս փոշին են գնում... բոլորը շ որովյան հոդ են գնում։

Շնորհովյան հոդ... բացականչեց Բյուգլերը և բռնեց փղոսոսկրյա մանր։ Նա փոշին մերթ պատուհանին էր մոտեցնում, մերթ լեզվի վրա էր փորձում և կամ տրորում էր ափում։ Հետո հանկարծ շուռ չեկավ և կեղծամը ձախ ականջին ընկած դուրս սենյակից։ Լաբորատորիայի ծանր դուռը բարձր շրխկոցով փակվեց նրա չետևից։

Ֆրենցելը դեռ նստած էր հատակին ու աչքերն էր չռել, չերը ծառան սպասկ բերեց տոնական բաճկոնը, չեռնկցուն գլխարկը և պալտոկան կարճ սուրը։ Լաբորատորիայի դուռը ծնծղալով նա ասաց։

— Ձերդ վողջամտություն, կխսը և, թագավորի մոտ ընդունելության եմ։

Պատասխան չկար։ Ծառան ուսերը թոթվեց, խորամանկ կերպով աչքով արավ Ֆրենցելին, մատով խփեց իր ճակատին, «Մեր քիմիկոսը խելագարվել է»,— վճռեցին չերկ ասը։

Ինչ բան էր այդ շնորհովյան հոդը։ Մեկ անգամ վաճառական Շնորհովը ձիով գնում է Դրեզդենից Աուե ավանը։ Մոտենալով գետի վրա է կամրջին, նա նկատեց, որ ինչ-որ եղ, ձին եղ, ապրանքաբեռն եղ ծածկված են սպիտակ փոշով, կարծես ալրոտած լինեն։ Նա չետ է նայում։ Ձիու սմբակները հոդի վրա սպիտակ հետքեր եյին թողել, իսկ մի փոքր հեռու, ճանապարհին մի սեղ ամբողջովին սպիտակ փոշով էր ծածկված, կարծես մեկն այնտեղ տասնյակ պարկ ալյուր էր թա-

փել։ Ճանապարհի կողքին մի բլրակ եր յերևում, վորին անձրևն եր վողողել. ամբողջովին սպիտակ հողն բլրակ եր։

Շնորրը ձին դարձնում և սպիտակ հողից մեկ բուռը վերցնում եւ Այդ հողը փս փռել եր, մի քիչ էլ կպչուն, վոչ ավելի, վոչ պակաս—դիմափոշի։

Հաջորդ որը Շնորրը գալիս է պարկերով։

Սպիտակ հողով լցնում ու քաղաք է տանում։ Այնտեղ հավանդում ծե ծում է և վաճառում վորպես դիմափոշի։ Ամենքն էլ հաճույքով գնում են։

Այդ փոշոտած կեղծամների ժամանակն եր, և փոշին ավելի շատ եր ազատվում, քան այժմ մեզնում առանձնափոշին։

Այս շնորրովյան հողը վոչ այլ ինչ եր, յերբ վոչ ճենակավ, վորից կենտեչենում ճենապակի եյին շինում։

Փոշու գոնդը ձեռքում պտտցնելով՝ Բյոտգերը նկատեց, վոր նա կավի պես կպչուն է և սովորական դիմափոշուց էլ ծանր։

«Յեվ հանկարծ սա այն սպիտակ կավը լի՛ի, վոր Չիրնհաուզեն եր փնտռում»—անցավ նրա մտքովը։ Նա լաբորատորիա ընկավ, վոր վորքան կարելի յե շուտ փորձի և մոռացավ, վոր խստաբարո Ոգոստոսն իր առանձնասենյակում նստած և անհամբեր կերպով մատներով վոսկե ծխատուփին խփելով, անքաղաքավարի քիմիկոսին է սպասում։

Այդ որն Ոգոստոսը նրան սպասելով անցկացրեց։

ՆԱՐԳԻԶ ԾԱՂԿԻ ՆՄԱՆ

Վեց թասեր, վեց սպիտակ ճենապակե թասեր դրած եյին Բյոտգերի առաջ, և արտացոլում եյին սեղանի փայլուն տախտակում, ինչպես հայելու մեջ։ Արևը վոսկի յեր թափում արքայական պալատի փոքր դահլիճի վարագույրների արանքից։

Վեց գիանական տղամարդ՝ բարձր կեղծամներով, ուսերին շքանշանի ժապավեններ գցած, Ոգոստոսի այդ վեց գիանական խորհրդականները կոթակնոցներն աչքերին դիտում եյին Բյոտգերի կատարած գործը։

Թասերը դիլ զրնգում եյին, յերբ մատով խփում եյին նրանց։ Նրանց հատակները դեղնագույն և հալիվ թափանցիկ եյին թվում, յերբ լույսին եյին պահում։ Նրանց փայլուն, սպիտակ արտաքինի վրա վոչ բիծ եր ճնում, վոչ ճեղքվածք, յերբ նրանց դանակ եյին քսում։

Սա իսկական ճենապակի յեր, վոր վատ չեր չինականից։

Սակի փետուրե գրիչը ճոճոցնելով՝ ժողովի դիտական քարտուղարը մի մեծ, արքայական կնիքանշան կրող թերթի վրա գրում եր լատիներեն.

«Այս թվին պարոն Իոհանն Բյոտգերը ցույց տվեց մեզ իր շինած ճենապակին—կխտաթափանցիկ, կաթնագույն, նաբգեզ ծաղկի նման։

Այո, դա իսկական սպիտակ ճնճղապակի էր։

Բյոտգերն այդ թասերը չինեց շնորհավոր հողից՝ վրան ալաբաստր ավելացնելով։ Շնորհավոր հողը փոխարինում էր սպիտակ կավին — կաոլինին, իսկ ալաբաստրը ծառայում էր վորպես դյուրահալ թափանցիկ նյութ — չինական պե-տուն-տաձի փոխարեն։

Հինավուրց գաղտնիքը բացված էր։

Ճնճղի Չիրնհաուզը տեսներ այս թասերը, վորքան կուրախանար այս նոր հաղթությունով։ Ինչ շոյիչ ժպիտով կլուսավորվեր նրա խիստ դեմքը։ Ո՛, Չիրնհաուզը կգներ Բյոտգերին նվիրներ չինելու, վորպեսզի նախշվին այս սպիտակ ճնճղապակի թասերը։ Նա կգտներ այդ թասերից մեկի վրա սև կեռիկ-ճիվաղը պատճառը։ Բայց Չիրնհաուզը վաղուց արդեն գիրեզմանում էր։

Բյոտգերն անց ու դարձ էր անում դալիճում, մինչև վոր պալատական գիտնական աններն ընդհատվ նրա թասերի վրա և իրենց նախանձը թագցնելով, շնորհավորեցին նրան՝ արքայական վողորմածության ու պայգեներ դուշակելով։

Թագավորը Թագավորը խնդիր էր նրա ազատությունը, Թագավորը վեց տարի նրան բանտարկյալ պահել՝ անվիճ աշխատանքի — վոսկի չկիսելու համար։ Թագավորը քանիցս այդ մասին նրան կախտաղանով սպառնացել էր, բայց պետք էր սպասել Թագավորից։

Բյոտգերն զգաց, թե վորքան և հոգնել ինքը, հոգնել մանավանդ աստիճանից։ Հիմա ելթագավորը ընդամենը չի ազատի իրեն, վախենալով, վոր ճնճղապակու հնարքն իր գաղտնիքը կվաճառի ուրիշ Թագավորների, վորոնք նույնպես ճնճղապակու գործարաններ կկառուցեն իրենց չերկրում։

Ազատություն չի լինի. այս անիծված շրջանակից չկա Թաղեմից գյուղացարի կոկորդը։

Նա շուռ եկավ և գլխարկն աչքերին քաշելով, պալատից դուրս գնաց։

Ե Ա. Դ

Առանց վոչ վոքի վրա նայելու, Բյոտգերը փողոցներով գնում էր դեպի քաղաքի ծայրամասը, այնտեղ, ուր սի ծուռ ընթանցքում գինետուն էր բացվել։

Տեր, վոր սի հաստլիկ հարբեցող էր գոռի դեմքով, Բյոտգերին դիմավորեց վորպես վաղնսի ծանոթին։ Միահյանի Թղթամոլը՝ տասսես ծակ կոֆտանով, թևերին կեղտոտ ժանյակ, յոթանասնամյա խաղաթղթերը գյում էր գարեջրի լճակներով և ուտելիքի մնացորդներով լիքը սեղանի վրա։

Պատահականների արորված վարազուրները ցեկեկվա լույսը ներ-

չեյին թողնում։ Այստեղ գյուտարարը թուղթ էր խաղում խաբեբա աղաների հետ և բաժակ բաժակի չտեսնից գինի էր խմում։

Հոգ չեր, որ միաչքանի թղթածուլի գրպանն էլին անցնում այն վոսկեդրամները, որ տրված էին քիմիկոսին՝ գործարանում նոր հնոցներ կառուցելու և գործարանի բանվորներին աշխատավարձ տալու համար։

Գյուտարարն ուզում էր հարբած ուրախությամբ ինքնամոռացության մեջ ընկնել մոլեգին խոզոլ Թող այլևս չհիշի, որ իր ջահելությունը անցավ անիծված փիլիսոփայական քարի վրա, որ նա թագավորի սարսուռն և մինչև իր մահը։

Մոռացության մեջ ընկնել—դա ամենից գլխավորն էր։ Իսկ թագավորը Թող թագավորը վճարի իրենից խլած ջահելության փոխարեն, գրողը տանի։

Ցավ բյուգերը վոսկեդրամ վոսկեդրամի չհաշից էր թղթի տակ դնում։ Ցերեկյան գեմ գուռը բացվեց, յերեսց շատգնված յերկինքը Նորամանկ աչքակով մի ցածլիկ մարդ ներս մտավ և նստեց Բյուգերի չհաշի սեղանի մոտ Նրա շշլատակի հայացքն ստիպեց քիմիկոսին չհա նայել։

Բյուգերը մհանգամից դատարկեց բաժակը և բռունցքով խփեց սեղանին։

—Ա՜, լրտես ես, Նորին մեծության լրտեսը... Նզովված շունն արդեն հոտ առել և ձեռ... ասաց նա,—փրփրած բերնով և ծանր գլուխը գցեց սեղանի վրա։

Թագավորի լրտեսները հետևում էլին նրա յուրաքանչյուր քայլին։

ԲԱՆՏ ԿԱՄ ԴՈՐԾԱՐԱՆ

Ալբրեխտսբուրգ ամրոցը շրջապատված էր խոր խանդակով։ Վեր բարձրացող կամուրջը, յերկաթե շղթաները ճոճացնելով իջնում էր խանդակի վրա միայն նրանց համար, ովքեր գիտեին պայմանական նշանը կամ գաղտնի բառը։

Ուրիշ վոչ վոք, մանուկ սպառնալիքի տակ, չեր կարող ամրոցը սողոսկել։ Այստեղ գաղտնի աշխատանք էր կատարվում—ճննապակի յեր շինվում։

Ցերբ նոր վարպետ կամ բանվոր էր մտնում գործարան, նրա աչքերը կապում և յերկար ժամանակ մեն էլին ածում քարի միջանցքներով, վորտեղից բորբոսնոտ էր փչում։ Հետո աչքերից ալծակում էլին կապը։

Նա տեսնում էր իրեն մեծ ստորերկրյա դահլիճում՝ քարե կամարներով։ Մամռակալած պատերը լուսավորված էին ջահերի կարմրագույն լուսով։ Անկյուններում խավարն էր իշխում։

Ցերեկը սեղանների շուրջը նստած էին անծանոթ մարդիկ՝ դիմակներով և սև թղամբիններով։ Սեղանի աջ կողմում կանգնած էր գունատ ու խժռոտադեմ քահանան, ձեռքում բարձր պահած խաչը։ Ձախ կողմում կախված էին կապաքներ, յեղնում էր տանջարանը, իսկ դահիճը փայլուն կացինը խրել էր իր գոտու մեջ։ Ժեշտեղում բարձրության վրա սև դագաղ էր դրված՝ վրան սպիտակ ներկով նկարած իրար խաչաձևող վոսկորներ և գանգ։

— Ցերգվեմ ես արդյոք, վոր ճնշապակու գաղտնիքը վոչ-վոքի չես ասի,— հարցնում էր սեղանի յեռևից բալձրացող սև մարդը, սարսափելի ձայնով։

— Ցերգվում եմ,— պատասխանում էր վարպետը, վորի ծնկները դողում էին ու մեջքը սրսռում էր այս բոլոր սատանայական բաներից։

— Կրկնիր ինձ հետ,— ասում էր մարդը յերգվում եմ, վոր ճնշապակու գաղտնիքը յես վոչ-վոքի չեմ հայտնի— վոչ հորս, վոչ վորդուս, վոչ յեղբորս, վոչ կնոջս, վոչ բարեկամիս, վոչ թշնամուս՝ վոչ փաղաքշանքով, վոչ փողով, վոչ էլ կյանքս ազատելու համար։ Ցես այդ գաղտնիքը չեմ հայտնի վոչ քահանային՝ խոստովանելիս, վոչ բժշկին՝ իմ ժամանակ անկողնում։

Վարպետն այս բոլորը կրկնում էր խոսք խոսքի յետևից, թեպետ սարսափից նրա լեզուն փաթ էր ընկնում։

— Ցերգվիր խաչելության վրա,— մետաղե սառը խաչը նրա շուրթերին սեղմելով, ասում էր քահանան։

Այդ ժամանակ սև մարդը դառնում էր դեպի մյուսները, վորոնք արձանի պես անշարժ նստած էին լինում։

— Դուք լսեցիք, յեղբայրներ, թե ինչպես յերդվեց այս մարդը։ Ի՞նչ կապատի նրան, յեթե խախտի իր յերդումը։

— Մահ, գոչում էին «յեղբայրները» և վոտքի յելնելով, բոլորը մեկի պես բռնում էին փայլուն դաշույնները ու ոդում ճոճելով, գոռում էին մահ...

— Մահ, գոռում էր դահիճը՝ կացինը ճոճելով։

Հետո նրանք ընկնում էին ահից կիսամեռ վարպետի վրա և բռնելով նրան՝ վորը վոտից, վորը ձեռքից, պառկեցնում էին դագաղում։ Դագաղում պառկած, վարպետը յերեք անգամ կրկնում էր յերդման խոսքերը, իսկ «յեղբայրները» յերեք անգամ դաշույնները ճոճում և աղաղակում էին— «մահ»։

Սկսում էր մթնել։ Մեկը վարպետի աչքերին ծածկոց էր գցում, քարշ էր տալիս դագաղից դուրս և կրկին մեջանչքներով դեպի թաղման ոդ էր տանում։

Ծերը կապն արձակում էին, ցերեկվա լուրը նրա աչքերը ծակծկում էր, ականջումդեռ հնչում էին համհարը և դաշույնների սարսափելի զրնգոցները։ Խելքը կորցրած նա մտնում էր արհեստանոց և միանգամից չէր հասկանում, թե ինչ էր ասում ավագ վարպետը։

Իսկ արհեստանոցներն այ՜սպես էին շինված, որ մի արհեստանոցի բանվորները չգիտեին, ինչ և կատարվում հարևան արհեստանոցներում, և յուրքիք չէին տեսնում մյուս բանվորների հետ։

Նա, ով լվանում էր կավը, գաղափար չուներ, թե այդ կավից ճենապակի ստանալու համար ինչ են ավելացնում։

Ա՛ռատները, վորոնք զանգվածից անոթներ էին շինում, չգիտեյին, թե այդ զանգվածն ինչից և բաղկացած և անոթներն ինչպես են թրծում վառարաններում։ Միայն յուրքիք մարդ–բյուրգերը և նրա ոգնականները՝ դոքտոր Բարդուղիմեոսը և Շեֆյնբերյուկը գիտեյին, ինչ վոր կատարվում էր գործարանում։

Այս բոլորն արվում էր, վորպեսզի գաղտնի պահվի ճենապակու գաղտնիքը, վոր վոչ-վոքից, Ոգոստոսից բացի, չկարողանա ճենապակու գործարան բանալ։

ԳԱՂԹԱԿՂԻՃՆԵՐԸ

Այն որից, յերբ Ալբրեխտսբուրգի գործարանն սկսեց սպիտակ անոթ արտադրել, նույնքան ժամը ու գիպեցիկ, վորքան չինականը, այն որից, յերբ բյուրգերը գտավ կապույտ կոբալտե ներկը, վորով կարելի յեր գրել թասերի վրա, այն որից, յերբ նա վարպետներին սովորեցրեց սկուտեղներ ու թասեր շինել՝ ժանեկավոր յեզրերով, այլև քանդակած ֆիգուրներ,—Ոգոստոսն սկսեց իր ճենապակե ժամանակ ուտել ու խմել, հպարտությունից իր սուր քիթն ավելի վեր ցցեց հատ դեմքի վրա, իսկ մյուս բոլոր թագավորներն ու իշխանները ժպիտ յերազում էին, թե ինչպես իմանան ճենապակու գաղտնիքը և իրենց գործարանները շինեն։

Նրանց լրտեսները, հագուստները փոխած՝ յերբեմն վորպես թափառական առևտրականներ՝ բեռը շալակներին, յերբեմն վորպես մուրացկան, յերբեմն վ րպես աշխատանք վորոնող վառարանագործներ շրջանակ վխտում էին Ալբրեխտսբուրգի շուրջը և շրջելով—ինչպես կատուն մուկ շուրջը, հետևում էին հին աշտարակների գլխին կանգնած ծխի քուլաներին։

Նրանք հսկում էին բանվորներին, տոներին ամրոցից դուրս գալիս նրանց հյուրասիրում էին լավ գարեջրով և աշխատում էին իմանալ, թե ինչ և կատարվում գործարանում։ Առանձնապես աշխատում էին վորսալ «արվեստանոցներին»։ Այդպես էին կոչվում այն

արհեստանոցի բանվորները, վորտեղ ճենապակու զանգվածն էր պատրաստվում։

«Արկանիստաներից» մեկին իտալացի լրտեսները հարբեցրին քնաբեր խոտով, կաւիճ նստեցրին ու տարան։ Նա ուշքի չեկավ մինչեն իտալական սահմանն անցած։ Նրան փող տվին և հրամայեցին Միլանում ճենապակու գործարան հիմնել, բայց դրանից բան դուրս չեկավ, վորովհետև «արկանիստը» ճենապակու գաղտնիքը չգիտեր։

Բանվորներից վոմանք էլ հոգնած իրենց բանտ-գործարանից, դեմ չեյին Ալբրեխտսբուրգից փախչելուն։ Նրանք լրտեսներին խոստանում եյին ճենապակու գաղտնիքը բանալ՝ յեթե իրենց փող և ազատություն տան։

Նրանք փախան ամրոցից, հետները տանելով ճենապակու զանգվածից այնքան, վորքան կարողացան խուզնել գործարանից՝ կատաղի պահապանների աչքից ծածուկ։

Ընկնելով իշխանի կամ յեպիսկոպոսի պալատը (ինչպես պատահեց Բիոլինում, Ֆուլդում և Բրանդենբուրգում), բանվորն իր գողացած զանգվածից միքանի պնակ ու թաս շինեց։ Նրա հովանավորն սկսեց ամեն տեղ հայտարարել, պարծենալ իր «սեփական» ճենապակու գործարանով, վորն իր յուտում է թողնելու Ոգոստոս Թագավորի սաքսոնական գործարանը։ Այս լուրերը Սաքսոնիա հասան։

Սաստիկ դայրացած Ոգոստոսն իր մոտ կանչեց Բյոտգերին և սկսեց գոռգոռալ, թե ամեն ինչ կորած է, գաղտնիքը փախցրել են հենց նրա քթի տակից։ Այլևս վոչ-վոք չի գնի սաքսոնական անոթը։ Ո՞ւր է Բյոտգերի խոստացած հռչակն ու փողը։

Բյոտգերը հոգնած կնճռոտում էր։

— Նրանք մեր գաղտնիքը չգիտեն, Թագավոր։ Նրանք վոչինչ չեն կարող անել, պատասխանում էր նա։ Այդպես էլ յեղավ։

Փախած բանվորը զողացած զանգվածից մի քանի թաս շինեց, իսկ յերբ նրա պաշարը վերջացավ, այլևս չգիտեր ինչ անել,—ինքը զանգված պատրաստել չգիտեր։ Շուտով նրան վռնդեցին։

Սակայն Ոգոստոսը հրաժարից ավելի խիստ հետևել բանվորներին։ Զանգվածի վոչ մի պատառ չպետք է դուրս գար Ալբրեխտսբուրգի դռներից։ Բանվորներին մարակներով ծեծում ու նկուղներն էյին գցում, յեթե նրանց զրպաններում զանգվածի թեկուզ մի փոքրիկ կտոր եյին գտնում, յեթե կասկածում էյին թե նրանք փախչել են ուզում։

Գործարանի կարգերն ավելի դաժան դարձան։

Բյոտգերը հոգնած, կնճռոտում էր։ Նա հասկանում էր, վոր բանվորներն ազատվել են ուզում գործարան-բանտից։ Նա ինքն ուրախ կլիներ Ոգոստոսի մոտից փախչել թեկուզ աշխարհի ծայրը։

Բյոտգերն այլևս նման չէր ծակ թիկնոցավոր ուրախ ուսանողին, որ մի ժամանակ ծեր Կիրխմայերի դուռն էր բաղխում։ Նրա դիմքը թոռոմել էր։ Աչքերի տակ գորշ տոպրակներ էին կախվել։ Ալքիմիկոսի՝ ոջախի շուրջն անցրած գիշերներից, ծխումից ուժից ձխում, կոնծաբանությունով անքուն գիշերներ անցնելուց նրա կոպերը կարմրել ու բորբոքվել էին։ Ցերեկվա լույսից աչքերն արտասվալից կկզցվում էին. գանգուր մազերի փոխարեն ճաղատ գլխին բարձր հեղձամ էր դրել։

Բացառիկ լավ որերում, յերբ նա նոր գանգված էր շինում կամ նոր հնոցների պլան էր գծում, նրա հայացքը գտնում էր սուր, ճարպիկ ձեռքերն անսխալ կերպով կշռում էին հարկավոր քանակի կավ ու ալաբաստր, քայլերը ջահելի քայլերի պես թեթև ձայն էին հանում Ալբրեխտսբուրգի ատորերկրյա անցքերում։ Բայց այդ հազիվ էր պատահում։ Մնացած ժամանակը նա գտնում էր տաղտուկ, մռայլ մարդ։ Նա հանկարծ վայրենաբար կատաղում էր, յեթե իր ոդնականները գործի մեջ սխալվում էին։ Մնացած ժամանակը նրա գողդոջուն մատները թղթախաղի սեղանի վրա փռում էին Ոգոստոսի վոսկեդրամները և դաստարկում էին գինով լի բաժակները։

Նա իր համար փարթամ քնակարան էր սարքել, պատերին ֆլամանական պաստառներ էր կպցրել, հատակը բրդոտ գորգերով էր ծածկել։ Նա իր համար վոսկեթել բաճկոն էր պատվիրել, վորի թևքերը բելգիական ամենալավ ժանյակից էին։ Բյոտգերն շատապում էր ապրել, անցած ջահելության տուրը հանել։

Փող ծախսելու մեջ նրան ոգնում էր յերիտասարդ ակնագործ Կոնրադ Գունդերը։ Նա Բյոտգերի համար բերում էր վոսկե ծխատուփեր, ժամանիկներ և ուրիշ չխչխկան բաներ ու գայթակղեցնում էր գնելու։

Ցերը Բյոտգերը խաղընկեր չէր ունենում, Կոնրադ Գունդերը հաճույքով էր թղթասեղան նստում։ Կոնրադ Գունդերը միշտ պարտատեր էր կոնծաբանությունն սարքելու։ Կոնրադ Գունդերը միշտ կարողանում էր խաբեբայել առևտրականներին, յերբ նրանք Բյոտգերի մոտ էին գալիս իրենց պարտքը պահանջելու։ Նա Բյոտգերի գործերով ավելի յեր զբաղվում քան իր վոսկերչական արհեստով։

Մեկ անգամ Կոնրադ Գունդերը Բյոտգերի տունը բերեց մի յեկ-

ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Չինկանաչների կրկեսի լուսե կերպչի պիշերն արքայական գործարանի գիրեկտոր Իսահանն Բյուտներն առաջ ամեն քաղաքացի և յուղ-Իսահանն Բյուտներն ամեն գումար և ստրկել իրեն կամա Բուբատոներին անվանագ մի խոսքություն Չինկանաների կրկեսին, առավոտյան ամեն ուրիշ Իսահանն Բյուտներն գործարանի և չկիսել տանիցը։ Ամա, ինչպես առավոտ-քար երբ անում, հասնում էր նրանց Հանդեսի Հին պարտեզ, նա մտավ Անկատարների կրկեսին, ուր ամեն առավոտ նրան տանիցան իրեն կամա անվանագ խոսքերի Բուբատոներին և մի ուրիշ խոսքերի վրան իրեն կամա գործատարը եր անհամոնում Բաշկիով կամարներով քաղաքացի անկյանը, նրանք սկսեցին պրոցեսիր Իսահանի խոսքերից չեն հասկացա, որ խոսքերը առաջ-գնում էին Բյուտներին փոխել Սաքանիչից և վաճառել ճանապարհը 100 հազար տալերով, խոսքանալով վճարել պարտքերը Գրիգորեանում և մնի քաղաքացի անձի վարձատրությունը։ Նրանք Իսահանն Բյուտներին մի հասկացա, որը կարգալով, նա տատանքերի մեջ բնկավ և խոսացավ այս գիշեր պատասխանել։ Ճանկերն էլ պայման վրա վճարին գիշերը հանգիստել քաղաքի վրա և նրբվիցին Իսահանն Բյուտները ազնվությից գնալ Ալբրիխոսարար, իսկ խոսքերը՝ պատգամ, որ նրանք ապրում էին։

«Ես հանանցի Իսահանն Բյուտներին և պահանջին ցույց տալով նորին մեծության անցագրերը, ձոս գործարան Իսահանն Բյուտները գործարան հասանելով, հանձնց իր քաղաքը, հարցավ քաղաքացին հարցաքննել և ստացավ տրհատանոցներ։ Այդ քաղաքն ինձ հնարավորություն տվեց նրա քաղաքի գրպանից հանել խոսքերիցից ստացած հասկանը և նրկարացնել ձերը մեծությունը...»

Պատասխանելով լուսանի գիտությունը և ձեռքն ստավ կցված հասկը, որի վրա կար պրոտոկոլի կնիքը և խոշոր «Ֆրիդրիխսհալ ստորագրությունը։

— Բանկ այդ գործերան և կանչը Բայց վազ սկզբում գնա ցույց վրա հանկի Ահա քո գրանի և գործատանությունը — հնձց գործատանի տրտուր Բյուտները ստանչ և ուխտագրում։ Ահա երբ գնորհակալություն նրա հանդիպ մեր ստանալու սիրտ փոխարին, — պատգ ուզում Բյուտաններգրի կրկեսին և գնաց գնացին խանչ դեպ, գրա քաղցր պաշտպանում եր։ Ձեռ վազուց նրան կամաց հանած կլինանչ,

այդ շատ ուրախ էր, իսկ դուք ասում եք՝ «Ախ, նա մեռ իրեն կարպատացնի»։ Ահա, իրեն արդարացնել ձեզ ուղղակի քննիչ է։

Պետատը ջանում էր զսպել իր տրտունջը։

— Բավական չեր, որ Քոզեցինը նրան ամեն տեղ փոշտացնում, բավական չեր, որ վճռում էր նրա պարտքերը, բավական չեր, որ ստիպում էր իր տպրում, որ չես ուզում որ նրան քարիքներով էլ ես ուտում. այս քաղքը նրա համար վաշխել էլ է։ Նա ինձ այդ պրուսականների մեջը կասկածում, որոնց մեջից չես ուզում որ նրա կյանքն ապահովեմ։ Ես իմ ծոցում ոձ եմ սնուցել։

Պետատն իր զայրույթից հոգնեց և պատրաստ էր ատամները քսկռտալ։ Ծերուկ Բյուտներն շտապեց նրան հիշեց այն լուրերը, այդ տատանումի տարի առաջ եղ, երբ չեխական ուսանողը հինգկալով խնդրում էր իրեն ապահ քաղել—ամուսնալու համար և չէր ուզում էր, քև իշեր գոհար պատմիչքը չգիտեր Ծերուկ Ծերուկներին հետաքրքիր չեր, քև Պետատը նրան բացատրեց և պատմեց։

— Բայց, ձերդ մեծություն, ասաց նա վերջապես, չե՞ որ մենք չգիտենք, քև Բյուտներն ինչ կապ ունեն պրուսական քաղաքների գործակատարների հետ։ Գուցե նա դեռ կվերադարձի։ Պատանեք մինչև գնչեր

— Ինչպե՞ս,—գոռաց Պետատը,—մենք պետք է սպասենք, որ այստեղ նա զանգվածի բռտպրուսականությը հանձնի նրանց։ Թիվ չե, ինչ ես նրան խնդրեց ձերբակալել և բանտ գնել էր։

Ծերուկները գլուխը կախեցին, գուցե չեկավ անդամին։

ԴԱՐՁ ԲԱՆ Ե

Մերը Բյուտներին ներս տարան բանտասենյակը և կողպեքը նրա յետևից շրխկաց, նա գոռաց կնկտով ձեռքով—«նոր չեմ սպասելու։ Վանդակավոր պատուհանը և բորբոսածածկ պատերը հիշեցրին նրան Ալբրեխտսբուրգի խուցը, որտեղ բնքը վտակի չեր կիսվում։ Այստեղ միայն մուրճերի համար չուզվանեն նեղ չկար, մեկ ել որ այդի իր ձեռքերին չգիտանեին գլխին պրծցում։ Բայց փոխարենն Պետատն այդի չե պահանջի վեր վտակի, վեր ձեռնապակին հագցնի կամ հանգստանալու։ Հին ծանոթի կտրտացանն այս անգամ ուզատ չեր քաղնի իրենն։ Նա ամբողջ կյանքում իր յետևից ել չեկեր։ Բյուտներն նրանից վախենալ սկսեց։

Իրենց խուցերի անմաղով պրուսական քաղաքների գործակատարները բանտարկվածներին նայում էին ուշադրությամբ, քև իբր Բյուտներն

համաձայնել և ձենապակու գազանքն իրենց հանձնել։ Այժմ նա կախազանից չի ազատվի։ Փախուստը կարելի չի հաղթահարել։

Նրա սիրտը թշշում էր, գլուխն ուզում էր ծանրացել ու Պահակը մի գավաթ ջուր և մի կտոր հաց բնության պատիժը դարձյալ չրխկաց։

Հագիվ վտանգը քաշել տարվ, Բյուտիքը հեռացավ պատուհանից և բնակվ փայտե մահճակալի վրա։ Քնկին պատերը պատրա էին պահ նրա առաջ, սոխակած էր աչքերը փակել։

Նա աշխատում էր հիշել, թե ինչ էր մտածում, երբ գաղտի ձայնը հիշեցրեց նրան մի բան։ Նա մի լավ բանի մասին էր մտածում։ Այո, նա քաղցրահամ պարզապես չէր մտածում։

Վերջապես ուրախ էր ոտնակռանում։ Ցնծագին ներփակ տակ կարոտանին էր պատմում իշխանները նատած ապրատակ կարապի վրա և փախից ու հետապնդիչից շունչը պահած, ահռելի պատում էր նրա հետ միասին սպասում էին գազանգույն պրոցկներ և վտակեղջյուր լաքեր։

Գաղտանկը կանգ էր առել, իսկ նրան դեռ քվում էր, թե իր շուրջն ամեն բան լողում և փայլում փոքրիկ ալիք՝ մոգական նվագի տակ։

Գաբշնի և նրի ինչ-որ քաղաքներ գաղտ հատավ բանված կրպակի մոտ մայր Ծիմանը իշխաններին համար քաղցրահամ պարզապես էր պահել, որի աչքերի փոխարեն ան չամչահատներ էին։ Հետո նրանք մտան քանակի և մայրիկի համար կապույտ շալ ընտրեցին՝ կաքավիկը վարգերում։ Վաճառականը հարցրել էր շատ ապրանք, որ պետք տալով հանձներ մայրին, երբ հանկարծ Բյուտիքը հիշեց, որ դա վիշ քիմ առևտրականն էր, այլ պեղապարի Ծորնը։

Բյուտիքն իր առջև պարզ տեսնում էր պեղապարին՝ ան պլխաթև գազանքին։ Նա իշխաններին տարել էր քրանական ալյուրը պեղահատեր պլորեր։

— Ձգույշ քոնքը, ազատ կրկու մտոնները,— լսում էր Բյուտիքը պեղապարի ծանրի ձայնը։ Վերջում և պնդիկը պլորիր։ Այ ապահա — մեկ, կրկնում։

Պեղապարի մատնիչից կլոր պնդակ գույր պլորիից, իշխանն էլ ուզից պեղահատեր ապատորել, բայց հիշեց, որ իր ձեռներն ազատ չեն։ Նա բռնած ուներ վարդագույն ձի և պեղահատեր չէիրն տատցվում։ Ասենք՝ պրանը վիշ քիմ պեղահատեր էիրն, այլ չնորհակալ հող էր, որ նա ժողովել էր պատերազմական ծալքերից։

Ահա քե ով էր ձենապակու իսկական հնարագետ — պեղապարի Ծորնը։ Ջե որ նա կրկ, որ մի ժամանակ ամրոցցից իշխաններին պեղահատեր կլորացնել։ Առանց նրան իշխանները չեր կարող պեղակներ

չինել շնորհվյան հոգին։ չեր գոնի սպիտակ կավը։ Մեծապես չե, վոր այդ բանն առաջ իր միտքը չի բերել։ Ուշանալը բարձր Մեծապես։

Հետո նրան թվաց, թե ինքը միևնույնպես կոպիտով մեծ գազ և չինում։ Վազը վոխարկվեց, գարձավ Ոզոտոսի գլուխը, և այնպես գեղեց կնկավ, վոր իրր թե Ուշանալը բռնել և քաղաքների ականներից։

— Ժամանակ և կարեցպան հանելու, ասաց Ոզոտոսը և վոխարկվեց, գարձավ վոսկիկի քաղաքում։ Նա կանչեց իր վոսկիկի պինվոլներին, վորոնք Ուշանալին ձեռնվալով ինչ-վոր տեղ տարան։

Հանկարծ գռեզը բացվեց և ներս մտավ Ջիրնհատուզը։ Քղքաքախտակները շատ անգամ շաչելով Ջիրնհատուզը նատեց Ուշանալի մահճակալին ու նրա ձեռքը բռնեց։ Այդ ժամանակ նա իրեն հանգիստ ու լավ զգաց։ Ջիրնհատուզն ամեն բան գիտեր և ամեն ինչ ներեց Ուշանալին։ Այժմ ապրանքներ չեր։ Կարելի չեր Ջիրնհատուզին հարցնել, թե ինչու ճննապակու վրա չերբեմն ան բծեր են լինում։

Առավոտը պատահաբար խաղիկ մտավ։ Հացն ու ջուրն անձնուեր խնամքի ներքո Ուշանալը բարձրացավ գահավորից, գիմազգեց, բայց նր լինում ու շարչարվում նր մահճակալի վրա։

—Նա կնրմուամ է,— ասաց Ձյուրատանների ուղարկած փոքր քժիշկը։

Շատ գներներ ու պիշներ անցան այսպես. Ուշանալը մեռավ, անգոտաստան նա ընդմիշտ ազատվեց կախազանից։

Իսկ գործարանը շարունակում նր աշխատել և արտադրել գեղեցիկ ճննապակի, վորը Ճվրատպի բոլոր քաղաքներին նախանձ նր շարժում։

վոր խոպոպի խոպոպով կռվին։ Երանք քիթ-քիթի սկսեցին, ոտքի կնգած ազամանդներով պարպարված յերկար մատները քիթ-քիթին սկսան վրա տալին գրաքնելն սյուներներ շատ երկն անդից տեղ չարժել։ Վատ կին Բյուտերի գրպանից կոժախ քաղին եր անցնում։ Մատը անց վոչ դիշերը։

Բյուտերի գործը չեր հաշտվում։ Սկզբում նա ատում եր փոդերը, հետո եկ գործատանի բանվորներին հատանելիք փոդերը, ատում նայել ձյուտանոթներից նվիր ստացած քանգարդին մատանին։ Նա ուզեց քողնել խազը։

— Մի վրդովվիր, պարոն Բյուտեր,—քաղաքավարի կերպով ասում եր խոպոպի կոժախը,—ապրիսի գատարկ բանի համար չարժե խազը քողնել։ Ազատնք՝ խոսքի հավատալով։ Հետո կհաշվինք։

Բյուտերին ուզում եր ատրվածը յետ բերել, սկսեց խոպոպ խոսքով։ Շատ ասաց նա այնքան ատրվեց, վոր պարտքը նաչնիակ յերեք ատրում չեր կարող վճարել։

Մտածեր հիմիկով վատում եր ինչ ֆահերում, նրանց ծխացող պատրուդներն չմոքրած ատրում եր բռնել Բյուտերը սկսեց վեր կացավ ու պատուհանին մոտեցավ։ Մանր վարպետների յետևում յերկինքն եր շատացնում։ Տարված գումարը հակյակառն եր Բաղամերը չի համաձայնի վճարել խոպոպի կոմար կխոյտառակի Բյուտերին։ Ով պատվի պարտք եր, ազնիվ խոսքով կատարված խազ։

Ատր վիշտը նորից պաշարեց Բոհանեին։ Ցավը չկար։

— Ձակատ և տխրել, հարգելի առնական, չգիտեք և տխրել,—յամեց մի բարակ ձայն քիկուռնքի կողմից։—Ախն ժարդը, վորի ձեռքումն և ձեռ պատնիքը, չգիտեք և տխրի։ Դեպի հարստություն ու փառք տա նոր բոլոր պռնիքը նրա առաջ բաց են։

Բյուտերը դնդմից ու չուտ յերկավ։ Շեկ կնգամամոր մի փոքրիկ մարդ, վոր ատրվող գիշերը լոխ ու մուզիկ չեր խոպոպել, կանդնած եր նրա առաջ և իր աչ ու հատուտ աչքերի հայացքով չափվում եր նրան։

«Սա ով է,—անցավ Բյուտերի գլխովն—Ախ, սա գրաֆի քարտուղարն է»։

Խակ քարտուղարը նրանից աչք չեր հեռացնում և բարձր ու կնգած ձայնով յեղրակացնում եր.

— Ի՞նչ բան և խղճուկ գումար ատրվելը նրա համար, վորը ձեռ պատնիքի տերն ու Հարստություններն ու փառքը նրա ձեռքումն են։

— Ի՞նչ եք ուզում ասել,—վրա բռնվավ Բյուտերը։

Շեկ մարդու գնդքը կնճռոտվեց։

— Վատր պատրաստի ժամանակ չկնիք հին հրապարակում գոնը վոչ Ցեկատերինայի յինգհոցին,—արագ շշնջաց նա ու հեռացավ։

Քնատ կոտը վոսկի պրսաձիերը պրպաներ եր կոխտաժ Հյուրերը ցրվեցին, մխալ Գուռգենը եր անկյուռում բազմոցի վրա քնել՝ հիմարի պես քնրանը բաց արած։

Մոմերը մինչև վերջը վառվել էին, սեղանի վրա խազաքիքերն էին քաշված և բաժակներն էին՝ գինու մնացորդի Բյուրերը կատցած, վոր գորգի վրա ընկած խազաքուդիքը բարձրացներ։ Բա փոսիկի քաջալորն եր՝ Ազատուհին նամառ Բյուրերը սեղանի տակ գցից այներ։

Առավոտվա կիսալուսյար պատուհաններից ներս եր քափանցած Բյուրերը միքանի քայլ արավ անկյակուտ, հանկարծ սիրին սպատի կոզմից ներա առաջը գուրս կիկավ մի վոչ ջահել չազմարդ՝ պիսակի բանկոնով։ Կիսախավարում ներա պեմքը քոտամած ու գորշ եր քվում։ Բյուրերը կանգ առավ, նա՝ նույնպես։

— Ա՛, սա չի վոր իմ անդրադարձումն է հայելում,—լսեվ ձայնով ասաց Բյուրերը և ուզից մի լավ ծիծաղել իր սխալի վրա։ Բայց ծիծաղը չեկավ։ Ներա յերկնամանակի աչքերը քախծոտ էին։ Քիթից գնացի քնրանի անկյունները խոր ծալքեր էին գնում։ Նա ևս անկյակից գուրս կիկավ, ուր պատերից կախված էին պատատանդ և վոսկեզոծ հասույքը եր փայլում, վորի արժանը նույնպես վճորված չեր վաճառականներին։ Ներա վրա ևս նույնպիսի քանդագին բանկոն եր։

— Այ քեզ բռնված գործանել կես,—ասաց Բյուրերն ու նստեց հայելու մոտի բազկաթոռին։ Անցած վոչչ հյանքը պատկերացավ ներա առաջ։

Ո՞ւր են այժմ ներա ծայրը, մայրը Տիմառը և ուսուցիչ Ծորնը։ Իռհաննը վոչ մի անգամ չի տեսել նրանց այն որից, յերբ ինքը տասնինը տարեկան հասակում փախավ Բուլղինից։

Մքքին Ազատուհը յերբևիցե ապատ կարծակի ներան գնալ հայրենի տեղերը։ Իռհաննը հիշեց, քե քնչպես մեկ անգամ, մի կիրակի օր, մայրն իրեն նոր կուստիկ հագցրեց, խոկ մայրը Տիմառը հնաոր առնավաճառ տարավ։ Իռհաննը յերկ տարեկան եր։ Մայրը առնավաճառի առնտրականին կրպակում ներա հասակը անուշադրության վարպապետ չի գնեց, վորն այնքան գեղեցիկ եր, վոր ուտելն ախորժ եր։

Առավոտյան պատարագի գնդը հնչեց։ Բյուրերը հիշեց չեկ ժարգուհու Ինչ եր նշանակում ներա խոսքերը։ Միևնույն և, այժմյան յեզածից վատ չի լինի։

Նա վեհոց գնաց պատարագի, և գլխարկը վերցնելով, առանց գուրս կիկավ։

ՈՒՐԱԽ ԹԱԳՈՒՀՈՒ ՁԵՆԱՊԱԿՈՒ ԴՈՐԾԱՐԱՆԸ

Ցերկրի ընդերքը, դու, քիմիա,
Հայացքդ սրտբյամբ թափանցիր
Ցեվ ինչ ունի այնտեղ Ռուսիան,
Ծնիր, գանձերը բացիր։

Մ. Լոմոնոսով

ԼՈՒՐԵՐ ՊԵՏՐՈՍԻ ՄԱՍԻՆ

Ցերբ Բյուդերը դեռ չահել եր և «բարոն Շրադեր» անունով վոսկի յեր յեփում պալատական լաբորատորիայում, շատ անգամ եր լսել ռուսական թագավոր, հսկա Պետրոսի մասին։

Ռուսական թագավոր Պետրոսն ոգնեց Ոգոստոսին Լեհաստանի թագավորը դառնալու։ Զարմանալի չե, վոր Պետրոսի անունը բոլոր արքայական պալատականների շրթունքների վրա յեր։

Պետրոսի մասին պատմելու բան շատ կար։ Նրա թագավորությունը—անպին ու կիսավայրենի ռուսական թագավորությունը արևելքում հասնում եր մինչև խորհրդավոր Չինաստան, իսկ արևմուտքում սահմանակից եր Լեհաստանին։

Լուրեր եյին պատում, թե նրա մայրաքաղաք Մոսկվայում աբջերն ու գայլերն որը ցերեկով մխասին վխտում են փողոցներում։ Փոխարենը բոյարների անդրում այնքան վոսկի, արծաթ ու թանգարժեք քարեր կան, վոր տախտակներում են դասում։

Բայց գերմանացիք դրա վրա չեյին զարմանում, այլ նրա վրա, վոր Պետրոսն աշխարհի ամենից տարորինակ թագավորն եր։ Նա այնպիսի բաներ եր անում, վոր սիրտ չեր անի կատարելու վոչ մի յեվրոպական հալից ընկած փոքրիկ իշխան՝ վախենալով վաքիաքեկել եր

իշխանական արժանիքը։ Պետրոսը հաղնում էր հոլանդական արհեստավորների կոպիտ հագուստ։ Նա խմում էր գարեջուրը և հասարակ նավապետների հետ տանձ չոր խաղում։ Նա ամուսնացավ լվացարարուհու հետ, իսկ իրեն առաջին նախարար զարձրեց փողոցում կարկանդակներ վաճառող Սաշկա Մենշիկովին։

Պետրոս թագավորն աշխատում էր վորպես արհեստավոր։ Նա առաղաստորություն էր անում, պլանները էր գծում, նավեր էր շինում։

— Պետք է աշխատել,— ասում էր նա, և նրա ժահակը ծուլերին ու քնքշացողներին սովորեցնում էր, թե ինչպես պետք է աշխատել։

Պալատականները ծիծաղով էին հիշում, թե Պետրոսն ինչպես Ցեվրոպա յեկավ։ Նա չէր կարողանում շնորհալի կերպով բարևել և վախենում էր, թե պալատական պարկեշտների վրա կսպրթաքի։ Նա ուտում էր անշնորհք կերպով,—միսը ձեռքով էր պատառում, իսկ վոսկրները թքռտելով, գցում էր սփռոցի վրա։ Այն տներում, ուր նա իջնում էր, տերերը կուչ յեկող ցեխ, թրով կտրատած կահույք, պատրատած գորգեր, ջարդված անոթներ էին գտնում։

— Ռուսական վայրենի յեն,— ասում էին նրա մասին թագավորական պալատականները։

Այս ռուսական վայրենին բոլորին հարցակոխ էր անում։ Այս չտեսնված թագավորն ուզում էր իմանալ, այս ինչ բանն ինչից և ինչպես և շինված։ Նա իր ձեռքով կանգնեցնում էր քամադասյի թևերը, վոր լավ տեսնի թե, նրանք ինչպես են պատում։

Նա սովորել էր տառաթներ հանել, դիակներ անդամահատել, պղընձե տախտակների վրա հատիչով փորագրել։ Նա թագավորների առաջ պարծենում էր, վոր տասնչորս արհեստ գիտե։

— Իսկ ձեղնում թանաքներն ինչից են շինվում,— հարցնում էր նա թագավորներին։ Իսկ ինչով են տատմ հանում։ Իսկ ինչ փայտից եք դուք նավերի կայմեր շինում, իսկ ինչով եք բժշկում կովերին, յեթե նրանք կաթ չեն տալիս։ Հապա տեսնեմ, թե ձեղնում ինչպես են ադյուս շինում, դրա հետ էլ ինձ ցույց տվեք, թե զինվորների համար ինչ տեսակ ձավարից են շիլա յեփում։

Մի քանի թագավորները կարող էին նրա այդ հարցերին պատասխանել։ Նրանք ծաղրանքով էին նայում Պետրոսի ուժեղ ու կոշտուկավոր ձեռներին և խոպանակով սրբում էին իրենց քնքուշ ու սպիտակ մատների վրայի աղտամեղ մատանիները։

Պետրոսը մռայլում էր սև ու սրատես աչքերի վրայի հոնքերը և պալատներից գնում էր նավաշինարանները, գործարանները ու արհեստանոցները—նորից մուրճ խփելու, անտառներում շրջելու, արհեստավորներ ընտրելու, վոր իրեն ծառայեն։

Արքայական պալատականները ժպտում էին.—Նորին մեծություն

Պետրոս Գրիմուսը մի պահ նման չէր Իրա փոխարեն զորքապետերն ու առևտրականները խորհրդակից կերպով իրար աչքով էին անում։ Նորին մեծությունը լավ գիտե, թե ինքն ինչ է ուզում։ Նա ուզում է, որ իր ժողովրդում զարգանա առևտուրը։ արդեն ուրիշ վաճառական մարդիկ առևտրական ընկերություններ են կազմում, միացնում իրենց գրամագլուխները, շրջանառության մեջ թողնում ու նկատելի կերպով հարստանում են։ Մեր ապրանքներն էլ Ռուսաստան կգնան, մենք էլ կհարստանանք։ Ինչ ուզում ես ասա, բայց նորին մեծությունը ճիշտ հասկացողություն ունի առևտրի ոգուտի մասին։ Պետրոսին այսպես էին գովում խելոք վաճառականները, յերբեմն էլ թուլլ էին տալիս իրենց նրա մեջքին խփելու ե՝ նրան իրենց մեջ կամացուկ «առևտրական թագավոր» էին անվանում։

Իսկ ռուսական պալատում յեղած մարդիկ սարսափով պատմում էին, թե նորին մեծությունն իր պալատում ասիական բռնակալի, վայրենի հրոսակախմբերի հրամանատարի յե նման։ Մի խոսք կասի և հազարավոր գլուխներ կընկնեն մոսկվայան դահիճների կացիններին տակ։

Մոսկվայում Ստրելեցների քիվնապահ գնդերի խռովությունը զսպելով, նորին մեծությունը հրամայեց խռովարարներին կախել կրեմլի առաջնակարգ պատերից։ Դիակները զարդարել էին ամբողջ պատը, կրեմլի վոսկեկատար լեհեզեցիներն ու ցարական սպիտակ պալատները պատում էին զարշահոտ ողակով։ «Ամեն առավոտ մի սարսելից ե ընկնում»,—ասում էին ժողովրդի մեջ, իսկ պատի վրա ազատվածին կռավոց կար։

Ռուսական պալատին կից գտնվող ոտարերկրյա դեսպանները գրում էին իրենց թագավորներին, թե Ռուսաստանում մարդիկ չկան։ կան միայն «նորին մեծության անարժան ստրուկները», զուրկ ազատությունից ու պատվից։ Նորին մեծությունն իր մահակով վոչ միայն պայծառապայլ իշխան Մենշիկովին ու մյուս պաշնականներին և ծեծում, այլև մահացու կերպով ծեծում է իր վորդուն՝ գահաժառանգ Ալեքսեյին։ Ցավ բոլորը համբերում են։ Նա թագավոր է։

Զայրացած ժամանակ նորին մեծությունը սարսափելի յե։ Նա վոլտրում է իր սև աչքերը և թափահարում է ուսերը։ Այդ ժամանակ յերեում է, թե սարսափից ինչպես է դունատվում նորին մեծություն Ցեկատերինան, վորը տոհմական պաշնականներին բարկացնելու համար թագուհի յեր վերցված լվացարարուհիներից։

Ցարական ինջուքներին մանակցելը ոտարերկրացիների համար անվտանգ բան չէ։ Ցարական ինջուքներից շատերը հիվանդանում են, վոմանց գլուխկոթրելն է թռչտանում, իսկ վոմանք էլ անպատիվ են լինում։ Քիչ ժամանակ նորին մեծությունը թքեց մի ոտարերկրացի սպայի յերեսին։ Ցարական նոր հերյուրանքների վրա

քիչ փող չի գնում—ավելացել են տուրքերն ու հարկերը, չեն վերջ նում զորահավաքները—մերթ զինվոր են տանում մարդկանց, մերթ վողջ Ռուսաստանից նրանց քշում են պետական նոր շենքերի վրա աշխատելու։ Ամբողջ գյուղեր են դատարկվում։

Գյուղացիք լաց են լինում.—այն որից, յերբ աստված թագավորելու ուղարկեց նրան, մենք ուրախ որ չենք տեսել։ Որ չի լինում, վոր մեծ բահրա չտանք։

Վողբում են զինվորների կանայք.—Նա գյուղացիների տներն ավերեց, մեր ամուսիններին զինվոր տարավ, իսկ մեզ ու մեր յերեխաներին վորբացրեց, վոր միշտ լաց լինենք։ Քիչ հող և գրավել, հիմա էլ զինվորներին քշում և Ալսլ և ավիդների ու գերմանացիների յերկիրը, վոր ավելի շատ ժողովուրդ սպանի։

Խարուկների մոտ զինվորներն են վնթփթփնում.—աշխարհակեր, վողջ աշխարհը կերավ, մնկը դրա, այդ հարբեցողի գլուխը չկոտրեց, իսկ նա վորքան լավ գլուխներ վոչնչացրեց։ Ռուսաստանում ապրելը սարսափելի յե, վոչ վոք հանգիստ չունի։

Այո, բայց նորին մեծություն Պետրոսը մեծ թագավոր է—կհասկրին և Ալեքսանդրին նման։ Նրա գայլսոնի տակ Ռուսաստանը հզոր պետություն և դառնում։ Արդեն այնտեղ զինվորական ու առևտրական նավեր են շինվում, նոր գործարանները քաշան, ժահուդ ու քարակ մետաքս են գործում։ Գործարանները հանքեր են հալում, թնդանոթներ, հրացաններ ու ռումբեր են ձուլում։ Հարստանում են ռուս վաճառականները և ռուս զինվորները հաղթում են հակառակորդին։ Մյուս յեվրոպական թագերի համար Ռուսաստանի հետ դաշինքն ոգտակար կլինի։

Այսպես եյին գրում ոտարերկրյա դեսպաններն իրենց թագավորներին։

Յերբ Բյոտգերին գյերեք սպասավորներով պարոն» անվան տակ կենդանեյնից շվեդներից ազատված Դրեզդեն բերին, նա իմացավ, վոր շվեդներին քշել են Սաքսոնիայից ռուսական ցար Պետրոսի զորքերը։ Զարմանալի չե, վոր յերբ Դրեզդենյան գործարանն սկսեց գեղեցիկ սպիտակ անոթ արտադրել, Ոգոստոսը Բյոտգերին հրամայեց սուրճի սպասք պատրաստել, վորպես նվեր Պետրոսի կին Յեկատերինային։

Բյոտգերը հետևում եր այդ պատվերի կատարմանը և հիշում եր, ինչ վոր Պետրոսի մասին լսել եր իմաստուն Զիրնհաուզից։

— Ռուսաստանը կիսավայրենի, ազգատ յերկիր է,—ասում եր Զիրնհաուզը։ Նա հինգ դար յետ է Եվրոպայից։ Ռուսները չեն կարողանում գործարաններ ու ֆաբրիկներ հիմնել և առևտրի համար գործվածքներ պատրաստել։ Նրանք նույնիսկ ճանապարհներ, նավահանգիստներ ու նավեր չունեն, վոր ապրանք տեղափոխեն։ Յերկրում առևտուր չկա, ուրեմն՝ փող չկա։

Պե «Պետրոս Թագավորն առևտուր և արդյունաբերություն՝ պահով նրանից, առևտրականներին Ռուսաստանում այժմ ճանապարհները չեն պատվիրված: Նրանք ռուսական կյանքը կառուցում են իրենց գիտցած ձևով: Իսկ յերկարաժորուա բոյարները հին կյանքին կպել են ամուր, համառ, առում են այն բոլորը, ինչ վոր նոր ու հինց դրանց ել ցավը քշում և իր պալատից, իսկ իրեն վորպես ոգնականներ փնտռում և խելացաս ու ճարպիկ մարդիկանցից: Իսկ յեթե նա խոսում և հասարակ նավապետների հետ, ինքը մեծեր և զարկում նավաստիակներին, լվացարարուհուն Թագուհությունն և անչում, և միևնույնի համար այլ անվախել բաներ և անում,—այդ բոլորն անում և նրա համար, վոր ցույց տա, թե ինքը Թքում և ռուսական հին սովորություններն վրա և առում և հինը:

«Վորքան գործարաններ պետք և հիմի նա, վոր հավասարվի Յեվրոպային: Յես չեմ զարմանա, յեթե նա իր համար անոթեղենի, գործարան հիմնի: Ռուսաստանում պետք և վոր լավ կավիր լինեն»...

ՍԱՆԿՏ-ՊԻՏԵՐԲՈՒՐԳ ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔԸ

Նեվայի ափին ճահճոտ տեղերում նոր քաղաք ևր ջինվում: Պետրոս Թագավորի գինվորներն այդ տեղը նվաճեցին շվեդներից: Պետրոս Թագավորի «աշխատանքային մարդուկներն» այդ տեղը քայլ առ քայլ նվաճեցին յերերուն ճահճուտ տեղերից, անանցանելի անտառներից:

Նրանք ջրանցքներ փորեցին, ճանապարհներ անցկացրին, լայն Նեվայի վրա կամուրջներ կապեցին: Քիչ գինվոր չընկավ այստեղ շվեդական կատաղի մանրապատնեշների, իսկ ավելի շատ «աշխատանքային մարդուկներ» ընկան ամիից, ցրտից ու ընդհատից, ցարական տասնապետների անխիղճ մարդկների տակ կատարվող աշխատանքից ուժասպառ լինելուց: Փոքրիկ յաղաքը կառուցվում ևր վոսկրների վրա: Պետրոս Թագավորը մարդկանց չեր խնայում: Նա արդեն մտքումը հաշվում ևր, թե նոր նավահանգստից վորքան նավեր են ծով դուրս գալու: Մոսկովյան առևտրականները հայհոյանքի, վուշ, փայտ, մորթի, ճարպ են փոխանակելու անդրծովյան վոսկու հետ:

Յեթե Թագավորը վոսկի ունենա, կունենա նաև ուժ, ամուր իշխանություն: Արժե՞ հաշվի պահել, թե քանի աշխատանքային մարդուկ և վոչնչացել:

Արևմուտքը զարմանքով ևր տեսնում, վոր Նեվայի ափին չտեսնված նոր քաղաք ևո աճում՝ կառուցած ջրանցքներով: Սանկտ-Պետեր-Բուրխ քաղաքն ևր այդ:

«Աշխատանքային մարդուկների» լուծուկ գետնափորների շարքում սկսեցին աճել Թագավորի ու նրա ազնվականների պալատները

Ջարդարել այդ պալատները ճնշապակի վաճերով, ինչպես յեվրոպական թագավորների մոտ եր—ահա թե ինչ եր ուզում Պետրոսը։ Նա Հոլանդիայից բերել տվեց հոլանդական հախճապակյա նախշուն ծաղկամաններ և վառարանների համար ապակեվայլ աղյուսներ։

Բայց ժամից շատ նա ուզում եր, ինչպես Ջերնհաուզեն եր գուշակել, Սանկտ-Պետեր-Բուրխում իր ռուսական ճենապակու գործարանը հիմներ։ Նա սկսեց Դերմանիայից վարպետներ հրավիրել։

Ոգոստոս Թագավորը, վոր շատ բանով եր պարտական Պետրոսին, չհամարձակվեց հակառակել, յերբ վարպետ Եգգեբրեխտը պատրաստվում եր հեռու Ռուսաստան գնալ, վորպեսզի այնտեղ ճենապակու գործարան հիմնի։

Սրդյոք Սանկտ-Պետեր-Բուրխի կյանքը դուր չեկավ Եգգեբրեխտին, թե չայնտեղ համապատասխան ճենակավ գտավ, կամ գուցե և Ոգոստոն եր դաղտնի հրամայել, վոր չգտնի, միայն թե նա շուտով տուն վերադարձավ վոչինչ չկատուցելով Պետրոսի համար։

Այդ ժամանակ Պետրոն իր մուհեհիներն ուղարկեց Մոսկվայի հրապարակները։ Նրանք թմբկահարելով կանչում եյին ժողովրդին և հրավիրում ցանկացողներին, վոր հանձն առնեն թագավորի համար սպիտակ անոթեղենի գործարան հիմնել՝ «սաքսոնական պորցելինի» որինակով։ Մորուքավոր առևտրական Ա.Ֆանասի Գրիբենշչիկովը հանձն առավ այդպիսի գործարան հիմնել։ Մոսկվայի մոտ, Գժել կոչված տեղում տարբեր տեսակի կավեր շատ կային։

Գրիբենշչիկովն ուզում եր այդ կավերից «պորցելինյան» անոթներ շինել։ Բայց վոչ ճենապակե, այլ անթափանցիկ, վոչ զրնգուն և թուխ ատամնեղեն եր ստացվում։

Ցերբ Պետրոսը մեռավ, Ցեկատերինա և Աննա Իոաննովնա թագուհիներն այլևս հոգ չտարան, վոր ճենապակու գործարան հիմնվի։ Թագավորական պալատների համար հո կարելի չեր ցանկացածի չափ թանգարժեք, չինականի կամ սաքսոնականի պես ամենափառավոր ճենապակե ամանեղեն գնել։

Արժեր սեփական գործարան հիմնել։

Պետրոսի հաջորդներն աշխատել չեյին սիրում։ Պետրոսյան հին մահակը, վոր Ցեկատերինան, շատ եր կարոտում նրանց թիկունքին։

Մեկ անգամ գերժանական Մարբուրգ քաղաքով անցնելիս Գեորգն ահնտեղի պրոֆեսոր—քիմիկոս Վոլֆի հետ խոսեց այն մասին, թե թագավորական նոր գրադարաններում աշխատելու համար ինչպես են հարկավոր քանիմաց չահել դեռնականներ։ Գեորգը մեռավ։ Հայտարյա տասը տարի անցավ նրա մահից, յերբ պետերբուրգյան «Դեպ սահմանադրմեն»[1]) պրոֆեսոր Վոլֆի մոտ յերկաթուղային ուսանողներ ուղարկվեց՝ գրանցիչ փորձված ֆիզիկոսներ ու քիմիկոսներ պատրաստելու։ Դրանք էին Միխայլա Լոմոնոսովը, Դմիտրի Վլնոգրադովը և Գուստավ Ռայզերը։

Մի խուլ աշնանային գիշեր ուսանողները նավով դուրս յեկան Գեորգբուրգից։ Դաժան քամինները իշխում էին սառը Բալթիկ ծովում։ Կապույտ ուռած ալիքները խփում էին նավի կողերին և տախտակամածի վրայով անցնում էին մյուս կողմը։ Փոթորկի ժամին ուսանողները նստել էին փոքրիկ ու մութ նավս խցիկում ու ականջ էին դնում կայմերի ճոյռոցին ու ալիքների խուլ հարվածներին։ Այնտեղ, ջրային փոթորկուն տափարակներից դեսը, Միացել եր կրոնշտադտի նավահանգիստը, իսկ ավելի հեռվում—հարթատա Ռուսաստանը։ Գատաներբը մութ իրկնց մանկութեյունն էին հիշում գյուղում, մերթ դպրոցական տարիները՝ Մոսկվայում։

Յերբ յեղանակը հանդարտվեց, նրանք դուրս յեկան նավախելը և նստելով կուտակած պարանների վրա, հետևում էին ջրի յերեսին յերևացող փրփրուտ նավահանգին, կամ խոսում էին այն մասին, թե Գերմանիայում ինչ և սպասում իրենց։

— Միայն թե մեղ գարձյալ փակած չպահեն, ինչպես Մոսկվայում,—ասում եր տասնհինգ տարեկան նիհար ու գանգրահեր տղան։ Կողքերի տակ նստելը մահի չափ ձանձրացրել եր։

— Եհ, ցավում եմ, վոր գերմաներեն չգիտեմ,—հառաչում եր բարձրահասակ, լայնաթիկունք Լոմոնոսովը։ Վորքան ժամանակ կանցնի մինչև մոր յես գերմաներեն կսովորեմ և դասախոսություններ լսել կկարողանամ։

— Ախր ինչո՞ւ յես շտապում։

— Հապա ինչպե՞ս չշտապեմ։ Յերեք դու ել ինձ պես հասակդ առած գայիր Մոսկվա՝ կարդալ սովորելու և փոքրերն ուսուցիչ դառնում քեզ մտով ցույց տային.— «մի տեսեք, քսան տարեկան հիմարը գլուխը յեկել և լաթիներեն սովորելուց», դու ել կշտապեիր։ Բանտավոր եք յերկուսդ ել — Ռայզերը գերմաներեն ուսերինի պես և խոսում, իսկ դու, Միխայլ, առաջդ ժամանակ շատ ունես,—ասում եր Լոմոնոսովը։ Նա արդեն քսանհինգ տարեկան եր։

[1]) Այդպես եր կոչվում գիտությունների ձեմարանը։

«Ռուսաստան» բառը լսելիս Վինոգրադովի աչքերում նոր ժանիք կայծեր փայլեցին։

— Իսկ հիշում ես, Միշա,— ասաց նա,—ինչպես եր ուսուցիչ-բանում։ Ցուրտ, մառանիրդ սառչում էին, հերը լրերն անցուդարձ եր անում դասարանում՝ մուշտակը հագին, փայտը՝ ձեռքին։ Նրան շարունակ թվում եր, թե մենք շարունակ խոսում էինք իրար հետ, մինչդեռ մեր փորերն էին սովից ղաղռում։ Հիշում ես, նա միայն գոռում եր—«սիվենցիում»[1]), իսկ մեր փորը, «ծռուղ-ծռուղ» էր կանչում։ Ա՛յ, ծիծաղ եր հա։ Այդ ժամանակ փայտն իջնում եր մեր մատներին։

Վինոգրադովը բարձր ձայնով ծիծաղում եր։ Լոմոնոսովը նույնպես չեր կարողանում ժպիտը պահել։

— Այդպես,—բացականչեց Ռայերը,—ծնկանը խթելով քարեսախատակով, վորի վրա նա լուռ կերպով ինչ վոր թվեր եր գրում։— Այդպես, յես այս բոպիս հաշվեցի, վոր այն վողից, վոր ձեմարանը պետք և մեզ տա բնակարան, ճաշ և ուսման հատար, դեռ տարեկան հարյուր ռուբլի էլ կմնա մեզ մոտ։ Կարելի յե գրքեր գնել և ավելի լավ հագնվել։

— Մի՛թե՛ հարյուր ռուբլի կմնա,—ուրախ կերպով զարմացան Վինոգրադովն ու Լոմոնոսովը։ Այդ ահագին գումարից նրանց գլուխը պտույտ յեկավ։

— Ե՛հ, կապրե՛նք, յեղբայրնե՛ր,—բացականչեց Լոմոնոսովը, այդ ամսական մեկ ալտին[2]) նույնը չե, ինչ վոր ձեմարանումն եր։

— Վաղը նավահանգիստ կհասնենք,—ասաց գործած փուֆայկավոր նավապետը, անցնելով նավախելի կողմը, վոր խարխափ տեսնի։

Լուսադեմին նավը մոտեցավ Տրավեմյունդին։ Ուսանողները չունեչը պահած նայում էին առավոտյան մառախուղից վոր յերևող ատամնավոր աշտարակներին, սուր զանգակատներին և յեկեղեցիների թեփածածկ գմբեթներին, վորոնք այնքան տարբեր էին ռուսականից։

Հնդկաստանից և Ամերիկայից յեկած քերքող նավերն անձամբ ապրանքներ էին թափում նավահանգիստը։ Ծովափնյա սալաքարերի վրա իրար էին անցել զոլավոր գուլպաներ հագած հոլանդացիք, կարմրաշեկ անդլիացիք և նույնիսկ դեղին, շիլաչք չինացիք։ Զոլավոր շրջազգեստ հագած ու սպիտակ գլխագրիկներով գեղջկուհիները քշում էին արմտիքներով լի սայլերին լծված եշերին։ Ճեռանկյուն գլխարկով ու սպիտակ ոձիքավոր պաստորը մեծ քայլերով անցնում եր հրապարակի մի կողմից մյուսը։

Վինոգրադովն այնպես բերանբաց եր նայում հարևան նավի մի

---

[1]) Հանդերձ։

[2]) Շիլին = յերեք կոպեկ։ Ծ. Թ.

պնդակաչվ նեգր նավաստու վրա, վոր գլխարկը ձեռքից վայր գցեց։ Գլխարկը սուզվեց նավերի ժոտ կանաչագույն ջրի մեջ։

Իսկ նավաստիներն արդեն ամրացնում էին նավը կապելու ցիցը, կամրջակները գցում էին ափը։ Նոր կյանքն ուսանողներին դիմավորում էր աղմուկով, իրարանցումով և ոտար, անհասկանալի բառերով։

ՊՐՈՖԵՍՈՐ ՎՈԼՖԻ ՄՈՏ

Պրոֆեսոր Վոլֆը գիրքը ծածկեց ու ակնոցները տարավ դեպի ճակատը, յերբ նրա դռան առաջ աղմկեցին փոստատարկի անիվները։ Նա դուրս յեկավ նամամուտքի սանդուղքը և սրտագին կերպով գրկեց յեկող փոշոտած ուսանողներին։

— Հուրա ունեմ, վոր դուք ինձ մոտ լավ կապրեք և կարդարացնեք ձեր հայրենիքի հույսերն ու լավ պիտանականներ կդառնաք,— ասաց նա։

Մինչդեռ Ռայդերն աշխուժ կերպով ու գիրժանների նման ռուսական «Դին սեռնս Ակադեմիե» վոլշուկնն էր վրա տալիս, մյուս յերկու ուսանողները լուռ նայում էին։

Լոմոնոսովը լրջմիտ կերպով աչքերը հառել էր ծեր պրոֆեսորի յերեսին։ Նա դիտում էր նրա վարդագույն այտերը, նրա կնճռապատ պայծառ աչքերը և թվում էր գլխարկի տակից յերևացող սպիտակ մազերը։ Նա աշխատում էր բարեխիղճ արտաքինով դուշակել ժեծ գիտելիքներով հռչակված սրամիտ պիտանականին։

Վինոգրադովի յերեխայական դեմքից արագ չքացան հետաքրքրասիրությունը, ամաչկոտությունը և խորամանկ քմծիծաղը։ Նա կարոտացավ նկատել, վոր պիտանական ֆիզիկոսի գլպանից յերևում է լաստիներին վոտանավորները մի հատորիկ, վոր դռնից նայում է մի պառավ կին՝ ոսկյած զոգնոցով, փոքրիկ հուբասենյակի պատուհանում դրված հյուսվում և կանաչը, դորգի վրա մի կատվիկ է խաղում, իսկ բաց դռան արանքից յերևում են գրքերի դարակները, ֆիզիկայի գործիքները և պրոֆեսորի աշխատանքի սեղանը։

Պառավ Եմման ուսանողներին տարավ վերև մի լուսավոր սենյակ, վորտեղ լվացվելու համար դրված էին թասեր և փարչեր, նաև յերեք սպիտակ մահճակալ։

Հաջորդ օրն ուսումն սկսվեց։

Պրոֆեսոր Վոլֆը սրտանց ուզում էր այս ուսանողներից ուշիմ ու յեռանդուն գիտուններ պատրաստել, վորոնց կարիքն այնպես զգում էր Ռուսաստանը։

Ուսանողները բացառիկ ընդունակ դուրս յեկան։ Ծուրացնելով գերմաներենը, նրանք ազատորեն վորսում էին դասախոսության

յուրաքանչյուր բառը։ Վաւվռուն աչքերով, մոռացած աշխարհում ամեն բան, նրանք փորձեր էին կատարում պրոֆեսորի ղեկավարությամբ։

Նրանց դեմի գիտությունն ունեցած սերն այն աստիճան էր խոստանում, թե ապագայում նրանք իրենք պետք է գիտությունն առաջ շարժեին։ Վորքան մարքեր, նախագծեր ու յերգուներ էին թագցնում իրենց մեջ նրանց թարմացած աղյուսները։

Պրոֆեսոր Վոլֆը նրանց հետ պարապելիս ինքն էլ էր ջահելանում ու հափշտակվում։ Սակայն նրանք այնքան հոգս էին պատճառում նրան նույն անդուլ թափով, վոր նրանք նվիրում էին գիտությանը, — այս դատարկապորտները կարող էին գժտություններ առնել փողոցներում։ Ցերեկն գալիս էր թե չէ, էլ տանը չէին նստում։ Վոգնվորված նոր կյանքով, ազատությամբ, ավելորդ փղերով, նրանք ուզում էին վոչ միայն սովորել, այլև լուսի ուրախանալ։

Ցերեկոյան Վիրգիլիոսից մի սերած գլուխ կարդալուց հետո պրոֆեսոր Վոլֆը յերկար ժամանակ շուռ ու մուռ էր գալիս իր անկողնում։ Փողոցից նրան էին հասնում յերեսեն ծեծկռտոցի ձայներ, յերբեմն ծիծաղի պոռթկում, յերբեմն քաջալերի յերգ։

— Ա՜խ, թոհից փախածներ, մեզ շռայլատաններ, մեզ թեթևամիտներ, ինչ անես սրանց,— հառաչում էր ծեր պրոֆեսորը։

ՍՏԱՀԱՆՆԵՐԸ

Ուսման յերրորդ տարին վերջանում էր։

— Վահ, Միքայա, չեմ գնա։ Բավական է, վորքան դատարկապորտություն արինք, ժամանակ է, վոր պատիվ էլ դիտենանք,— ասում էր Լոմոնոսովը, ընկելով աղջամուղջի վրա հանդերձն, պատուհանի մոտ նստելով, պատրաստվում էր կարդալ։ Առանց այն էլ քաղաքում խոսում են, թե ռուս ուսանողները թափաշրջիկներ, չարաճճիներ, անգործներ են։ Ցես չեմ ուզում ծերունի Վոլֆին վշտացնել։

— Այ, մի լավ ծեծենք լողող Ռատոյին, վոր խայտառակում է ռուս ուսանողներին և ծերունու մոտ մեզնից չարախոսել է։ Ռուս ուսանողների փոխարեն յես նրա քիթը կտրտեմ,— տաքացել էր Միքայա Վինոգրադովը՝ բուռնցքով սպառնալով յերևակայական թշնամուն։ Ա՛յ, Ռայզերն էլ հետս կգա։

— Ինձնից ինչ ես ուզում,— ձայն տվեց շեկլիկ Ռայզերը, վոր կուրսկան մաքրելով էր զբաղված,— յես տանից դուրս կգամ միայն նրա համար, վոր պատավ Եմման այլևս մոտ չի տալու մեզ։ Նա վախենում է, թե տունը կայրենք։ Դե ամբողջ դիշերը մխիթարում հո չենք նստելու։

— Դե գնանք, Միքա,— քնգրեց Վինոգրադովը։ Նա մոտեցավ

Լոմոնոսովին և զգուշությամբ գիրքը ձեռքից քաշեց։— Ինչ պատահեց քեզ, զրոսնենք, քանի կարելի է։ Ա՛յ, գետերբուրգ վերադառնանք, ամեն կաց, այնտեղից ոչ մի տեղ չես գնա։ Կրկին հացի ու ջրի կնստեցնեն մեզ, իսկ չաթաթ որերը կծեծեն «գիտությունների առաջադիմելուց» համար։ Սպասիր... Լաճմ ես։

Պատուհանի մոտ մեկը շվայրեց։ Միայա Վինոգրադովը պատասխանեց ուրախ սուլոցով, թռավ պատուհանը, վոտները կախեց և ջրատար խողովակը բռնելով, սահեց ներքև։ Նրան լուռ կերպով հետևից Ռայդերը։

Լայնաթիկունք Լոմոնոսովը տատանվելով, կանգ առավ պատուհանի առաջ, բայց յերբ յերգը կրկին վոլոտաց, և նա պարզ լսեց իր ընկերների զրնգուն ձայները, նա ձեռքը թափահարեց և նույնպես պատուհանից ցած թռավ։

Ներքևի հարկում, կիսաբաց կրկնափեղկի մոտ կանգնած եր ծերունի պրոֆեսորը և քնից առաջ ծխամորճ եր ծխում։ Նա տեսավ, թե ինչպես յերիտ ուսանողներն իրար յետևից վազելով պարտեզն անցան և անհայտացան քանիպատի յետևում։ Նա չկանգնեցրեց նրանց, բայց հոնքերը մտահոգված կերպով շարժվեցին։

ՄԵԿՆՈՒՄ

Հաջորդ որը պրոֆեսորը դուրս չեկավ սուրճ խմելու։ Նա իր առանձնասենյակում ոտարերկրյա փոստն եր նայում։ Ուսանողները մկների պես հանդարտ նստել եյին սեղանի շուրջը, հանցավորի պես գլուխները կախած։ Գուստավ Ռայդերը քնկոտ կերպով ճաշ պատրաստում եր աչքերը։ Միայա Վինոգրադովի ճակատին անպին ուռուցք եր կապտին տալիս։ Միխայլա Լոմոնոսովը բոլորովին տխուր եր, և դասերը վերջացրած, իր տեղակը ձեռքին նստել եր անկյունում։ Նա ճակատը կնճռոտել, գրիչը կրծոտում ու տեղակում մի բան եր խազմզում։ Նա վոտանավորներ եր գրում։

Ուսանողներն ամբողջ որն առանձին չանասկրությամբ եյին կպել գրքերին, իսկ խոնջոցում պատավ Եմման գանգատներով պրոֆեսորի մոտ յեկող քաղաքացիների բողոքներն եր հետ մղում։

Բաղաքապետարանի շենքի ծեր պահապանը փայտե վոտը խփելով, պատմում եր Նրան, թե ուսանողները գիշերը Կուրֆիրստի արձանի գլխավերը հրթիռներ եյին թռիռում, շուրջը պարում ու յեր-

գուժ էին։ Ինքն ուզել է փող փչել՝ մյուս պահապաններին կանչելու, բայց փչելուն պես փողից կծու փոշի չի դուրս թռել և աչքերը լցրել։ Մինչև վոր ինքը կշտացար ու կլիշտաց, ուսանողների հետքն արդեն կորել էր։

Գաղաքապետի անտեսուհին զանգատվում էր, թե ուսանողներն իրեն մեռնելու չափ վախեցրել են։ Գիշերը նրա պատուհանից վառված աչքերով մի սարսափելի ոխե էր նայում։

— Բարի յերեկո,— ասաց ոխը և սենյակ թռավ։ Դա մի մեջը փոքրած դդում էր, ներսում վառած մոմ։ Ուսանողները նրան փայտ վրա նստեցրել և բարձրացրել են բարեպաշտ պառավի պատուհանը։

Ծանոթ պահը հաշիվ էր բերել կոտրած ապակու համար, սափրվելը՝ ցուցանակի վրա նկարած սատանաճուտերի համար, և վերջապես, պրոֆեսորի սենյակը խուժելը իմքը կատաղած յուստիցրատը [1]) և պահանջեց Մարբուրգից աքսորել ուսանող Վիննգրադովին, վոր չարգել էր իր միակ վորդու — լոլոզ Ռատոյի քիթը։

Յերեկոյան պրոֆեսորն իր առանձնասենյակը կանչեց Լոմոնոսովին «ե», անուշտ Միխայլային կշտամբում էր, վճռեցին Վինոգրադովը ու Ռայդերը։ Լոմոնոսովը պրոֆեսորի մոտից վերադարձավ գունատ ու լաց յեղած։ Վոլֆը ճեմարանից հրաման էր ստացել մոլի ուսանողներին ուղարկել Ֆրեյբերգ՝ պրոֆեսոր Հենկելի մոտ, վորը պիտք է լեռնային գործը սովորեցներ և նրանց հետ խստո թյամբ վարվեր։

«Ուսանողներն այստեղից դուրս յեկան հուլիսի քսանի առավոտյան,— գրում էր Վոլֆը Գետերբուրգի ճեմարանին։ Վինոգրադովի համար յես շատ եմ դես ու դեն ընկել, վորպեսզի կանխեմ նրա ընդհարումները զանազան ուսանողների հետ։ Ռուս ուսանողների մեկնումն ինձ շատ հոգսերից ազատեց... Նրանք յերբ տեսան, թե նրանց փոխարեն վորքան պարտք պետք է վճարել, սկսեցին զղջալ և վոչ միայն ներողություն խնդրել իմ առջև, այլ հավատացնել, վոր սրանից հետո ուշադիր են իրենց բոլորովին այլ կերպ պահել, և յես նրանց բոլորովին այլ մարդիկ կտեսնեմ, յեթե միայն այժմ վերադառնան Մարբուրգ։ Առանձնապես Լոմոնոսովը կսկծից ու արտասուքից չեր կարողանում վոչ մի խոսք արտասանել»։

ՀԵՆԿԵԼ

Քարքարոտ ճանապարհը դիք կերպով դեպի վեր էր բարձրանում։ Ֆրեյբերգ փոքրիկ քաղաքն ընկած էր մերկ լեռների մեջ։ Ուսանողները մոտեցան նրան լուսադեմին։ Հանքահորերի մուտքի առաջ սրսրվում էին հանքագործների ադոտ լապտերները։ Հալոցների վրա սև ու խեղդող ծուխ էր կանգնած։ Մուրը ծածկել էր անցորդների յերեսները, ճանապարհի մոտ ընկած քարերը, վախտ թափերը

[1]) Յուստիցրատ — դատական արդարադատության խորհրդատու։

Ուսանողները հիշեցին Մարբուրգի կանաչ պուրակները և նրանց բոլորապատող լինչ դեպը։

— Անգեղատես փոքրիկ քաղաք...—հառաչեց Ռայզները։

— Կապրենք,—պատասխանեց Վինոգրադովը,— ստորերկրյա հանքահորերում կլինենք։ Կանենանք, թե հալոցներում լերկածն ինչպես և ինչի պես հոսում։ Չէ՞ որ մեզ հալոցներն են ուղարկելու, Միխայլո։

Լոմոնոսովը գլխով արեց։

Լհենային խորհրդական Հենկելը նրանց միանգամից չընդունեց։ Նրանք սպասեցին նրա հանդած ոջախի առաջ, մի գատարկ սենյակում։ Պատի յատուկ վիճակում եյին լերկու ձայներ։

— Վոչ մի դռող չեմ տա քեզ, ձրիակեր,—գոռաց մի ծեր մարդու չար ձայն։

— Դե, ուրեմն ինքդ նորոգիր քո տանիքը, գծուծ,—պատասխանեց մյուսը—ջահել ու հնչեղ։ Ուսանողների մոտով բանվորական կուբրակա հագած մի ջահել ժպտդ անցավ և դուռն իր յետևից ամուր ծածկեց։ Այդ ժամանակ ներքին սենյակներից դուրս յեկավ Հենկելը։

— Բարի յեք յեկել, իմ սիրելիք, սիրելի հոգեզավակներս,— ասաց նա՝ սիրալիր կերպով ժպտալով։ Պատի յետևի չար ձայնը— այդ նրա ձայնն եր։ Փոքրիկ աչքերն արագ կերպով դիտեցին ուսանողներին։ Սուր քթիկը կարծես հոտոտում եր յուրաքանչյուրին։ Վինոգրադովը կուչ յեկավ։

«Լեզվի վրա մեզր, իսկ լեզվի տակ սատկյա», անցավ նրա մտքովը։

— Վատահուքյուն, իմ յերիտասարդ բարեկամներ, ամենից առաջ վատահուքյուն դեպի ձեր դասախոսակը,—կարծես գուշակելով Վինոգրադովի մտքերը, արագ-արագ ասաց Հենկելը։ Ցես տարիքով ձեղնից մեծ եմ, յես փորձով ձեղնից հարուստ եմ, յես, համաձակվում եմ ասածել, ձեղնից ավելի գիտուն եմ։ Գնդրաշարք և գովեստի արժանի գիտուքյուններն ընդ ձեմարանը ձեզ լինձ ե հանձնել, յես ձեր դասախոսն ու բարեկամը կլինեմ։

Նա գրպանից հանեց գիտուքյունների ձեմարանի նամակը և կարդաց քարձրաձայն։ Ուսանողների դեմքերը ձգվեցին։ Ձեմարանը գրում եր, թե այսուհետև նրանք իրենց նախկին ոռճկի կլան են սատնալու։ Փոդի մասին կարգադրություն անողը լինելու յե Հենկելը։ առանց նրա կարգադրության նրանք վոչ տեսարակ են գնելու, վոչ սափրիչի մոտ են գնալու, վոչ նամակ են ուղարկելու։ Ցեթե նրանք չլան Հենկելին, նրանց հետ կվարվեն վորպես «անպիտանների և վոճրագործների» հետ։

— Ինչպես անպիտանների և վոճրագործների հետ,—գոչեց գոհ Հենկելը և սկսեց խրատել ուսանողներին։ Նրանք պետք և գանան աշխատասեր, լուր, համբերատար, հավատա, ստամոքսավոր յերիտասարդներ։ Իսկ վոր գլխավորն ե,—իրենց դասախոսակից վոչինչ չպետք և քաղցնեն։

Հենկելը յերկար խոսեց։ Սովից Վինոգրադովի բերնի ջուրն էր գնում, յերբ լեռնական խորհրդականը վերջապես լռեց և ուսանողներին տարավ իրենց անձյակները։ Դրանք աղքատիկ ու կիսախավար խցիկներ էին։ Սեղաններին վրա գործիքները ու զզղված գրքեր կային ընկած։ Հենկելն ամեն մեկին նրա համար գնած իրերի հաշիվ հանձնեց։

Լոմոնոսովը մանկական կեր ձև ձևը ավեց փչացած, ժանգոտած կարկինին, վոր Հենկելն էր գնել և նայեց Ռայզերին։ Ռայզերը ձախ աչքով նշան արեց։

Կարկինը հին էր, անպետք, իսկ Հենկելի հաշվով նրան վճարած էր յերկու տալեր։ Նոր կարկինն անգամ այդքան չէր ժեր։

ՀԱՆԲԱՐԱՆԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

Ուսանողների համար դժվար ժամանակներ հասան։ Հենկելը նրանց որպես տալիս էր չորսական գուշ ճաշի համար, յերկուսական գուշ ընթրիքի, և վոչ մի պֆեննիգ ավելի։ Ուսանողների այտերը գունատվել էին, բամբիռների թևերը պատռտվել, վոռնամաններնը շնորհքից ընկել էին։

Առավոտները, իրենց գոռիներն ավելի ամուր քաշած, յերիտասարդները գնում էին Հենկելի հանքաբանական կաբինետը։ Այնտեղ մեծ ու փոքր արկղներում դարսած էին լինում կավերի, քարերի և հանքերի նմուշներ։ Նմուշներից յուրաքանչյուրի վրա լատինական տառերով պիտակ էր կպցրած։

Մինչ Հենկելը վիճում էր աշխատավորների հետ, կամ վճռճռոցով հանդիմանում էր իր անհոգներին, ուսանողներն անգիր էին անում հանքերի լատինական անունները։

— Ազամա—կավ, սուլֆուր—ծծումբ...—պնդում էր Վինոգրադովը.—պլյումբարիուս... Միխայլա, ինչ բան և պլյումբարիուս։ Ձեռ մոռացել եմ։

— Կատարանենք—բարկացած պատասխանում էր Լոմոնոսովը։ Միայն թե չարժե հիշել, Միխայլ։ Ինչ ողուս, յերեխ այդ լատինական բառերը թուխանների պես անգիր ասենք, իսկ հանքերի իսկական հատկությունը չիմանանք։ Հենկելը դրանց մասին վոչինչ չի ասում։ Նա իր գիտությունը թաղցնում է մեզնից, ինչ ես։

Այսպես էին անցնում առավոտյան ժամերը։ Հենկելը կաբինետ էր մտնում ժպտալով, ձեռ ու վոտ ընկած։ Նա միանգամից սկսում էր ճառել իր մեծ գիտնականության մասին։ Իբր թե նրան վողջ Ցեմրոպան էր սիրում ու հարգում։ Նրանից ավելի լավ վոչ վոք չգիտե գանազան կավերի ու քարերի հատկությունը։ Ջուր չեն, վոր նրան «լեռնային խորհրդական» կոչումով մեծարել են։

Մեկ անգամ Լոմոնոսովը չհամբերեց ու ընդհատեց նրան պատմել

կավերի հատկությունների մասին։ Հենկելը խորհրդավոր ու ծանրախոհ դեմք ընդունեց։ Կավերի մասին յուրաքանչյուր գիտություն—ամենքին անծանոթ ըզծավոր գիտություն է, ասկյն նա, Հենկելը գերազանցել է այդ գիտությունը։

— Կավերը լինում են կենդանական, հանքային և բուսական,— ասաց նա։

— Միխայլա,—շշնջաց Վինոգրադովը,—«կենդանական» կավը վեր է։

Լոմոնոսովը նրան հրեց, որ լռի։

— Իրենց հատկություններով կավերը բաժանվում են վերինի և ներքինի, կոշտի և փափուկի, խոնավի և չորի...—շարունակեց Հենկելը։

— Գարեն,—ասաց Լոմոնոսովը,—ինձ թվում է քե որ կավը ել ջրում թրջես, նա կխոնավանա, իսկ յերե հնոցում չորացնես, նա չոր կլինի։ Մերթ չոր կամ խոնավ միայն հատուկ տեսակի կավերն են լինում։

Հենկելը լուռ, ակնոցների վերևից նայեց ուսանողին։ Հետո կարեվոր դիրք ընդունեց, վրի թաշկինակն ուղղեց և արհամարհանքով պատասխանեց.

— Դուք, իհարկե, հասարակ կավերն եք հասկանում, վորոնցից կճուճներ են թրծում։ Այդ ցոյց և տալիս, վոր դուք ոգտա եք։ Գիտությունն այդպիսի դատարկ բաներով չի զբաղվում։ Ես խոսում եմ չորության և խոնավության մասին, ընդ վայն այդ յերկու մեծ որենքների մասին, վոր նկարագրել են Արիստոտելը և Հիպոկրատը, և Գալենը, և Թեոֆրաստոսը, և Վիտրուվիոսը, և Պուֆենդորֆը...

Այս անգամ Հենկելն այնքան խորամիտ անուններ արտասանեց, վոր Վինոգրադովի ղուխն սկսեց պտտվել։ Լոմոնոսովը կնճռոտվեց և այլևս վոչինչ չհարցրեց։

Բավական չտատասխուց հետո Հենկելը դիմեց փորձերին։ Թարսի պես վոչ մի փորձ չհաջողվեց։ Մեկ սրվակն եր ճաքած դուրս գալիս, մեկ ջուրը չեր յեռացած, մեկ թղթածիրը չեր թափվում, ուր պետք եր։ Լոմոնոսովը նստած եր մռայլ, Վինոգրադովը նայում եր պատուհանին ու ոգտակներն եր համրում։ Բայղերն աչքերը չռում եր յերանգով, վոր քունը չտանի։

Մեկ անգամ Հենկելը վերցրեց կապարի կտորները ու կշռեց կշռաքի վրա։ Հետո նա նույնը կրակի վրա այրեց ու նորից կշռեց։ Բանից դուրս յեկավ, վոր կապարն այժմ ավելի կշռեց, քան առաջ։ Այդ ժամանակ Հենկելը հայտարարեց, թե կապարի քաշն ավելացավ, վորովհետև շրխկացնելիս նա միացավ կրմարարության հետ։ Կրմարարությունը հրային նյութ է, վոր փոված և վողջ աշխարհում։ Նրանից են ծագում տաքությունը, տապը, կրակը։ Հենկելը հրամայեց Լոմոնոսովին կրկնել այս քացատրությունը։

— Պարոն լեհնային խորհրդական,— մռայլ կերպով ասաց Լոմոնոսովը,— ինձ թվում է, թե բնության մեջ ոչ մի «ջերմարար» չկա։ Ցնթե հրացան արձակենք, միշտ կայծ կթռչի, նույնիսկ սառնամանիքի ժամանակ։ Իսկ սառնամանիքին ոդի մեջ ոչ մի «երրային նյութ» չի լինում։

— Ախ, այ թե ինչ, ձեզ թվում է,— գոչեց Հենկելը,— դուք շատ խնդնավատահ եք, պարոն ուսանող։ Բացատրեցեք մեզ, խնդմ անուսանելիս, ինչու կապարն ավելի ծանրացավ, քան առաջ էր, և առհասարակ վերտեղից է ծագում տաքությունը։ Մենք ձեզ հաճույքով կլսենք։

Լոմոնոսովը կարմրեց։ Նա խոր հառաչեց և դժվարությամբ ասաց։

— Կապարն ավելի ծանրացավ, վորովհետև չիկացնելիս նրա ծակոտիների մեջ մի տեսակ նյութ մտավ և մնանալով կապարի հետ, նրա քաշն ավելացրեց։ Վորտեղից է առաջանում տաքությունը—չգիտեմ, բայց կարծում եմ, վոր նա առաջանում է այն մանրիկ մասնիկների պատճառից, վորոնցից բաղկացած է ամբողջ մարմինը։ Ցնա փորձերի ժամանակ դիտել եմ։

Այստեղ Հենկելն ընկավ աթոռի մեջքին ու բարձրաձայն ծիծաղեց։

— Դուք փորձեր եք արել։ Իսկ ձեմ կլինի հարկավոր ձեզ նման կեղտոտի փորձերը։ Հոչակված մարդիկ իրենց գիտական աշխատություններում ապացուցել են, վոր ջերմարարը տաքություն է ծնում,— ուրեմն այդ այդպես է։ Մանրիկների պատճառ։ Այդպիսի բան մենք ու մենք լսել ենք։ Ձեր մտքերում պատճառ կա, բերիտասարդ։ Բայց չես կրկնջացնիմ այդ պատճառը, այդպես էլ իմացեք։

Հենկելը հրամայեց ուսանողներին իրենց տետրակներում գրել «ջերմարարի» մասին արած դասախոսությունը և այդ գրածն անգիր անել։

Այդ որվանից Հենկելնատել Լոմոնոսովին։

ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ՍՐԱՋԻՆ ՆԵՐԲՈՂԸ

— Ամավասիկ բանա, ինչպիսի բանա։ Վոչ վոք այսպիսի կյանք չի երազել,— ասաց Վինոգրադովը, փնտրելե գրիչը սառած թանաքի մեջ կոխելով։ Նրա խցիկը վաղուց չէին տաքացրել։

— Մուրտաղիցինք Մարբուրգում, գե, հիմա էլ տառապում ենք,— թախծոտ կերպով պատասխանեց Բայդերը և խրվեցղբի մեջ։

Սովորաբար Վինոգրադովն ու Բայդերը երբեկները միասին էին պարապում, իսկ Լոմոնոսովը փակվում էր իր սենյակում և ինչ-վոր բան էր գրում։ Բայց այս անգամ նա անսպասելի կերպով մտավ Վի-

Նոքրադովի խուցը՝ մի թերթ թուղթ ձեռքին և դուրը յետևից ժոռը ծածկեց։

— Լսեցեք, բարեկամներ,—ասաց Նա,—յես վոտանավորի ձևով մի ներբող եմ գրել և ուզում եմ ուղարկել Պետերբուրգ՝ Ճեմարան։

Ուսանողներն իրենց գրքերը ծալեցին և լսելու պատրաստվեցին։ Այն ժամանակ ռուսաց ամենալավ բանաստեղծը հավարվում էր Վասիլի Տրեդիակովսկին։ Լոմոնոսովը նրա վոտանավորների գիրքն ուներ և ուսանողներն այդ վոտանավորներն ընդհեր պիտեին։ Փառաբանելով Աննա կայսրուհուն, պալատական բանաստեղծն այսպես էր գրում.

Այժմ այնքան մեծ Աննա բաշխեց մեզ սասած
Առանց սավրի նրան գովերգել ինձ չէ աված.
Վողջ իմաստուն գլուխներից իմաստնագույնը նրանն է.
Ինքդով բոլոր խելոքներից ամենից սուրը նրանն է։

Այսպիսի վոտանավորներն առանց կակաղելու կարդալը շատ դժվար էր։ Իսկ վորքան ժողո, ծանր ու անհասկանալի թվային նրանք ուսանողներին, յերբ Լոմոնոսովն իրենը կարդաց։ Լոմոնոսովի վոտանավորները կենդանի էին, հնչուն ու չափավոր։ Այդ աշնանն ուսաց գորքերը վերցրել էին տաճկական Խոտին ամրոցը։ Լոմոնոսովը վոտանավորով նկարագրել էր արյունալի ճակատամարտը։ Դիմելով հաղթված տաճկին, նա հարցնում էր նրան։

Ո՞ւր է այժմ քո գովքը,
Ո՞ւր է կորովդ, մարտի մեջ քո համառքը.
Ուր նենդությունդ հյուսիսի դեմ,
Սատմբուլ, ուր հեղնաքդ մերոնց դեմ։
Միայն ձերոնց էյր մյուս գրոհել,
Ցերազանքդ էր՝ մեզ խակուն հաղթել։
Ցնծիչներիդ գաժանորեն զայրանում,
Վորպես վագր դեղ ռուս գունդն էր ալնում,
Բայց ինչ. հանկարծ դու ընկար մեռած,
Ձրյանդ մեջ խորդվեցիր խոցված։

Վինոգրադովն ու Ռայզերը հուզմունքից գունատված լսում էին նրան։

— Գիտեմ, Միխայլո, յես կարծում եմ վոր դու մեծ բանաստեղծ ես՝ նման հին Հորացիոսին,—ասաց Վինոգրադովը։

Լոմոնոսովն իր ներբողն ուղարկեց Պետերբուրգ։ Նա ազմուկ հանեց։ Ինչպես, մի անհայտ ուսանող, գյուղացու տղա ալսպիսի սիրուն վոտանավորներ և գրել, վորոնց չհասան աստիճան ունեցող ակադեմիկոսները։ Լոմոնոսովը միանգամից հռչակվեց։

Հռչակը՝ հռչակ, իսկ ուսանողները քաղցած էյին նստած։ Ճեմա-

բանը Հենկելի առաքիկը ժամանակին չէր ուղարկում, սա էլ սկսեց ուսանողների համար ուղարկած փողերը պահել։ Ուրախանչյուր գոտչի համար ժամերով մրմնջում էր։ Լոմոնոսովին ծաղրում ու ամեն կերպ հատանդում էր Նրան։ Մեկ անգամ նա ուսանողին հրամայեց մաքրել թափված անդիկը։ Սնդիկից թունավոր, այրող գոլորշիներ էին բարձրանում։ Առանց այն էլ Լոմոնոսովի գլուխը պտտում էր քաղցածությունից, իսկ այս գնդերում բոլորովին վատացավ։ Դուհնատված, նա մոտացավ Հենկելին և խնդրեց ազատել իրեն այդ աշխատանքից։

— Փափկասիրն,—կատաղեց Հենկելը,—ձեզ մեծ պիտանական չեմ։ վակայել կարող եք, իսկ հասարակ փորձը ձեր ուժից բարձր է։ Գնացեք և կատարեցեք ինչ հրամայում են ձեզ, քանի դեռ լաբորատորիայից չեմ ձեզ հեռացրել։

Այն ժամանակ Լոմոնոսովը սնդիկով սրվակը շուռ տվեց ոջախում և դուրն ամուր խփելով, դուրս վազեց։

— Ես կհեռանամ Ֆրեյբերգից,—ասաց նա ընկերներին,—այլևս չեմ կարող սովորել Հենկելի մոտ։ Մեկ որ եղ այնտեղ կհասցնի, որ կծեծեմ Նրան, չնայելով որ լեռնային խորհրդական է։

—Ե, համբերիր, բարեկամ,—խնդրում էր Վինոգրադովը, մեկ էլ շուտ սովորենք, իսկ հետո կերևքս էլ Նրանից կհեռանանք։ Ցերը մենք գիտակցանենք դառնանք, ճեմարանը, լերևի, մեզ փող կտա։

— Ո՞ւր կգնաս, վերադարձ կապրես, ինքդ դատիր—համոզում էր Լոմոնոսովին Ռայզերը։

— Ֆրեյբերգում մոչ ուտելու բան կա, մոչ սովորելու,—համառ կերպով պնդում էր Լոմոնոսովը։ Մոր հանքագործի մոտ ասես, հանքերի մասին ավելի բան կիմանաս, քան Հենկելի մոտ։ Նա միայն գիտե լատիներեն պիտակները դրել, իսկ քիմիայից և հանքաբանությունից մոչ մի խելքը գլխին բան չգիտե։

Բայց և այնպես ընկերները համոզեցին, որ ներողություն խնդրի Հենկելից։ Լոմոնոսովն առաջվա պես սկսեց պարապմունքների գնալ։ Բայց յերեք շաբաթ չեր անցել, յերբ Հենկելը հայտարարեց ուսանողներին, թե այսուհետև ինքը Նրանց առաջվանից ավելի քիչ փող պետք տա ուտելու համար—ընդամենը յերեքական դուշ որական։ Ուսանողները յերկար խորհրդակցում էին Վինոգրադովի սենյակում։ Վերջապես վճռեցին գնալ Հենկելի մոտ և հայտնել Նրան, որ այդ փողով ապրել չի կարելի։

— Դուք, ինչ և, կարծում եք յես թուլ կտամ, որ խնդույքներ սարքեք,—գոռաց Հենկելը՝ լսելով Նրանց խնդիրը։ Գուցե դուք կարծել եք, թե յես իմ սեփական գրպանից պետք և կերակրեմ ձեզ։ Նամակ գրեցեք Ռուսաստան, գուցե ձեր կայսրուհին ձեզ վոդոժություն կտա։

Լոմոնոսովը մի քայլ արեց դեպի առաջ.

— Մենք վաղորմության չենք յակիը Մենք մեր փողն ենք պահանջում,— ասաց նա և չորացած շրթունքներն սկսեց լիզել։

— Ձեր փողը, իսկ ինչ գործի ին այդ փողերը. յես չեմ տեսել,— ծիծաղեց Հենկելը։

— Ճիշտ չե,— գոռաց Լոմոնոսովը.— դուք մեր փողերով ձեր անհարգելի գործերն եք գնում և դրանց համար յերեք անգամ ավելի թանգ եք վճարում. Դուք մեզնից անհայկի համար այնքան եք վերցնում, վորքան վոչ մի սենյակ չարժե քաղաքում. Դուք մեզ հալածում եք վճարել ձեր դասերի համար, իսկ դուք փոխանակ սովորեցնելու մեզ, միայն շահախնդում եք։

Հենկելը բազկաթոռից վեր թռավ.

— Անպիտան, լակոտ, դուրս այստեղից, դուրս, խնկուն.— գոռաց նա և բռունցքներով ընկավ ուսանողի վրա։ Լոմոնոսովը նույնպես ձեռքը բարձրացրեց, սակայն ընկերները նրա ձեռքը բռնեցին։ Նրանք շտապեցին հեռացնել նրան լաբորատորիայից։ Հենկելը նրանց յետևից վազեց և լուտանքները թափելով հրեց նրա մեջքին։

Հենց նույն յերեկոյան Լոմոնոսովն իրերը դարսեց իր ժամպրի մեջ ու հեռացավ Ցրնչքերպից։ Ընկերները նրան հրաժեշտ տալիս յերդվեցին միշտ բարեկամ մնալ։

— Ո՞ւր և արդյոք մեր Միխայլան,— հավանորեն անտուն թափառում է. ճիշտ տաք գլուխ,— հիշում եր հաճախ Վինոգրադովը։

Ճիշտ վոր, Լոմոնոսովն անտուն թափառում եր Գերմանիայում։ Նա վոտքով անցավ Հոլանդիա, վերադարձավ Մարբուրգ, և յերկար աշխատներից հետո վերջապես գնաց Ռուսաստան։

Վինոգրադովն ու Ռայդերը դեռ չորս տարի ևս ապրեցին Ցրնչքերպում։ Հենկելը շուտով զադարեցրեց նրանց հետ պատռպտելը և ուղարկեց նրանց աշխատելու լեռնային հանքերում։ Ագատ արձակվելու համար վորքան ուրախացան յերիտասարդները։ Նրանք առաջվա պես քիչ փող ունեին, բայց հաճույքով աշխատելով, կարիքը մոռանում էին։

Ուսանողները լեռներում իրենց հետ ուսուցիչներ գտան։ Դրանք էին լեռնագործները, հանքափորները, հալոցապաններն, վորոնք թեպետ լատիներեն չեին խոսում, բայց փոխարենն աչքով տարբերում էին բոլոր հանքային տեսակները և գիտեին նրանց հատկությունները վոչ թե գրքերից, այլ փորձից։ Ուսանողները նրանցից սովորեցին բանալ հանքատները, ճանաչել հանքերը, լեռնային աշխատանքների համար մեքենաները և մետաղներ հալելու հետ հալոցները շինելը։ Ռայդերը լեռնային քարերի մի հավաքածու կազմեց, վորը պահում եր աչքի լույսի պես։ Վինոգրադովը սիրից հնոցների մոտ աշխատանքը—կրակի փայլը, թոցի բվվոցը, հալված մետաղի կաթիկ շիթը։

Ուսանողները գիտուն քիմիկոս-հանքաբաններ դարձան։ Նույնիսկ ինքը Հենկելը սիրտ չեր անում նրանց հետ վիճել։ Նրանք այժմ Հենկելից ավելի գիտեին։

ԹԱՆՑԱԿՆԵՐԻ ԿԱՊՈՑ

Նավայի կողմերում, Ցոնտաննայա գետի վրա ընկած կամրջի մոտ ամեն տեսակ ժարգոնի եյին խոսնվել։ Այնտեղ վառած ճրագներով ծածկված բարձր դռներին եյին ժտենում պալատական վոսկեզոծ կառքեր։

— Մի կոմ-քաշվիր, ճանապարհ տուր,— ամբողջ կոկորդով գոռում եյին ծածանվող ժապավեններով ու փետուրներով զարդարված սուրհանդակները, վորոնք անգին վոստյաններով վազում եյին կառքերի առջևից։ Փետրափնջերը ճոճում եյին պպզդուն ձիերի գլխներին, վոսկեզոծ անիվները վորոտում եյին տախտակե սալարկի վրա, կառքի յետևամասում արձանացած հայդուկների կարժիր բաճկոնները ծածանվում եյին քամուց։

— Թագուհին, թագուհին և գալիս,— գոռաց մեկը և մարմնեղ վոստիկանները պաշարեցին ամբոխին։ Ճանապարհի վրա արևի պես պպզդուն մի կառք յերևաց։ Նրա վոսկեզոծ պատերում հայելիներ եյին զրված։ Հայելիները փայլ եյին տալիս նույնիսկ անվաճաղերին։ Ապակու յետևում յերևում եր ժանյակներն և ժապավենների մի կապոց, վոր ծածկված եր ադամանդի փայլով։ Դա Ցելիզավետա Թագուհին եր՝ Պետրոսի աղջիկը։

— Ծունկի գալ,— գոռաց վոստիկանը և գետին փռվից։ Նրա յետևից էլ մյուսները—վաճառուհիները, արհեստավորները, հաշմանդամները և հասարակ վաճառականը, և կապոցը զգացողին զցած հնոռու տեղից յեկած զեղջուկը փորի վրա ընկած սառը, ցեխոտ լճակները, վորոնցից աշնանը Նեվայի շրջանում քիչ չեն լինում։

Ժանյակների կապոցով կառքը զարպասից նեբս սլացավ։

Պալատում հավաքապակե ջահերը փայլում եյին ժոմերի լույսից։ Մարմարե վերնատանը նվագում եր կոմս Ռազումովսկու ճորտ յերաժիշտների խումբը։ Ցելիզավետա Թագուհին տոնում եր այս շքեղ պալատի կառուցման տարեդարձը։ Դեռ նոր զարդարած դահլիճներում խոնվել եյին պալատականները։

Ամենուրեք ցուլք ու փայլ եր, ժետաքսի խշխշոց։

Թավշե վարագույրը յետ գնալով, բացից բեմը։ Առաստաղից թռկերով իջեցրին մի կարմրայտ, շեկ կեղծամով յերիտասարդի, ձեռքին քնար։ Նա հունական ատլաս Ապոլոնին եր նկարագրում։

Հնչեց ձայնով նա արտասանեց Ցելիզավետային գովերգող

վոտանավորները։ Հետո կրկին առաստաղից ցած իջան գույնզգույն հագուստներով ինն աղջիկներ՝ վորը շրխկոցով, վորը ձնաբքին դիմակ։ Դրանք ինքը մուտանեըն էին։ Նրանք նույնպես Ցեւիոզվատային առողջության էին մրցում և մի տեսակ պար էին պարում՝ յերկյուղով բեմի յեւկեն նայելով, վորտեղից ֆրանսիացի պարուսույցն սպառնում էր ահագին դագանակով։

Սկուտեղների ծանրությունից սեղանները կոտրվում էին։ Ինչ ասես, վոր չկար,—ներսը ընկույզ լցրած հնդկահավեր, հորթի ականջներ, արջի յեփած թաթեր, իշայծյամի շրթունքներ, տապակած բրինձ և ծովատառեխի այտեր։ Թագուհու և նրա նախատարների առջեւ անոթները դատ վոսկուց էին։ Սենյակի մեջտեղում աչքի յեր ընկնում վոսկեղեն մի փոքրիկ սար աղամանդե «Ցե» տառով։ Բանկետը յերեք ժամ տեւեց։

Կուշտ ուտել խմելուց հետո հյուրերն սկսեցին պատառում յեղած թանգարժեք իրերը գողալ—և՛ ֆրանսիական մետաքսե կտորյեր, և մարմարե արձանները, և՛ հաճախակի ջահերը, իսկ հետո էլ սկսեցին պատմել, թե աշխարհում էլի ինչպիսի զարմանահրաշ բաներ են լինում։

Մեկը Թագուհուն ասել եր, թե Ամստերդամում մի վաճառականի մոտ մի փոքրիկ կանաչ կապիկ կա—այնքան վոքր, վոր ընկույզի մեջ կմտնի։

Թագուհին—համառ ու քմահաճ՝ զարհամ դեպի կոմս Վորոնցովը։

— Ա՛յ, յեթե այդ կապիկը ձեռք բերեյինք՝ վորպես պալատի զարդարանք։

— Կատարված կլինի, մայր-Թագուհի,—իր կեղծամը խոնարհեցնելով ասաց Վորոնցովը։

— Իսկ դուք, Գրաֆ, վոչինչ չեք ասի մեր պալատի մասին,—ասաց Թագուհին սաքսոնական յերիտասարդ դեսպանին, վոր ամբողջ գիշերը լուռ եր ու վոչինչ չեր գովում։—Կարծում եմ, վոր ձեզ մոտ, Սաքսոնիայում այսպիսի փայլ ու պերճանք յերազել անգամ չի կարելի։

Սաքսոնացին բորբոքվեց։

— Ձիշտ է, Թագուհի, ռուսական պալատը վոսկով ու թանգագին քարերով Ցեվրոպայի բոլոր պալատներից հարուստ է։ Ձիշտ է, Թագուհի, սաքսոնական Թագավորը վոսկե սկուտեղներում չի ուտում, այլ հասարակ ճենապակե ամաններում, վորոնց նման գեղեցիկ ու վայելչությունը վոչ վոք չունի։ Ցեթե կամ մոտ ճենապակե անոթներ տեսել եմ, ապա պրուսք բոլորը սաքսոնական են, կրում են սաքսոնական գինանշան՝ յերկու սրերով, իսկ ռուսական այդպիսի բան չեմ տեսել։

Ցեվիոզվատայի սև հոնքերը կամ գնացին նա վիրավորվեց։

— Կոմս, ինչու՞ մինչև այժմ Պետերբուրգում պրցկվինի դորձարան չի հիմնված,—դարձյալ հարցրեց նա կոմս Ռազումովսկուն։

— Կատարված կլինի, մայր-թագուհի,— պատասխանից Ռազումովսկին, իր ալ շրթունքների ժպիտը թագցնելով ծանրակշիռ ոճիքում,— կատարված կլինի։ Սևիական պորցելինե անոթներում կուտես, ուրիշ թագավորների ևս նվիր կուղարկես մայր-թագուհի։

Ցմահ թագուհին այսպես վճռեց ամսաթղթամյան վաճառակաների փոքրիկ կանաչ կապիկի և ռուսական ճենապակեգործարանի բախտը։ Դարպասների վրևում թշշալով մինչև վերջը վառվեցին ճրագները։ Հայդուկներն ու կառապանները խռնվեցին սրահների մոտ և իրենց տեղերին եկին սպասում։ Նվագի շրջանը դարպասների յետեից սև, բացիրախ անապատի պես եր յերևում։ Ծառերի արանքից տեղ-տեղ կրակ եր փայլում։

Այնտեղ և ամբողջ անգղին Ռուսաստանում հաշիատավորական մարդուկներըդ արյուն քրտինքով գոռշներ եկին աշխատում, քաղցած ու մրսելով, վորպեսզի տան դաժան հարկահավաքներին, վորպեսզի պերճաշուք թագուհին իրեն համար մի փառահեղ պալատ ևս կառուցեր, վոր նա իրեն համար հինգհազարերորդ հագուստը պատվիրեր (այդ ժամանակ նա չորս հազար հագուստ ուներ), վորպեսզի կովս Ռազումովսկին վոսկե անոթներով շքեղ խնջույքներ սարքեր։

Մի այսպիսի խնճույքի վրա ծախսած փողով մեկ ամբողջ տարի, մեկ գյուղ կարելի յեր կերակրել։

ՑԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԻՏՆԱԿԱՆՆԵՐ

Մի ամառային տաք յերեկո հոլանդական նավի կապրջանկներով պատերբուրգյան գետափ դուրս յեկան յերկու յերես ասարդ՝ վաիտ ճանապարհորդական տոպրակներով։ Վինոգրադովն ու Ռայդկերն եկին։ Նրանք Գերմանիայից բերել եկին գիտություններին բավական շատ պաշար, ռուսական յերկրի համար աշխատելու մեծ ցանկությունն և յերիտասարդ քաղցած ստամոքսներ։

Նրանք ագահ աչքերով եկին նայում Պետերբուրգի վրա։ Նեվայի ափերը մայրամուտի ճառագայթներում պարզարված եկին թվում նրանց։ Վասիլևսկի կղզում ընկած մեծ շինվածքների պատուհանները վառվում եկին։ Դիմացի ափում «Նոր Հոլանդիայի» աղյուսե պատերը արնագույն կարմրին եկին տալիս։ Հեռվում վոսկեգույն փայլում եր Ծովային վարչության շենքի սուր ծայրը։

Ընկերները գնացին իրենց բարեկամ Լոմոնոսովին փնտռելու։ Նա սրանցից յերկու տարի առաջ էր հայրենիք վերադարձել և այժմ աշխատում էր գիտությունների ճեմարանում։

Ճեմարանական տան խոնավ ու մութ սառիճանները նրանց տարան դեպի յերկու լսելիներ, ուր ապրում էր Լոմոնոսովը։

Մխաիլոն ծեծ ամպրում թղթերով ծանրաբեռնված սեղանի յետևից դիմավորելու յելավ տանտերը՝ ուրախ կերպով ձեռքը նրանց մեկնելով։ Պատուհանից դուրս փայլում էր Նեվան։

Ցերը հյուրերը նստեցին ծուռ վոռնիերով կիսաթոռակների վրա, Ռայդերն աչքի անցրեց աղքատիկ սենյակը և ասաց.

— Ինչ ասեմ, Միխայլա, ասում են դու այժմ թագավորական ծառայող ես, անվանն էլ դարձել, իսկ ապրուստիդ նայելով, չի կարելի այդ ասել։ Գերմանիայի ուսանողներն անգամ ավելի մաքուր են ապրում։

Լոմոնոսովը ծիծաղեց.

— Ճեմարանը փող չունի։ Գիտես ինչով են աշխատավարձ տալիս—գրքերով։ Միայն ինձ չէ, հին գիտուններին՝ նույնպես։ Տպարանից գերք վերցրու և շուկայում վաճառիր։ Իսկ գիրքը մեղնում գնայուն ապրանք չէ։ Գրատուն մարդիկ քիչ են։ Ովքիր են գրքերի սիրահարները—ուսանողներն ու պրոֆեսորները. նրանք իրենք փող չունեն, իսկ մեր վաճառականները միայն աստվածային գրքեր են կարդում, վոչ թե պետական։ Այ, դրա համար էլ նատած ենք գրքերով, բայց առանց փողի։

— Միշա, իսկ հիշում ես, յերազում էիր Պետերբուրգում քիմիական լաբորատորիա հիմնել։ Բան դուրս յեկավ,—հուզված հարցրեց Վինոգրադովը, և առանց պատասխանի սպասելու ավելացրեց.—վերցրու ինձ լաբորատորիադ,—շատ-շատ եմ ուզում քիմիայի գծով աշխատել։ Ցես, գիտես, Ֆրիյերգուզում սկսել եյի փորձեր անել։

Լոմոնոսովը անհույս կերպով ձեռքը թափ տվեց.

— Դիմում տվեցի, ճեմարանից լաբորատորիա բանալու թույլտվություն խնդրեցի։ Ցերևակայիր, առաջին լաբորատորիան կլիներ Ռուսաստանում։ Այնը մենք, քիմիկոսներս աշխատելու տեղ չունենք. վոչ կշռոք կա, վոչ անթներ, վոչինչ չկա։

— Հետո։

— Պատասխանը մեկ եր.—փող չկա։ Գիտության համար մենք փող չունենք, Միայն Ի՞նչ կարող ես անել։ Ցես ձկան պես խփվում եմ սառույցի, վոր կարողանամ ճեմարանը շարժել։ Նրանք՝ քնկոտ ճանճերի պես միայն պարզևների ու աստիճանների մասին են մտածում։ Ի՜հ, խոսել չարժի...

Ցերկատասարդները նստած եյին ջուրն ընկածների պես։

— Ինչո՞ւ էլին մեզ սովորեցնում,— հանդարտ հարցրեց Վինոգրադովը,— յոթն աշխատել չի կարելի։

Լոմոնոսովը ծիծաղեց.

— Աշխատել կարելի չէ, Միտյա, միայն շատ զժվար։ Մենք զբաղացած մարդիկ քիչ ունենք, իսկ մեր ազնվատոհմ իշխանները, վրանք բոլոր գործերն են պատուհասում, իրենք հազիվ զրագետ են։ Դե, բավական է, ուզում եք յես իմ նոր վոտանավորները կարդամ։

— Կարդա, կարդա, աղավնյակ։

Լոմոնոսովը դարակից վերցրեց զոշ թղթից մի տետրակ և սկսեց կարդալ։

Ընթերցումից նրա աչքերը կենդանացան։ Զափազած, հնչուն տողերը խոսում էին գեղեցիկ յեվրոպի մասին, նրա խոր ծովերի, անհամար աստղերի, հրաշալի վիտուէյունների մասին, վորոնցով մարդիկ պարապում են։ Նա կարդաց.

О, յեվրոպիկ ուսմունքներ,
Ձեռք ու հայացք մեկնեցեք
Ծրաչան, մինչ խոր հեռուներ.
Անցեք ցամաք, ջրանդունդ,
Անապատներ, խոր անտառ.
Ոիֆյան խորք ու զագաթներ.
Ցեվ յերկնային բարձունքներ.
Քննեցեք ամենուր, ամեն ժամ
Ինչ վոր մեծ և գեղեցիկ։

Ցերկրի ընդերքը, դու, քիմիա,
Հայացքդ սրտբոյամբ թափանցիր
Ցեվ ինչ ունի այնտեղ Ռուսիան,
Քերիր, զանձերը բացիր։

Վինոգրադովի սիրտը թռչկոտում էր։ Ապրելը լավ էր։ Արշալույսը պատուհանից լայն կիրպով յերևում էր, և ծովային վարչությանշենքի ծայրը վոսկեզոծվում էր վերջապես սպիտակ աղջամղջում։

ԾԱՂՐԱԾՈՒՆ

«... Ցես մինչև այժմ արտասահմանից բերված լոմոնային ինժեներներից չգիտեմ վորևե մեկին, վոր լոմոնային գիտության բոլոր մասերում անցներ Վինոգրադովից, նույնիսկ շատերը հավասար էլ չեն յեղել նրանց»— գրում էր պետերբուրգյան բերգ-կոլեգիայի նախագահը յեր իատասարդ Վինոգրադովին քննելուց հետո։

Բերգ-կոլեգիան հսկում էր լոմոնային գործին, հողից հանած հանքերին, նրանցից ստացվող հալվուն, ոգտակար հանքեր ու կավեր փնտռելուն։

Վինոգրադովը, որը պետերբուրգյան գիտություններին զարմացրել էր իր գիտելիքներով, լոմոնոսովյան ճարտարագետի կոչում ստացավ։ Բայց գեռ զբաղմունք չկային տվել։

Ոգևորվում ամառային ազատ օրերից, նա թափառում էր Պետերբուրգում։ Սպիտակ գիշերները նրան քնել չէին թողնում։ Նա քաղաքում ամեն տեղ նույն բանն էր տեսնում։

Հարստության և բարեկեցիկ կյանքի մենաշնորհ կղզիները էին սակավաթիվ պալատները և աղնվատոհմիկների տները—կղզիները՝ ըշխարության և վայելքների անապին ծովում։

Վորքան նա ավելի չոր հեռանում ծովային վարչությունից, այնքան ավելի չոր խրվում ուղիների չեռուում ընկած ճահճուտ, անտառային ճանապարհները, այնքան ավելի չոր աչքի ընկնում Պետերբուրգյան շաշտատանքային մարդկանց աղքատությունը։

Մոսյե Ծուռուիկ գիտնափորձերն ապատան էին գալ ճահիճներում. Նավաշինարաններում աշխատում էին ցեխոտ, կիսաեռելի ատաղձագործներ։ Արշալույսից վերջալույս նրանք աշխատում էին կացիններով. վորպեսզի չիրկոյան վայր թափվին հենց նույն տեղում, վորտեղ աշխատել էին, ժաշված խարիների վրա և ժոռացվին խոր քնի մեջ։ Նավայի չերկարությամբ բուրլակները քաշում էին թոկավոր բևեռանավերը։ Ծառված, կեղտից հյուսված մազերն ընկնում էին նրանց աչքերին։ Գարանոցի մկաննները զոռ տալուց լցվել քիչ էր մնում պատռվելին։ Նրանք արյուն էին թքում։

Այնտեղ մարդկանց մեջքով քար ու ավազ էին կրում շենքերի համար։ Այստեղ մուրացկանները՝ քաղցած աչքերով, սարսափելի ցընցոտիներ հագած, իրենց վիրքերն էին ցույց տալիս ու զոռ աղերսում Ուղեփակների չեռուում ցցկր էին չերևում։ Նրանց վրայի գլխատվածների գլուխները կապտագույն շրթունքներ էին ցուցադրում։ Իսկ պալատներում փայլում էին կրակները, հնչում էր չերաժշտությունը, և վ. սկիվառ կառքերները սլանում էին դեպի պալատների մուտքերը և իրենց փափուկ ներսից էլեգնում էին ազամանդներով վայլող պալատականներին։

Վինոգրադովը թափառում էր քաղաքում ու մտածում. «Ասում են Թագուհի Աննա Իոաննովնան մի ծաղրածու չե ունեցել։ Նա այսպես էր հաղնվում.—մեկ վոտքին պատռված տրեխներ ու ցեխոտ փաթաթան էր, մյուս վոտքին մեռաքսե գուլպա ու արծաթե կապավոր կեղտած տուֆլի։ Հազուստի կեսը խորհրդ ու հոշտ կտորից

եր, իսկ ժյուլ կեսը՝ դիպակից ու թավիշից։ Նրա գլխի մի կողմում մետաքսե հյուսված խոպոպներ էին՝ կարմիր ներկած այտերի վրա, իսկ մյուսում՝ բիզ-բիզ էին կանգնել կեղտոտ մազափնջեր մրոտած դեմքի վրա։ Վողջ Պետերբուրգն արդյոք այսպիսի մի թագավորական ծաղրածու չէր։

Վինոգրադովը գալիս եր Լոմոնոսովի մոտ։ Մյուս յերիտասարդ գիտնականների հետ միասին նրանք վիճում, կարդում, փորձեր էին անում։ Ցերբենի Լոմոնոսովին իր նոր վոտանավորներն եր կարդում։

Այդ ժամանակ Վինոգրադովը մոռանում եր սարսափելի ծաղրածուին։

ԲԱՐՈՆ ՁԵՐԿԱՍՈՎԸ

Վինոգրադովը հրաման ստացավ գնալ Մոսկվա և ներկայանալ բարոն Ձերկասովին—նորին մեծության առանձնասենյակի կառավարչին։

Տվերսկայա փողոցի վրա գտնվող Ձերկասովի տունը մթնավուն ու խեղդուկ եր։

Սրահներում շարված էին անգրկին անդուկներ։ Անկյուններում քչփչում էին ինչ-որ պառավ կանայք՝ կանացի հին զգեստներով։

Բարոն Ձերկասովը, մի սևահոնք հաստ մարդ, դուրս յեկավ Վինոգրադովի մոտ յուղոտած մետաքսե խալաթով, յերեկվա խնջույքից դեռ ուռած դեմքով։ Նա մռայլ կերպով նայեց յերիտասարդ գիտնականի վրա և հրամայեց, որ իրեն համար կվաս բերեն։ Նա չմոռացավ նաև Վինոգրադովին հրավիրել նստելու։

— Նորին կայսերական մեծությունը կամենում է Պետերբուրգում պերցելինյան գործարան հիմնել,—մռայլ կերպով ասաց Ձերկասովը, կվասը վայելելով,—այդ գործարանի համար մենք Սոսկվոլմից գերմանացի վարպետ ենք բերել, որը պորցելինի գործում շատ հմուտ է։ Վորպեսզի պորցելինի գաղտնիքը ռուսական ձեռքերում լինի և այս վարպետը չմոռանի այդ բանը թագցնել կամ հետ տանել ու մեզ չորքարին թողնել, վճռեցինք քեզ այդ գործին կցել։ Նայիր, սովորիր, նկատիր, թե վարպետն ինչպես է անոթ շինում և—այստեղ Ձերկասովը բռունցքով սեղանին խփեց,— գոտկին նորին մեծության համար ճենապակի նվեր պատրաստ լինի։ Դեմ։

Վինոգրադովը լուռ շուռ յեկավ դեպի դուռը։

— Վոչ, կանգնիր։ Դրասենյակից քոռքի վերցրու, այնտեղ էլ կիմանաս, թե ինչ պետք է անես։ Ցավ բարոն Ձերկասովը գոհ նրա-

նով, որ մի գործից թեթևացավ, գնաց իր թղթախազի պարտքերը հաշվելու և պատրաստվելու հրավիրատախտակին։

Վինոգրադովը գնաց նրա գրասենյակը, որտեղ ակնոցի յուղը փոխում էին կրող վալեցած գրպիրը հայտնեց, թե նա պետք է գնա Դժել

Դ ժ ե լ

Հին ուրերից սկսած դժելյան բրուտները Մոսկվա եկին բերում ծախելու իրենց ձեռքով պատրաստած կճուճներ, ապուրամաններ, փարչեր։ Նրանք Մոսկվայի շուկաները լցնում էին ուրախ կատակներով և կարմրագարչնագույն, փայլուն անոթների զունդյունով։

Մոսկվայի մոտ գտնվող դժելյան ձորակներում շատ կային դռնապան ունեցած կավերի պիտանի բրուտական գործի համար։ Վաճառական Աֆանասի Գրիբենշչիկովը իր հաճախապահ ամանեղենի համար այստեղից եր կավ վերցնում։ Մոսկվայից սայլակով յեկած Վինոգրադովին նա հանդիպեց այն խրճիթի մոտ, որ հատկացրած եր գրոշ յեկողներին։

— Ե, բարև ձեզ,—ասաց նա,—կավի՞ յիք յեկել. այլպես, այդպես, ճենապակու գործարան պետք է հիմնեք։

Դե, դե, տեսանենք։ Մենք խավար ու անուս մարդիկ ենք, իսկ դուք գերմանական ձևով եք սովորել Գրբերն էլ ձեռ՛ներից են։

Գրբենշչիկովը հաղարում եր իր սպիտակ փորքրիկ մորուքը, աչքերն էլ անբարյացակամ ու խորամանկ կերպով փայլում էին թավ հոնքերի տակից։

Վինոգ ադովը հիշեց, որ Գրբենշչիկովին ինքն և ուզիկել ճենապակի շինել, բայց բան չի գուրս յեկել։ Այժմ նա գժտող եր, որ այդ գործն ուրիշների յեր հանձնված։

— Իսկ գերմանացի վարպետն յեկել է,—հարցրեց Վինոգրադովը։

— Ինչպես չե, ինչպես չե, ուռած նստած, վոտները կախ, ձեզ և սպասում,—արդեն անբարյացակամ կերպով պատասխանեց Գրբենշչիկովը և ժամով խրճիթը Վինոգրադովը հետևեց նրան։

Ախ, ժայն հերը,—նրան ընդառաջ նետվեց վզին շարֆ փաթաթած մի նիհար մարդ։—Ախ, ժայն հերը, վորքան ուրախ եմ, որ վերջապես դուք յեկաք. այստեղ վոչ-վոք գերմաներեն չի հասկանում, բոլորն էլ վայրենիներ են։ Այս ծերուկին, մեր մեջ ասած, ուզղակի խորթում է ինձ,—գերմաներեն բղըալորից անծանոթը։—Իմ անունը Գունգեր է, Կոնրադ Գունգեր,—ասաց նա՝ սեղմելով Վինոգրադովի մեկնած ձեռքը։—Ձեռ արկանիսա*) եմ, սաքսոնական ճենապակու հնարողը։ Բարեկամներ կլինենք։

— Ինչպես,—հարցրեց Վինոգրադովը,—չե՞ որ ճենապակու գանգ-

*) Արկանիսա (լատ.)—գաղտնի նյութեր վաճառող։ Ծ. Բ.

վածը հնարողին, ինչպես լսել եմ, Իոհանն Բյոտգեր են անվանում։

— Ցեխ ենք միասին, միասին ենք աշխատել,—շտապից հայտնել Գուենդերը։ Ախ, ինչ բարեկամ եր։ Ցերեկն ինձ գրկում ու ասում եր. «Ցեխն գու չլինեիր, կոնդրատ, կես յերկիք ճենապակի չեյի լինի»։ Ավազ, նա կենդանի չե։—Գուենդերը թաշկինակով աչքերը սրբեց։

— Դե, փոսերը պետք է նայենք,—կոպիտ կերպով հարցրեց Գրեբենշչիկովը. սատանի ականջը խուլ. ձյուն կգա, այն ժամանակ կավ հանելը անհարմար կլինի։

Նրանք յերեքն էլ խրճիթից դուրս յեկան ու գնացին դեպի փոսերը, վորտեղից կավ եր հանվում։

«ՈՃԱՌԱՅԻՆ» ՅԵՎ «ԱՎԱԶԱՅԻՆ»

Մեծ սրահում նրանք տափաններ ու գուռեր գրին՝ կավը լվանալու համար։ Վինոգրադովը վոտքով ու ձիով պտտեց բոլոր փոսերը, վորտեղից կավ եյին սանում։ Շվաքարանի տակ չոր կավի կտորներ կային դարսած։

Նրանք այնպիսի կավ եյին փնտռում, վորից կարելի լիներ ճենապակի պատրաստել։ Գուենդերին ճենտռու յերկաց ծիլցովկա գյուղի սպիտակ կավը, վորին «ոճառային» եյին անվանում։

— Սա ճենապակու համար է,—ասաց Գուենդերը։

Վինոգրադովը զարմացավ։ Լվանալով, այս կավից շատ գժվար կլինեը ավազը բաժանել։ Մյուս կավից՝ «ավազայինից» ավազը հեշտ եր բաժանվում։

— Դուք վոչինչ չեք հասկանում, յերիտասարդ,—սառը կերպով ասաց Գուենդերը։ Թուլյ ավելը, վոր յես ավելի լավ իմանամ։ Ցեխ եմ ճենապակու գործարաններ շինել Վիեննայում, Վենետիկում և Ստոկհոլմում։ Ձեր «ավազայինը» պիտանի յե միայն աղյուսների համար։—Ցելնա Վինոգրադովի միջոցով պատվիրեց Գրեբենշչիկովին, վոր նա պատրաստի և Պետերբուրգ ուղարկի յերկու հազար փութ «ոճառային» և վեց հազար փութ «ավազային»։

Գրեբենշչիկովը ձեռքը թափ ավեց։

— Հո չի գժվել ք գործակալին։ Մեզնում յերբեք այդչափ սեծաքանակ կավ չեն հանել։ Ցեխ ինչպես հանել. ձմեռ և աշնանն։

Գուենդերը պահանջում եր, Գրեբենշչիկովը չեր համաձայնվում։ Ոգնության յեկավ Վինոգրադովը։ Դեռ ամառվանից գժելցի բրուտներ կավ ուղարկած։ Վորքան գառն, այնքան էլ գնեցին և ուղարկեցին Պետերբուրգ։

ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գուենդերն ու Վինոգրադովը կավի լվացումը վերջացնելուց հետո նույնպես ճանապարհ ընկան դեպի Պետերբուրգ։ Գնում եյին սահնակով, ծննդյան խիստ սառնամանիքներին։ Նրանք գնում եյին ինն որ շաբունակ։

Գունդերը աստիճ մրսում եր, փաթաթվել եր մուշտակի մեջ և առանց հոգնելու հայհոյում եր Ռուսաստանին և ռուսներին։ Նրան թվում եր, թե ամենքը նրա հետ վատ են վարվում։

— Ամոռանաք, վոր ես սաքսոնական թագավորի արկանիստն եմ,— ասում եր նա,— սովորել եմ, վոր ինձ հարգենն։ Ցավրոպայի վոր թագավորն ասես չնորհակալ կլինի, յեթե ես նրան իմ գաղտնիքն առաջարկեմ։

Հետո Գունդերն սկսեց ննջել և անսպասելի ցնցումից զարթնելով ասաց.

— Ցես դիմում եմ տվել Ցելլեռավետա թագուհուն, վոր նա իմ արած գյուտի համար ինձ վոսկե շքաղրամ շնորհի։ Ի՞նչ եք կարծում — կտանամ այդ շնորհը։

— Բայց մենք դեռ ռուսական կալվից ձենապակին չենք ղինել,— պատասխանեց Վինոգրադովը։

Շուրջը ձյունապատ հարթություն եր։ Ձյունի մեջ գորշին եյին տալիս մինավոր խոճուկ ու փոքրիկ գյուղեր։ Ճանապարհին ցիրկը մեր ճամփորդներին գյուղացիները եյին պատահում, վորոնք իրենց նիհար ձիերով վորևե բեռ եյին տանում քաղաք։

Գահակ գինվորները տաժանակիրներ եյին տանում։ Նրանց ցըրտից կապած ձիհների վրա շղթաներ եյին դնդում։ Նրանցից մի քանի նիհար դնդերը յերկաթով եյին գրոշմած, իսկ քթածակերը պոկած եյին։

Մի փոստատան բակում տաժանակիրների մի խմբի պատահելով՝ Վինոգրադովը ծեր բանտարկյալին հարցրեց, թե նրան ինչու յեն գրոշմել։

— Վոչ մեկին գրոշմել են, այլև բրերով մեջքից յերեք անգամ մորթ են պոկել, վորովհետև աղային վրա ձեռք եմ բարձրացրել — պատասխանեց տաժանակիրը։

— Իսկ ի՞նչու համար։

— Նա հրամայել եր, վոր շների քըսատանի աղայի վրա։ Իսկ շները շատ կատաղի եյին, արջի վրա դնացող։ Ցդաս աղային տանն սպասավոր եր, մի բան նրա սրտովը չեր արել։ Այ թե ինչու համար։

Գիշերները ձյունապատ հարթությունների վրա աստղեր եյին ճառագում։ Հեռվում գայլեր եյին վոռնում։ Սահնակում, ննջող Գունդերի կողքին նստած, Վինոգրադովը մտածում եր ռուսական ահագին գժբախտ յերկրի մասին։

Ցերբեմն, յերկնքին նայելիս, հիշում եր Լոմոնոսովի վոտանավորն ու ցածր ձայնով մրմնջում եր ինքն իրեն.

Որն և ծածկում իր գիշերը,
Ծավալ գիշերը՝ գաշտերը.
Ծաբիրը բանեց սև ու ժանր,

Շաղերը մեզնից կորան չուտ։
Անհնձանը բացվեց, տասներ են լեցուն,
Աստղերին թիվ չկա, անհունների նման։

Այդ ժամանակ կյանքը դյուրին կը դառնում։

ԱՂՅՈՒՍԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

— Բայց այս անկարելի չե. սա սարսափելի չե,—զայրացած գոչում էր Գունգերը՝ վազվզելով գետանոցածածկ խրճիթի սենյակում։—Ձեռ նրա համար չեմ լեկել այստեղ, որ ինձ ուզարկեն աշխարհի ծայրը, մի մութ տեղ, մի ճահճուտ Ձեվ այս, ասում եր, գործարանի տեղ է։ Ձենասակու գործարանը պատերին մոտ պետք է լինի։ Ձես այնտեղ կարող կլինեիք փայլել իմ արվեստով։ Ձես լավ հասարակության եմ տվող, ձես պատանիներում եմ տարել, իսկ ինձ ինչ-որ փոս են կոխել։ Ձես այդ չեմ հանդուրժի, ձես խնդրեմ բողոք կգրեմ կայսրուհուն։

Ձեվ մի թիրթ թուղթ վերցնելով՝ Գունգերն սկսեց գրել զայրույթով, փետուրն գրչով թանաքը շաղ տալով։

Նրան և Վինոգրադովին ուղարկեցին աղյուսի գործարաններըմ, որոնք կառուցված եյին դեռ Պետրոս Մեծագործի որով, Նեվայի ձախ ափին, մի ճահճուտ անտառակում։ Ձենասակու գործարանը նրանք այստեղ պետք է հիմնեյին։

Վինոգրադովը նույնպես տխուր եր։ Տասը վերստ հանապարհ—աշխատային անձրևներից ժիանպամայն անանցանելի—բաժանում եր նրան քաղաքից, զբոսից, մյուս յերիտասարդ պիտանականներից և իր բարեկամ Լոմոնոսովից։ Բայց գլխավորն եր, որ քան կարելի յեր, շուտ սկսել գործը, շուտ ձենասակի ընկել, այն ժամանակ գուցե ձենասակու գործատերը քաղաք փոխադրեն, յեթե Ցեվիլամետան վոզովամոբար վերաբերվի։

Նա և Գունգերը բնակվեցին գերանածածկ խրճիթի մի կեսում, իսկ մյուս կեսում Գունգերն ուզում եր սրճարան ընկել։ Գունգերի ցուցմունքով մի ամբար շինվեց՝ հնոցի համար։ Գունգերը կարգադրում եր, իսկ Վինոգրադովը նրա սասը առատորեն յեր բարդմանում և հետևում եր աշխատանքների ճիշտ կատարմանը։

Գործարանի համար փող տալու խնդրում Ցերկասովը բավական ժլատ եր։

— Փողը դեռ ածելու կարիք չկա,—ասաց նա, յերբ Գունգերը խնդրեց նրան հնոցի համար շինված ամբարը կղմինդրե տանիքով ծածկելը—Փողը դեռ ածելու կարիք չկա,—կրկնեց նա և մերժեց Գունգերի խնդիրը՝ քարե հաստակ շինել այն սենյակում, ուր կավը պետք է լվանային։ Նա չեր հասկանում, վոր կղմինդրե տանիքը հնոցի խողո-

վակից դուրս թռչող կայծերից չի վառվի, որ քարե հատակը կավը փղշուց կպաշտպանի։

— Արագ-արագ աշխատեցեք,— ասում էր նա և սաքսոնական ճեղնապակուց շինած յուղամանը էր ուղարկում Դունգերին՝ որպես նմուշ։

Իսկ նոր գործարանում գործն առաջ չէր շարժվում։ Արհեստներն տանելքները կաթում էին, բանվորներն աշխատավարձ չէին ստանում։ Ինչ էլ հրամայեր Դունգերը, միևնույն փոխվում էր։ Աղյուսի գործարանի կառավարիչ իտալացի Տրեզինը կռվից Դունգերի հետ։

«Դունգերի հետ ունեցած խոսակցությունները բավական վայելուչ են, իսկ ինչ կլինի հետագայում, դրանից ինչ կստացվի—մենք չգիտենք,— գրում էր Տրեզինը Զերկաուվին։ Լավ ենք, որ նա յոդել և Թիշանեայում և Վինոգրադովում, Վիննայում, հետո էլ Շվեցկայում, բայց կարծեմ վոչ մի տեղ պտուղ չի տվել, բայց ճիշտ է, թե վոչ, ճիշտը հետագայում կերևա»։

Այդպես անցավ մի տարի։

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Վինոգրադովը տխուր էր։ Դունգերը, իր սենյակում փակված, կավից ինչ-որ բան էր շինում։ Նա չէր թույլ տալիս, որ Վինոգրադովը թեկուզ մեկ աչքով նայի զանգվածը շինելուն։ Նա չէր թույլ տալիս, որ Վինոգրադովը ինքը կավ վերցնի և վորևե փորձ կատարի։ Նա չէր ուզում մենք ու մենքին հաղորդակից անել ճենապակու գաղտնիքին։ Վինոգրադովին վոչինչ չէր մնում անել, բայց չէթե Դունգերի կարգադրությունները ռուսերեն թարգմանել կամ նրա թելադրանքով չերկար զանգատներ գրել Զերկաուվին։ Դրա համար էր քիմիա սովորել։

Դունգերը բանվորներին հրամայեց զանգվածի համար չուգունե հավանդներում ալաբաստր ծեծել։

— Մայն հերը,— ասաց նրան Վինոգրադովը,— ավելի լավ չի ալաբաստրը քարե հավանդներում ծեծել։ Չուգունից կարող են մասնիկներ թռչել. նրանք ալաբաստրի հետ միասին զանգվածի մեջ կընկնեն և թրծելիս ժամը կիչացնեն։ Չե վոր տաքացնելիս մետաղն այլ կերպ է լայնանում, քան կավը։

— Վոչ,— գոռաց Դունգերը,— ձվ է մեղնից գործարանի դիրեկտորը—յես չքե գուք։ Դուք ամեն տեղ քիթ եք կոխում։ Ձես այլևս չեմ թույլ տա, վոր դուք գործարան գաք։

Աշնան յերկար գիշերներին Վինոգրադովը մոմի լույսի տակ լաբեներին մոտավորներ էր կարդում ու ռուսերենի վերածում։ Նա իր մահճակալի վերևում գրքերի դարակ էր շինել և յերբ փող էր ունենում, գնում էր գնում ու գրքեր և ժուռնալներ գնում։

Մեկ անգամ տուն վերադառնալով, նա նկատեց, որ մեկն իր վառանավորների ուշադրությունը և քրքրել և գրքերը կարդացել։

Այդ Գուենդերն էր նայել, թե ինչ է գրում Վինոգրադովը, զանգվածի գաղտնիքը չի բացել արդյոք։ Վինոգրադովին գրելը զզվեցրեց և նա սկսեց տանից հեռանալ։

Ամառային սպիտակ գիշերներին նավային ափերը դատարկ էին։ Բոլորալուսինը բարձրանում էր անտառոտ հրվանդանի վրա։ Գետի երեսով հանգստաբար սահում էին լաստերը։ Վերջիններիս վրայի խարույկներն իրենց կարմիր ցոլքն էին գցում ջրի մեջ։ Գետի մյուս կողմից լուրջ ձայն էր գալիս։

Վինոգրադովը հիշեց Մարքսուրդի ուսանողական յերգերը։

Նա մի նավակ նատեց և թափով թիավարեց՝ գետը թեք կիսելով։ Գետի մյուս կողմում, Վեսյոլի փոքրիկ գյուղում, Չահլինները խմբասյաք-ձկներ կազմել, իսկ աշխույժ ֆինուհին գինի իր ծախում։ Այնտեղ էր թիավարում Վինոգրադովը գործարանի մաշող թախիծից, որտեղ նրան աշխատել չէին թողնում։

Մեկ անգամ յերեկոյան տուն դառնալով Վինոգրադովը նախասենյակում մի փափուկ բանի դիպավ ու գլխկոնձի տված հատակին։ Վնասված ծունկը տրորելով, նա մոմ վառեց։

Հատակին, դռան լայնքով, խոմփում էր գործարանի պահակներից մեկը։

— Ի՞նչ ես շինում այստեղ,—հարցրեց Վինոգրադովը՝ հրելով քնածին։

Պահակը հորանջեց և ծոծրակը քորելով, պատասխանեց.

— Գիտեք, Դմիտրի Իվանովիչ, գերմանացին և ինձ պատժել...

— Ի՞նչպես թե գերմանացին և պատժել Դուռն յեսհում վայր ընկնե՛լ։

— Ճիշտ այդպես։ Դմիտրի Իվանովիչ, քեզ հակելու չի պատժել։ Հենց ասաց, Վինոգրադովը տուն գա, իսկույն վարիր մոտս և ասա։ Ձեռ նախաբար Զերկասովին կգրեմ, թե նա գիշերները ինչպես և ման գալիս։

Վինոգրադովը բռնկվեց։ Գուենդերը նրան լրտեսում էր։

— Կհրաժարվե՞ք դնամ գերմանացու մոտ,— հարցրեց պահակը հատակից շորերը ժողովելով։

— Վա՛չ, ինքս կգնամ։

Վինոգրադովը Գուենդերի սենյակի դուռը բացեց։ Գուենդերը վերմակի տակից քթիը դուրս հանեց և նորից ծածկվեց։

— Չհամաձայնվե՞ք լրտեսել ինձ,—գոռաց Վինոգրադովը։ դուք չեք թուլ տալիս, որ աշխատեմ, չեք թողնում արհեստանոցները մտնել, հիմա էլ ուզում եք ինձ վրա մատնություն գրել։

— Մի գոռաք ինձ վրա, յերիտասարդ,—հանկարծ գոռաց Գունդիերը, և ձեռքի թաթը բարձրացավ նրա գլխերային գդակի վրա։— Ցնա ձեր իշխանավորն եմ։

— Ա՛հ,— Վինոգրադովը փայտե աթոռակը խփեց հատակին և սենյակից դուրս վազեց։

Հաջորդ որը Ջերկասովը Գունդիերի ձեռքով գրած մի բողոք ստացավ։

Գունդիերն արտասուք էր թափում, թե «գլխերվա ժամը 11-ին քաղաքային անսպասելի կերպով իր մոտ և խուժել Վինոգրադովը՝ դահանակն ու բիրը ձեռքին և սպառնացել և իր կյանքին։ Այսպիսով յես այստեղ Ռուսաստանում անարգված վիճակում եմ գտնվում։ Ցնա գործարան չեմ գնա, քանի այս անաստված մարդն այնտեղ է»։

«Անաստված մարդուն» գործարանից չարձակեցին, այլ նրան գործից իսպառ հեռացրին։ Գունդիերը վախենում էր, թե գիտուն քիմիկոսն իրենից շուտ և ճենապակի շինելու։

Այսպես մի տարի ևս անցավ։

ԱՐԿԱՆԻՍՏ-ՋԱՆՈՂԱԳԸ

Վինոգրադովը իրավացի յեր.— «Ճաոաայինն» կավից ավազը վատ էր քաշտանվում, նրանից չէր կարելի անոթ շինել։ «Ճաոաայինի» անհաջող փորձերից հետո Գունդիերն սկսեց «ավազայինից» ճենապակի շինել։ Առաջին թրծումից անթափանցիկ, անփայլ ու դեղնագույն անոթ ստացվեց։ Նա ճենապակի անոթի նման չէր։

Այդ նրանից է, վոր հնոցը սոճի փայտով է տաքացվել,— ասաց Գունդիերը։

Նրա համար կինչ փայտ բերին։ Այս թրծումից անոթն ավելի վատ ստացվեց։ Գունդիերն ասաց, թե հնոցը վատ են շինել։ Հնոցը վերաշինեցին։ Անոթն ավելի դեղին ստացվեց։ Հնոցը նորից վերաշինեցին։ Անոթի փոխարեն ինչ-վոր դեղին բլիթներ ստացվեցին։

— Մենք ու սկսը կախարդել և հնոցը։ Չար վոգին է կախարդել,— ասում էր Գունդիերը—ինքն էլ չարությունից դեղնած՝ իր անոթի նման։ Նա նորից փակվեց իր սենյակում և կավիրով ինչ-վոր աշխատանք էր կատարում։ Նա յերբվում էր Ջերկասովին, թե ինքը «վողջ պորցելինյան արվեստն ու գիտությունը հիմնովին գիտե» և լիքն էրեն հանգիստ թողնեն, մի տարուց հետո ցույց կտա «իսկական պորցելինյան նմուշ, վորը սաքսոնական պորցելինին վոչնչով չի զիջի»։

Մենք տարին ևս նոր վոչինչ չբերեց։ Գունդիերը ճենապակու գաղտնիքը չգիտեր։ Այդ ժամանակ նա թագուհուն առաջարկեց շինել վոչթե ճենապակու, այլ հախճապակու գործարան։ Սրան վորպես պատասխան

Ջերմասովը նրան «ապշիտա», այսինքն պաշտոնից արձակված լինելու հրամանն և Ռուսաստանից հեռանալու անցագիրը ուղարկեց։ Այսպես վերջացավ «խորհրդավոր» արկանխաու աշխատանքը Ռուսաստանում, «արկանխաու», վորի նմանները շրջապատում էին Ցվերոպայում՝ պարծենալով «չինական գաղտնիքի» դիտենալով և այս կամ այն փառասեր քաղաղորիկին գայթակղեցնում էին ճենապակու գործարան հիմնելու խոսաումով։

Բյուգների հետ ուենցած խնջուքները Գուանգչերին քիմիա չէին սովորեցրել։

Ջերմասովը ճենապակի շինելը հանձնարարեց Վինոգրադովին։

ՔԻՄԻԿՈՍԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Պորցելինի գործը վորպես իր հիմք և իր գլխավոր դեկավար ունի քիմիան», գրել եր Վինոգրադովը իր ժուռնալում, ուր ամենրաման գրում եր կավերի վրա իր կատարած բոլոր փորձերը։

Նա աշխատում եր գիշեր ու ցերեկ, ուրախ, վոր կարող և աշխատել, ինչպես յերբեմն Բյուգների եր աշխատում Ելբաչի վրայի պավիլիոնում։

Գժելյան կավերից նա ընտրեց գորշ գույնի «սնահոպալին» կավը։ Նա դրան ավելացրեց կայծաքար կամ կվարց ու ալաբաստր։

Կավը լուծեցին ջրի մեջ, շատ անգամ քամեցին մաղով, հետո չորացրին հնոցներում։ Կայծաքարը կամ կվարցը շինացրին հնոցներում ու ծեծելին հավանգներում՝ այս անգամ արդեն ոչով թե չուզուեն, այլ քարե հավանգներում։ Հետո աղացին այնպես, վոր կայծաքարն ու կվարցը բոլորովին մանր փոշի դարձան։

Հետո Վինոգրադովը խառնեց կավը, կայծաքարը կամ կվարցը և ալաբաստրը, և նմուշը թրծելին վառարանում։ Նա անվերջ փորձեր եր անում՝ ավելացնելով յերբեմն ավելի կայծաքար, յերբեմն ավելի ալաբաստր, մոլոխնան սրանից կամ նրանից դանդաղածին խառնելու քանակից եր կախված անոթի սպասակությունն ու ամրությունը։

Անոթը թրծում էին նախ փոքրիկ ածխաթուրանոցում—«ակապացնում էին», հետո նախշում էին կապույտ ներկով—կոբալտով և ապակեներկով։ Ապակեներկը նույնպես կայծաքարից ու ալաբաստրից եր բաղկացած, վորոնց կավիճ էին ավելացնում։

Այնուհետև անոթը գնում էին վայրի վառարանում։ Անոթը կրակից պետք և դուրս գար սպիտակ, զննելուն ու փայլուն։

Վինոգրադովը հուշատետրը ձեռքին չեր հեռանում վառարանից։

Նա ականջ էր դնում փայտերի ճռճռոցին, դիտում էր լույսի դող-նը, և հենվելով վառարանի փայլարե փոքրիկ պատուհանին, սպասում էր այն րոպեին, երբը վառարանում դրած նմուշն այնքան չիկանար, որ սկսեր լուսս տալ։

Նա իր տետրում գրում էր.

«Փակ կրակը յերկու ժամ էր, բայց՝ հինգուկես։ Փայտը Ոլոնեցկի յեր, չոր, կրակն՝ սպիտակ, մաքուր։ Նմուշը կրակում լավ և փայլուն էր յերևում...»

Հետո վառելը վերջացրին։ Վառարանը դանդաղ կերպով սառչում էր։ Ապրանքները չուզելով եյին տաքությունն արձակում։ Վինոգրադովը չէր կարողանում համբերել. ուզում էր, վորքան կարելի յե, շուտ նա-յել պատրաստի անոթին։ Վերջապես վառարանը բաց արին։ Վինոգրա-դովը հուզմունքով բացեց կավե պատկինները և հանեց դեռ տաք թա-սերը, թեյամանները, պնակները։

Մոտալ գնդով նա այդ բոլորը մի կողմ դրեց։ Նրանք ծուռն եյին, դուրս պրծած, մեքանեհան եյ կրակում ճաքճքել եյին։

Սրտի կսկիծով քիմիկոսը շարունակեց դրել.

«... իսկ վառարանում անոթը փչացել էր։ Անվնաս իրեր քիչ դուրս յեկան։ Նոր սրճամանը լավ կլիներ, բայց կոտրել էր...»

Նա նորից փորձերի կսկսվ, նոր դանդվածներ էր շինում, յեր-բեմն ավելի կվարց, յերբեմն ավելի ալաբաստր էր խառնում, բայց նոր զանգվածից պատրաստած անոթներն էլ եյին ծռվում փայտի վա-ռարանում։ Մի քանի գիտուն քիմիկոսը ևս հանդուգն չկամք և ունե-նա, ինչպես չունեցավ շառլատան Դուշղերը։

Չերկասովը լսեց, վոր Բուլինում մի գրքույկ և տպված—«Չի-նական և սաքսոնական պորցելինի բաց գաղտնիքը»—հեղինակած այդ գաղտնիքն իմացողի կողմից։

Հաճախ սուրհանդակն այդ «բաց գաղտնիքը» բերեց Չերկա-սովին։ Բարոնը կանչեց Վինոգրադովին և նրա առաջ, սեղանի վրա նետեց բարակ գրքույկը՝ տպված կոշտ, մոխրագույն թղթի վրա։

— Կարդա, հասկացիր, և ըմբռնիր, թե ինչպես պետք և պորց-յելին շինել—խիստ կերպով ասաց Չերկասովը և շուռ գալով ավե-լացրեց.—հասանք այն որին, յերբ այս գաղտնիքը բոլոր աշխարհին հայտնի դարձավ. սիայն յես և դու ինչպես կայինք, այնպես էլ հի-մար մնացինք։

Վինոգրադովը ուշագիր կարդաց գրքույկը և Չերկասովի համար թարգմանեց ռուսերենի։ Ավաղ, այն հեղինակը, վոր պարծենում եր, թե ամբողջ աշխարհի համար կբանա պորցելինի գաղտնիքը, ինքը չգի-տեր այդ գաղտնիքը։ Գրքում անմիտ լուրեր ու ասեկոսեներ կային այն մասին, թե ինչպես և շինվում ճենապակին, բայց խելքը գլխին

վոչինչ չկար։ Միայն մի փոքրիկ յերես հետաքրքրեց Վինոգրադովին— կին-ահ-չենի ճննապակու գործարանների մասին յեղածը, վոր նկարագրել էր հայր գ'Անտրեկոլլը։ Այստեղ առաջ էր բերած չինացիների խոսքերն անգլիացիների մասին, վորոնք մտածել են պե-տուն-տսեից ճննապակի չինել առանց կաոլինի։ «Ա՛յ, դարմանալի մարդիկ։ Նրանք ուզում են մարմին չինել՝ առանց վոսկրների, մարմին, վոր այդ վճռակում չի կարող վոչ ման գալ, վոչ կանգնել»։

«Մակայն այդ թարս պետք է հասկանալ,—խորհրդաստ կերպով էր կողմից ավելացնում էր «բաց գաղտնիքի» հեղինակը,—վորովհետև կավը վոչ թե վոսկորների, այլ մարմնի տեղ պետք է հասկանալ, իսկ սպաթը (ալբատ) կամ պետունզուն այդ մարմինն ամրապնդելու միջոցի կամ վոսկորների տեղ»։

Վինոգրադովը սկսեց մտածել նա իր աչքով քիչ չի տեսել, թե ինչպես փափուկ կավը կրակի մեջ ամրանում ու կոշտանում է «ինչպես քար, վորից կարելի չի կրակ հանել», իսկ սպաթն ու կվարցը ուժեղ կրակում հալվում ու տարածվում են։ Ուրեմն չինացիների խոսքերը վոչ թե թարս պետք է հասկանալ, այլ ինչպես ասված է։ կավն ամրություն է տալիս ճննապակուն, ինչպես վոսկորներն ամրություն են տալիս մարմնին։ Բայց, այ, նրա անոթները ծռվում ու ծալվում են, ուրեմն զանգվածին մի այլ տեսակ կավ պետք է ավելացնել, վորը կարողանար ամրացնել ճննապակին։ Ինչպես գտնել այդ կավը։

Վինոգրադովը ձայն տվեց կառապանին և հրաժարվեց իրեն տանել Վասիլևսկի կղզին։ Կիսամութ «գե սիանս Ակադեմի» գարախներից քիմիկոսը վերցրեց և թերթեց կաշեկազմ հաստահատոր ֆրանսերեն գրքեր ու ժուռնալներ։ Այդտեղից բորբոսի ու մկան հոտ էր գալիս։ Ծանոթություններից գրքերի թերթերի վրա ժանգոտած բծեր կային։ Որ-ա վ վերջում Վինոգրադովը գտավ, ինչ վոր փնտռում էր։ Դա «Հայր գ'Անտրեկոլլի հետաքրքիր և ուսանելի նամակներն էին Չինաստանի մասին»։

Գիրքն ամուր սեղմած իրեն, Վինոգրադովը դուրս չեկավ այդտեղից։ Ինչ լավ էր, վոր նա մի ժամանակ Մարբուրգում ֆրանսերեն էր սովորել։

Այդ գիշեր մոմը չերկար ժամանակ վառվում էր նրա սենյակում։ Հակիչ դինվորը բակում շրջելով, շատ անգամ նայեց նրա պատուհանին ու փնթփնթաց։

— Դմիտրի Իվանովիչը շարունակ կարդում ու կարդում է... Ձեռքը նեղ և ընկել, գաղտ գնելու չե գալել։ բայց միշտ կարդում է։ Զարքևը նրան վոչ գիշերը ղարձացնում են։

Լուսադեմին դինվորը տեսավ, վոր Վինոգրադովը գիրքը փակեց, մոմը հանգցրեց, և հոգնած գլուխը գրեց սեղանին։

Հայր գ'Անտարեկոլլե նամակներից նա ճենապակու կավերի մասին գոչինչ չիմացավ։

Վինոգրադովը Ջերկասովին խնդրեց, որ իրեն ուղարկեն սպիտակ կավերի նմուշներ գանազան տեղերից—Սժոլենսկի ժամերքից, հին Ռուսայից, Նուչինսկ Սիբիրից։ Նա ուզում էր այդ նմուշները փորձել։

Ջերկասովը բարկացավ Վինոգրադովի վրա և մի խայթող նամակ գրեց նրան.

«Պարոն լոմոնոսովին հարատարագիրը պետք է իմանար, որ իր փորձերի վրա բավական փող և ժամանակ, սակայն մինչև այսոր գոչ մի արդյունք չի երևում։ Հարկավոր է, որ դու աշխատավորներին ավելի լավ հսկես, հենց ինքդ էլ այդ գործին ամբողջ լոմոնոսով ձեռք զարկես»։

Ջերկասովը գործարան ուղարկեց փոխգործակատ Մոսատովին և հրամայեց նրան հետևել, որ Վինոգրադովը «ավելի ջանասիրությամբ աշխատի»։

Մոսատովը քարշ էր գալիս արհեստանոցներում, գոռգոռում էր բանվորների վրա, առավոտից մինչև երեկո ճանճրացնում էր Վինոգրադովին.

— Բավական է պրպտաս,—լարատարությամբ գանգատվում էր քիմիկոսին.—համեցեք արհեստանոցները, ձերդ բարձրությունդ։ Ինչ ասած է «աշխատիր՝ առանց ձեռքերդ ծալելու»։

Վինոգրադովը այնպես էլ «առանց ձեռք ծալելու» իր աշխատում էր։ Մոսատովը նրան զրկեցրել էր։ Մեկ անգամ քիմիկոսը չհամբերեց և գնդապետին հրեց դռնից դուրս։ Այդ ժամանակ Մոսատովը կանչեց պահակներին, իսկ Վինոգրադովի սուրը և փակեց նրան լաբորատորիայում։

Բանտարկված քիմիկոսը պարապելությունից սկսեց կարդալ փորձերի մասին իր գրած հիշողությունները և շուտով մոսատովին։ Նրա համար պարզ էր, որ գանգվածի հարկավոր բաղադրությունը գեռ չի գտել։ Զանգվածին դեռ ինչ-որ բաղադրանյութ էլ պետք էր ավելացնել, որ անոթը թրծելիս չծռվելու։ Նա որոշում գրեց. «Պորցելինյան գործարանը վոչ այլ ինչ է, եթե վոչ լոմոնոսովի մանուֆակտուրա և յեպծանների մեջ էլ ամենից փառավորը։ Բայց նա ավելի էր կատարելագործված կլինի, եթե նրա համար գործադրվող բոլոր նյութերը կարելի լինեն տեսնել։ Առանձնապես անոթի ծավալն ու ծալվելը կարելի չի ուղղել՝ գանգվածին մի քիչ հանք խառնելով։

«Լայնածավալ ռուսական պետության մեջ գանազան հանքեր, քարեր ու կավեր շատ կան, սակայն նրանց մեծ մասը դեռ յերկրի ընդերքում են թաղված...»

Նա հիշեց Լոմոնոսովի վոտանավորը—

Ցերկրի ընդերքը դու, քիմիա,
Հայացքդ սրությամբ թափանցիր,
Ցավ ինչ ունի այնտեղ Ռուսիան,
Հանիր ու դանձերը բացիր։

Քիմիան դեռ չի թափանցել ռուսական յերկրի ընդերքը։ Հարկավոր է վորոնել ճենապակու կավերը, հարկավոր է հետազոտել նրանց և ուսումնասիրել շատ տարիներ։ Իսկ Զերկասովը պահանջում է, վոր հենց վաղը ճենապակի շինվի, վոչ—այսոր, այս ժամին, այս րոպեյին։ Շատ և շատ անգամ թագուհուն «ճենապակի նվերը» մատուցել։

Վիշոգրադովը հիշեց, վոր պատրաստվում էր նոր դանգվածին յերկու ֆունտ կվարց ավելացնել, և առաջացավ դեպի դուռը։ Զարխոզներին պետք էր ասել, վոր նրանք նոր դանգվածից վոչինչ չբերեն։

Դուռը փակ էր։ Քիմիկոսը, ինչպես յերևում է, մոռացել էր, վոր ինքը բանտարկված է։ Նա մեծ-մեծ քայլերով անցնում էր լաբորատորիայով։

Նրա մտքում դեռ հնչում էին Լոմոնոսովի վոտանավորի տողերը։

Ցերկրի ընդերքը դու, քիմիա,
Հայացքդ...

կթափանցի, մայր յերկիրը կթափանցի,—գրպանդ լայն բաց,—յերբ քիմիկոսը փականքի տակ է նստած...

Հայացքդ սրությամբ թափանցիր...

Այսուհետ «հայացքի սրությունն» էլ չի ոգնի, յեթե փոխգնդապետ Լվոսովը գործարանում հրամայող է... Զզվելի մոռաթ...

Նատալյան, վորին Վիշոգրադովի վոտքը դիպավ, շրխկալով դեպի հատակին։

Ցավ ինչ ունի այնտեղ Ռուսիան,
Հանիր ու դանձերը բացիր։

Իսկ ձեմ հատար բաց անել, թագուհու համար, Զերկասովի համար, Լվոսովի հատար։ Լավ, նրանք առանց այդ դանձերի էլ յուր կգնան։

Վերջին տարիների վողջ հսկայական աշխատանքը քիմիկոսին թվաց անպետք ու աննպատակ։ Նա փակից ժուռնալը և կրկին պատկեց մերկ նատրոնի վրա՝ գլխի տակ առնելով իր բաճկոնը։

Մի քանի որ անցավ։ Քիմիկոսը կալանքի տակ էր։ Ձեխոսված մի սուրհանդակ բերավ Զերկասովից մի կնքված արկղ։ Արկղում որնէ բուրգյան սպիտակ կավերի նմուշներ կային, վոր Վիշոգրադովի խնդրով ուղարկել էին Ուրալից։ Զերկասովը հրամայում էր «անհապաղ փորձել այդ կավերը»։

Վինոգրադովն ակամա գործի կպավ։ Նա փորձեց որևնբուրգյան կավը և թրծեց փոքրիկ քուրայում։ Փորձն ստացվեց սպիտակ, փայլուն, բայց շատ փխրուն, վոր հենց ձեռքում կոտրվում էր։ Միայն այդ կավից անոթ շինել չէր կարելի։ Բայց յերբ Վինոգրադովն այդ կավը խառնեց գժելյան «սահողայինին», նժուշը լավ դուրս յեկավ։ Վինոգրադովը նոր բաղկացուցիչ դանդվածից մի փոքր ավելի մեծ դավաթ շինեց և թրծեց փայտի վառարանում։

Գավաթը շատ լավ թրծվեց։ Նրա ուղիղ, հարթ պատերը վոչ ծռվում էին, վոչ ծալվում։ Զանդվածը պինդ էր, հոծ և լիակշիռ— իսկական ճենապակու դանդված։

Վինոգրադովը գավաթը ձեռքին ծանր ու թեթև արեց, մատնեբով շոշափեց նրա կոկ փայլը, ղողց, վոր ձեռքում էր բախտն և բռնած։ Նա Զերկասովին գրեց։

«Այն որևնբուրգյան կավից ամենախելոքը, մաքուր և սպիտակ պորցելին շինել հնարավոր է... Մինչև այժմ անոթները թրծելիս ծռըվում ու ծալվում էին, բայց այդ պակասությունները այդ կավով կարելի չէ վերացնել և կվերացվին»։

Յեվ Վինոգրադովը լանգրում էր Զերկասովին վերադարձնել իր սուրը։

Մինչդեռ գործարանային զինվորը պատրաստվում էր քաղաք գնալու, վոր գավաթն ու նամակը Զերկասովին տանի, քիմիկոսը դեռ սեղանի առաջ նստած, և, առանց ինքն այդ նկատելու, իր նամակի հակառակ կողմում գրում էր՝

«Այդ պետք է

«Այդ պետք է վերջապես

«Այդ պետք է վերջապես պատահի»։

Վերջապես այդ պատահեց։ Նա ճենապակու դանդվածի բաղադրանյութը գտավ։

Զերկասովը քիմիկոսին վերադարձրեց նրա սուրը։

«ՍԻՐԱՑԻՆ ՓՈՍՏԻ ԾԱՇԿԱՍՍԱՅԼԱԿՆԵՐ»

Անցավ մեկ ամիս—և Զերկասովը բավականություն ունեցավ փայլելով, Յեկատերինա Թագուհուն ժառանգեց քթախոտի մի տուփ՝ իսկական ճենապակուց։ Վինոգրադովը էր շինել այդ։

«Քթախոտի տուփերն այժմ չափազանց սպիտակ և լավ են դուրս գալիս. դրանցից ավելի մաքուր և ավելի սպիտակ մինչև այժմ անկարելի յեղավ շինել, տեսնենք առաջ կլինա՞ ասածից ինչ կաս»,—գրում էր Վինոգրադովը Զերկասովին։

Այդ ժամանակ բոլոր աղնվատոհմները, պալատական տեկիններն

և ինքը թագուհին քթախոտ էլին քաշում։ Ճենապակե տուփերը բո-լորին դուր էին գալիս։

Այդ տուփերը շինում էին փոստային ծրարի ձևով, առաջին յի-րենում սև ներկով հասցեն էլին գրում, ինչպես ցույց եր տալիս պատվիրատուն։ «Թխահեր որիորդին՝ քնքուշ սրտով»—հրամայից գրել այնին խալազոր մի քուրացողված պճնամոլ՝ իր հարճացուի համար տուփ պատվիրելիս։

Գալատեական պարահանդեսներում դիմավորելի ցանած ժանկլավիկ-ները քթախոտի տուփեր էլին փոխանակում յերեսներին կարմիր քաած թագուհու պալատական որիորդների հետ։ Ինչ չեր պատահում, վոր քթախոտի տուփերում վարդագույն տոմս եր լինում թագրած՝ զգաց-մունք արտահայտող փոքրիկ վոտանավորներով։ Այս պատճառով էլ պալատում այդ տուփերը կոչվում էլին «սիրային փոստի ծածկա-սայլակներ»։

Պատահում եր, վոր տուփ պատվիրողը կարևոր բարձրաստիճան անձ եր լինում, և ուզում եր, վոր նրան մեծարեն ու փառաբանեն ճե-նապակու վրա։ Յերկար տիտղոսներն ու աստիճանները չէլին տեղա-վորվում քթախոտի տուփի փոքրիկ կափարիչի վրա։ Այդ դեպքում Զերկասովը բարկանում ու Վինոգրադովին գրում եր. «Հրամայեցեք, վոր նորին պայծառափայլությունն կոմս Ալեքսեյ Գրիգորևիչի համար մեկ տուփ շինեն ավելի յիրկար և ավելի լայն, վորովհետև նորին պայծառափայլության տիտղոսը մեծ է, ուրեմն այնպես լինի, վոր մակագրությունը տեղավորվի կափարիչի վրա»։

Ամենից շատ տուփեր հարկավոր էլին Յելիզավետա թագուհուն։ Նա, վորպես իր վողորմածության նշան, նվիրում եր իր պալատականնե-րին և նույնիսկ Անգլիա յեր ուղարկում՝ վորպես ընծա լորդ Հենդ-ֆորդին և լորդ Նիսելսոնին։

Միաժամանակ Վինոգրադովը շինում եր փոքրիկ թասեր, թեյի պնակներ, սուրճամաններ, փոքրիկ վազեր, յուղամաններ, աղաման-ներ, փոքրիկ բանկաներ։

Նա նկարներ եր շինում, վոր սպիտակ անոթների նախշեր։

Նրա անոթները սաքսոնականից վատ չէլին, բայց Զերկասովը, աշխատասիրելով, վիրավորվում եր, վոր բոլոր իրերը մաքուր են։ «Շե-նքերը վորքան հատ, այնքան ավելի լավ,—գրում եր Վինոգրադովին,—աշխատեր ավելի չանասիրությամբ, վորպեսզի կարելի լինի նորին մեծությանը լավը և մեծը ժառուցել, վորպեսզի ստատ լինենք այն կշտամբանքից, թե մենք նորին մեծությանը խարում ենք»։

Վինոգրադովը յերբեք չեր խաբել։ Նա մի մեծ վառարան եր շի-նել, վոր փայտով եր տաքանում։ Այդ վառարանը վառում էլին շաբաթական կրակն ուժեղացնելով, քանի որ ժամ, «մինչև նրա

այնքան դաժան դառնալը, վոր ամեն ինչ քչքչար ու ապմկերը։

Այսպիսի «քչքչոցից» ուղի ժամ հետո ճենապակին դառնում եր ապիտակ և կարծր։ Վառարանն ամուր փակում էլին և նա 3—4 որ հավանում եր։

Այդ ժամանակ գործարանն սկսեց մեծ վաճառք, պուտեղները և պնակները չինել։

Թագուհին կարող եր պարծենալ Ռուսական ճենապակին չինա-վաճից ու սաքսոնականից վատ չեր։

ԱՏԼԱՍԻ ՖԻԳՈՒՐԻՆԸ

Վինոգրադովը ձեռքին բռնել եր հենց նոր հնոցից հանած ճենապակե մի ֆիգուրիկ։ Դա Ատլասն եր— մի ուժեղ մարդ, վոր ուսերի վրա յեր վերցրել յերկրագունդը։ Յերկրագունդը—գործյալ ճենապակուց շինած—չափազանց ծանր եր ճենապակե ուժեղ ուսերի համար։ Ցավը Քրծուժի ժամանակ ուժեղ կրակում կամը հալում և կայծքարի և ալաբաստրի հետ, ճենապակին գունդն այնպես և ճնշում խեղճ ճենապակե Ատլասի ուսերը, վոր նրա վոտները ծալվում են և ֆիգուրիկը դեպի առաջ և ծռվում։ Այսպես ծռված էլ դուրս և գալիս նա Քրծումից։

Այս բանը կրկնվում եր ամեն անգամ, յերբ Ատլասի ֆիգուրիկը ճենապակուց շինում ու հնոց էլին դնում։

—Ախ Ատլաս,—ասաց Վինոգրադովը,—պետք և գունդն ավելի թեթև ու ավելի փոքր շինել, այն ժամանակ դու այդպես այլանդակ չես լինել։

Նրան թվում եր, թե հենց ինքն և նման այդ Ատլասին, վոր ուժից վեր ծանրության տակ պատրաստ և վայր ընկնել։

Գործարանը հրաշալի ճենապակի յեր արտադրում։ Ցելիզավետա Քագուհին բարոն Չերկասովին պարգևատրում եր շքանշաններով։ Վինոգրադովին միայն այն ժամանակ էլին հիշում, յերբ պետք եր լինում վորևե բարդ պատվեր կատարել։ Նրան առնիկ տալը մոռանում էլին։ Ցերբեմն նրա ռոճկի ամբողջ մեկ յերրորդ մասը պահում եր նրանին մեծության մինիատյուրն Բանվորներին նույնպես կանոնավոր չեյին վճարում։

Վինոգրադովը ուժից դուրս եր գալիս՝ բանվորների առձին ավելացնելու։

Նրա ամենասիրած ուղնականը, վոչ-պիտուն, բայց ընդունակ վարպետ Նիկիտա Վոռնովը ամսական սահմանում եր յերեք ռուբլի, յերկու հավերիկ ալյուր, մեկ գարնից ձավար։ Իսկ ուրիշները—զրանից էլ

պակաս։ Թրքերենի տանիքները շարունակ կաթում էին, իսկ խոնավությունից «վատ ու անտանելի հոտ» էր լինում կանգնած։

Բոլոր դանցառությունների համար բանվորներին ծեծում էին։ Գործարանում հրամայող նշանակված էր փոխգնդապետ Ֆվոստովը։

Ամենից վատը գործարանի առաջին նկարիչ Իվան Զյորնոե դրությունն էր։ Նա կոմս Շերեմետևի ճորտ սպասավորներից էր, բայց չէր ուզում իր ամբողջ կյանքում կոմսական սպասավոր մնալ։ Ծածուկ կերպով գծագրություն ու վոսկերչություն սովորեց։ Նույն բանը սովորեցրեց իր տղաներին։ Նա վոսկերիչ դարձավ։ Դրա համար նրան մարակածած արին ու կոմս Շերեմետևի մոտ ծառայության ուղին։ Նա խնդրագիրը ուղարկեց թագուհուն, որ իրեն և իր տղաներին վերցնեն ճնճղուկու գործարանը՝ քիմ խոտի տուփեր նկարազարդելուց։ Շերեմետևը նրան գործարան վերցրեց, իսկ կոմս Շերեմետևը պահանջեց, որ այդ «սպասավորին» էլ ուղարկեն։

Շերեմետի Զյորնին և նրա որդի Անդրեյը[1] ատում էին մարկուրյունն ու ճնշումը։ Նրանք շարունակ ըմբոստանում էին, բայց Շերեմետևը նրանց խաղաղացնում էր։

Ահա թե ինչ էր գրած Շերեմետևը հրամանում՝ տրված գործարանին 1753 թվին։

«Նկարիչ Զյորնուն պահել տալ շղթայած, ոտքին տալ ըստ ձեր հայեցողության, բայց՝ որ միշտ աշխատի։ Բան և, յեթե համառի, հաճեցեք ծեծել, կնոջն էլ մոտիկ պահել և յեթե հանդուգն դտնվի, նույնպես ծեծել»։

Ցավեցնելու չափ շղթունքները կրծոտելով՝ վինոգրադովը տեսնում էր, թե ինչպես նկարիչ Զյորնին, պարանոցը տրորող շղթայի պատճառած ցավից կծկվելով, նույնը վրձնով նկարում էր ծխատուփերի վրա կարմրավուն թագուհի Ցեկիզավետայի կամ վարդագույն սիրահարների պատկերները, կամ թե կապտագույն հովիտներ՝ իրենց վոչխարներով։

Վողջ Ռուսաստանն էր գտնվում մարակի տակ, շղթայված, կտտանքի ժշտական սպառնալիքի տակ։

Ցերեկին այդ լուծը վինոգրադովի համար էլ էր անհանդուրժելի դառնում։ Նրա մեջ արթնանում էր այն դյուրագրգիռ տղան, որը ցերեկին Մարբուրգում դեբժանացի ուսանողների հետ ունեցած էր ծեծկըռտոցով հռետորության էր հասնում ծերունի Վոլֆին։

Այդ ժամանակ, կատաղության մոլուցքում, նա կոտրում էր իր շուրջը յեղած ամեն ինչ։ Նա պատրաստ էր լինում վերջ տալ իր կյանքին, միայն թե չաշխատել բուռն, ճարպիկացած տղվատոհմիկների և սպիտակ-վարդագույն թագուհի Ցեկիզավետայի համար, որի մասին շարժումով մարդկանց ուղարկում էին բանտերը, տովստակ

Հին անուն ամուսնալուծություն, դաղում հին ընկերոջ կամ ցեց հին հանուն։

Ճենապակու գործարանի դիրեկտորը այս բանկումների մասին հայտնեցին բարոն Չերկասովին։

Չերկասովը հրամայեց վերցնել Վինոգրադովի սուրը, փակել բոլոր բանվորական շենքերն ու նկուղները, նրան միայնակ ոչ մի տեղ չթողնել, որ «դնեպրոցեցիայից[1]) չարտելով կամ այրելով ոչ մի ջնաս չտա, կամ իր գլխին վորևե փորձանք չբերի»։

Վինոգրադովին ավելի վատացավ։ Այդ ժամանակ Չերկասովը հրամայեց շղթայել նրան։ Կոպիտ փոխգնդապետ Ավոտովը շղթաները ընդգցնելով, ժամալ այն սենյակը, ուր աշխատում էր Վինոգրադովը և հրամայեց պահին շղթայել նրան, սակայն այնպես, որ նա կարողանա մուտնալ սեղանին և գրել։ Չերկասովը պահանջեց, որ նա ճիշտ և մանրամասն կերպով գրի, թե ինչպես և շինվում ճենապակին։

Ցեվ շղթայված Վինոգրադովը գրում էր «մաքուր պորցելինի մանրամասն նկարագիրը. թե նա Ռուսաստանում, Սանկտ-Պետերբուրգում ինչպես և շինվում, հետո էլ ցույց տալով նրան վերաքերող ամեն տեսակ աշխատանք»։

Ավոտովը յեկավ նրան վիրավորելու։

— Դրան էլիր սպասում, գիտեմ, որ շղթայելին,—ծաղրում էր նա։—Ես, հանգիստ նստիր. յեթե ոչ դագանակ էլ կուտես։

Վինոգրադովը հպարտությամբ լռում էր։ Իսկ յերբ նրան միայնակ էլին թողնում, նա գլուխը դնում էր սեղանին, հիշում էր Քաղաքի ֆիզուբրիկը՝ ծոված ուժերից վեր ծանրության տակ։ Պատուհանից դուրս հանդարտ ու սահուն հոսում էր Նեվան։ «Վայ, այսպես չէ լինի, յես կարծես կխելագարվեմ»,—մտածում էր Վինոգրադովը։ Նա վճռեց գրել Չերկասովին։

«Ինչ գործի կպչում եմ, համարյա ամեն ինչ ձեռքիցս թափվում է, և մտքերիս մեջ մեյն տարօրինակ բաներ են բուն դնում։ Ինչ առողջ դատողություն ապասել այնտեղ, ուր մեյն անհանգստությունն իր համար բուն ունի։ Հրամայեք տալու իրավունքն ինձնից վերցրած է. բոլորին յես վորպես բանտարկյալ եմ հայտարարված։ Ձեռնարկեք և աշխատեմ ու ցույց տամ, իսկ աշխատող մարդուկ պետք է լավն ու հնազանդվին ուրիշին։ Ինձ սպառնում են առանց պատճառի կապել ու ծեծել», գրում էր Վինոգրադովը Չերկասովին։

Դրանից հետո նրան շղթայից ազատեցին։ Նրան հրամայեցին շուտ վերջացնել իր «մաքուր պորցելինի նկարագիրը», և մոզի արտադրությունը սովորեցնել իր ոգնական Նիկիտա Վոլնովին։

Չերկասովը նրան գրում էր. «Քանի վոր բոլոր մարդուկ

---

[1]) Հրամանատարությունից։

հիվանդությունների ու մահն էին կենթակա, ուրեմն անհրաժեշտ էր պահանջվում և, որ դուք ամեն հարկավոր բան ցույց տաք մեկ ուրիշին, առանց ծածկելու և գաղտնապահության»։

Կաբինետ-կուրյեր Ժոլրովը հետևում էր Վինոգրադովի յուրաքանչյուր քայլին, գրում էր նրա յուրաքանչյուր խոսքը։

Չերկասովը վախենում էր, թե մլդուցի գյուտարարը մեռնի և ճենապակու գաղտնիքը հետը գերեզման տանի։

Վինոգրադովը պորցելինի մասին ունեցած իր բոլոր գիտողությունները գրում էր ժուռնալում։ Ճենապակու գանգվածի և փայտե վառարանների մասին նա տողումմեջ միևն յեկած լատիներեն վոտանավորն էր գրում.

Այժմ հակա աշխատանքի լուծն և ճնշում խելքս,
Կարճ չահելությունն անցավ ու վաղ ծերունի դարձա։

Վոչ Չերկասովը, վոչ Մոլոսովը, վոչ Վոլինովը լատիներեն չգիտեյին. Վինոգրադովն այդ տողերը գրել էր իր համար։ Շուտով նա հիվանդացավ և յերեք որից հետո մեռավ։ Նա գեռ քառասուն տարեկան չէար։

Իսկ գործարանը շարունակում էր աշխատել՝ արտադրելով շատ գեղեցիկ ճենապակի, որով Ցելիզավետա Թագուհին պարծենում էր ուրիշ թագավորների առաջ։

ՄՈՒՐՉ ՈՒ ՄԱՆԳԱՂԸ ՃԵՆԱՊԱԿԻՆ ՎՐԱ

ԻՆՉՊԷ ՄԱՍԻՆ Ե ՊԱՏՄՈՒՄ ՀԻՆ ՃԵՆԱՊԱԿԻՆ

Տարիներ անցան։ Պետրոս III թագավորը մեծ բանաստեղծ, ֆիլիկոս և քմծիծաղ մի մխիթարական Լոմոնոսովին հրամայեց իր ձեռքն առնել ճենապակու գործարանը։ Բայց Լոմոնոսովը գործը դեռ չէր սկսել, որ թագավորը հրաժայեց նրան թողնել այդ աշխատանքը։

Այդպես էլ գործարանը չկարողացավ աշխատել Լոմոնոսովի հետ։

Տարիներն անցնում էին, թագավորները փոխվում էին, փոխվում էին գործարանի պետերը, ճենապակի արտադրելու համար գործածարան էին բերում նոր մեքենաներ։ Ճենապակե կերամաքները տարիների ընթացքում փոխում էին իրենց տեսքը։

Ցուրաքանչյուր ժամանակ իր կնիքն էր դնում ճենապակե առնոթի վրա։ Ցուրաքանչյուր ճենապակե իր կարելի չէ կարդալ վրայից գիրք։ Նա կպատմի նրանց մասին, ովքեր նրան շինել են, այլև նրանց ժամին, ում համար շինված է յեղել։

Ահա ձեղ ծուռաիկ, կողքերից ներս ընկած մի թաս։ Սա ցանանման բծերով և ուռուցքներով և ծածկված՝ հատակին հաղիվ նշմարելի W տառն ու Ա յա տպել իրն ինչու չի պահում գործարանի թանգարանում, թղթապահու տակ։

Դա— վինոգրադովի գործն ու։ Դուցե սա առաջին թասն ի՝ ուռուսական կավից։ Նա անշնորհք կերպով և շինված։ Ծերևում ե, որ վառարանը ծխել ու։ Վինոգրադովն իր զանգվածը շինել և Նեվայի ափեր մի խոնավ, կխաթավար խրճիթում։

Ահա մի փոքրիկ ճենապակե քաֆեխոտ տուփ երմիտաժի թանգարանում։ Նրա վրա վարդագույն հրնշտակ և նկարված։ Նա վարդագույն մի մանուկ և գլում վարդագույն որորոց՝ վոր զարդարված և

յերկգլուխ արծիվով Ո՞վ է այս յերևոյթը, ինչպե՞ս չի նկարված քթաթոռի տուփի վրա։

Այս տուփը պատվիրել է Ցեղիզվիտան, յերբ ծնվել է նրա թոռը՝ Նա այդ տուփը լցրել է վոսկե դրամով և նվիրել է իր ժառանգի մոլբեկ վորպես վարձատրություն այն բանի համար, վոր վոչ մի աղվեկ, այլ տղա չի ծնվել վարդագույն յերևոյթ ապագա Պավել I կայսրն էլ։

Այդ ժամանակ զործարանում դեռ մեծ իրար չէին կարողանում շինել Նկարիչ-ակնագործ Զյոլնին է նկարագարել այս թանգարժեք փոքրիկ իրը։ Գուցե նա այս փոքրիկ վարդագույն հրաշակը նկարելիս ճառաչել ու առաջներն է կրճռել չղթայի յերկաթը տրորել է նրա պարանոցը։

Նայինք խոշոր, սպիտակ, փայլուն ճենապակի իրերը։ Ճենապակե ֆիգուրիկը պատկերացնում է Յեկատերինա թագուհուն՝ վորպես աստվածուհու։ Զարդիկ աստվածուհին քնակվում է ճենապակի փոքրիկ տաճարում։ Նրա առաջ խոնարհվում են հաղթված յերկրները չղթաչակապ կանայք։ Ժամանակը—հյուսվոր ծերուն ճենապակի տախտակի վրա նրա քայգործություններն է գրում։ Թեկթախտերի վրայի սրբապատկերները ծաղիկներով պսակում են թագուհու կիսադիմը՝ կամ ընկած կրկնակզակով։ Ապուրամաններն ու աստվածամոլների վրա փայլում է նրա վիզիտը չորսի՝ փայլի մեջ։ Նույնիսկ ադամանդներն ու պղպեղամանները փառաբանում են թագուհուն՝ ամեն մեկն իր տեսակը։

Ճենապակե գեղջկուհիները ու գեղջուկները ուսուցական պարում են պարում կամ դուդուկ են նվագում։ Նրանք կարմրերես են, գեղեցիկ, զարդարուն։ Կարելի չի կարծել, թե կալվածատեր ագայի մոտ նրանք կուշտ և ուրախ են ապրում։

Դա ազնվականական ճենապակի չի։ Այդ ժամանակ յերկրում տեր էին ազնվական-կալվածատերերը։ Նրանց էր պատկանում ամբողջ հողը, նրանց ձեռքում էր վողջ առեվտուրն ու ամբողջ վաճառքը։

Ի՞նչպես կարող էին ազնվականները չփառաբանել ճորտատիրական կարգը, չգովերգել իրենց բարերարուհի թագուհուն։

Բանաստեղծները թագուհուն անվանում էին «աստվածամայն» և «աստվածների սիրելի»։ Նկարիչները պատկերացնում էին նրան վորպես աստվածուհի։ Ճենապակին նույնպես փառաբանում էր թագուհուն։ Այդ ժամանակ ամենապայ նկարիչներն աշխատում էին ազնվականների պատվերով։ Այս ճենապակին գեղեցիկ է, տոնական, նրան կարող ձեռք է նկարագործել։

Իսկ այս ինչ ցինովորական անոթ է։

Պնակների վրա կաղակներ են աշխատում, հուսաքներ են սրինք ճոճում, հետևակներ են հրացաններ լցնում։ Թեյի թասերի վրայից

արկացած խնդրում են պետերբուրգ։ Մեծ վաղերի վրա առջևից, քյոսեվից ու կողքից գվարդիական համազգեստներ են նկարած։ Թալքերը ձգած են, կռճակները փայլում են, ծակոցն ու յեղերը ոգևորված են։ Թվում է, թե սա վոչ թե նկարիչ, այլ զինվորական գերձակ է նկարել։

Այդ անոթի տերը—Նիկոլայ I պատկերացրած է ճենապակե շերեփի վրա։ Նա ձիով սլանում է ուլանների շարքի առաջ։ Աչքերը չռած են, փետրափունջը ճոճում է յուռանկյուն գլխարկի վրա։ Ուլանները լարի պես ձգվել, կանգնել են։

Թվում է, թե ուր վոր է, կթմբկահարն է շարքի միջով մի զինվոր կարտաքսեն, զինվորը կընկնի գալար ճիպոտների հարվածներից տակ, կզղոգան Մերերի ճանապարհը բռնած՝ աքսորականների շղթաները։

Արդեն հեղափոխական շարժումն սկսվել էր, յերբ գործարանն այս անոթը բաց թողեց։ Հին ճորտատիրական կարգը հիմնովին փըլչում էր։ Նիկոլայ I աշխատում էր թնդանոթների ու սվիններով ուժով պաշտպանել ճորտատիրական կարգը։ Նա հենց միայն իր զինվորների վարժության մասին էր մտածում։ Նա խոսում էր զինվորական թատերով, ուսում էր զինվորական պանկներով։ Ժնիսային պատերի անկյուններում զինվորական վաղեր էին դրված, կարծես կանգնած պահակներ լինեյին։

Ճենապակու գործարանում կարգ ու կանոնին հատուկ վոստիկանապետ էր հսկում։ Հանցանք գործած վարպետների ճակատներն էյին ածիլում և զինվոր էյին ուղարկում։

Իսկական նկարիչները վայսերական գործարանում ակամա էյին աշխատում։

Արհեստանոցներում նատած էյին համազգեստներում սեղմված սահմանավորներ։ Նրանց «գիզարլիները» ատղատուկ էր, պետական, սարկամիտ։ Նրանք կարողանում էյին նկարել միայն զինվորական գլխարկներ և ուսադիրներ սերնիկային սպաների վրա և պայուսակներ՝ սերնիկային զինվորների ուսին։

Ուսադիրներն ու կավիճով մաքրած կռճակները, վոր այնքան սերում էր թագավորը, ռուսական զորքը պատուհաններից չէին տեսնում։ Հետաքրքիր յերկիրը տանուլ տվեց Ղրիմի պատերազմը։ Սեվաստոպոլի տակ նպարավոր ռուս զինվորներ ընկան։

Թագավորը մեռավ տանց տնտնելու իր զորքերի չախչախվելը։

Դրանից հետո ճենապակու գործարանի սահմանավորները քաշվում էյին պահակների վրա առմշտունչ զինվորներ նկարելու։ Ձեյին ուզում նոր թագավորին անմեթեթալ զինվորական գործեր հիշեցնել։

Ինչ նկարներով էյին նրանք ճենապակին զարդարում։

Այդ ժամանակ ռուս լավագույն նկարիչները համակիր էին հեղափոխությանը։ Նրանք այնպիսի նկարներ էին ստեղծում, որոնցում մեզադրվում էր հին կարգը։ Նրանք պատկերավորում էին աղքատ գյուղացիներին, պատերազմում ընկնող զինվորներին և նոր կյանքի համար պայքարողներին, որոնց թագավորը Սիբիր էր ուղարկում։

Ցերը գործարանի դիրեկտորները ճենապակու համար նկարներ պատահելով ցույց տանդուս էին գալիս ու տեսնում այդ «դավաճիրը» նկարները, նրանք վատ էին դդում։ Մի քանի կարևի չի արքայական ճենապակու վրա գեղջուկներ ու խռովարարներ նկարել։ Ճենապակու կենդանագրությունը թագավորին վոչ մի կերպ հեղափոխության մասին չպետք է հիշեցնի։ Ճենապակի իրերը պետք է շքեղ ու գեղեցիկ լինեն։ Նկարիչներին գործարան չպետք է թողնել։

Հավաղդեստավոր սատիճանավորները, որոնք առաջ տիկնիկային պինդորներ էին նկարում, այժմ յուրանդով սկսեցին ճենապակու վրա հովվուհիներ, գեղեցկուհիներ ու սիրահարներ նկարել։ Նրանք ջանք էին թափում, որ իրենց նկարները քնքուշ, ուրախ և խաղաղասեր լինեն, մինչդեռ նկարներն ստացվում էին կոպիտ, տաղտուկ և քաղցր-մեղուր։ Սատիճանավորները նկարել չէին կարողանում։

Հենց այդ ժամանակ գործարանում մի ահագին վարդագույն վազ ընկեցին։ Կես արշինանոց սիրահարներն անշնորհք կերպով պատում են պատերին—լայն տարածելով վարդագույն քնկիկները և վեր բարձրացնելով հատ ծնկները։ Ծաղիկներ են հյուսվում, փայլ և տալիս վսկին վազի պատերին—չգիտես ինչու—կպցրած մորուքավոր գլխների վրա։

Այս վազի վրա մի քանի տարի աշխատեցին։ Վերջապես ու հիացան իրենց աշխատանքով։ Մեկը շքանշան ստացավ, մյուսը՝ մեդալ, որն էլ ժամացույց՝ թագավորից։

Իսկ ռուսական գեղարվեստն այլ ճանապարհով էր գնում։

Այն տարին, յերբ վազը վերջացավ, յերիտասարդ նկարիչ Ռեպինը ցուցադրեց իր «Բուռլակները» նկարը։ Բուռլակները քաշում են բեռնակիր նավը։ Նրանք ծանր են շնչում։ Ճմռված մազերի տակ կիզ նայում են նրանց սարսափելի, տանջված աչքերը։

Հաղարավոր մարդիկ գնացին ցուցանդեսը՝ տեսնելու այդ նկարը։ Նրա մասին գրում, վիճում, խոսում էին։ Նա կենդանի կյանքն էր շոշափում։ Նկարիչը ցույց էր տալիս մարդկանց, թե վորն է իսկական կյանքը։

Գալատական գեհենիներն ուսերը թոթվում ու շուռ էին գալիս Ռեպինի նկարից։

— Մի քանի սա արվեստ է,—ասում էին նրանք,—սա այնքան տգեղ է...

Սիրահարներով զարդարված վարդագույն վագը նրանց թվում եր արվեստի հրաշք։ Այժմ ոչ և հիշում այդ վագը։ Բոլորից մոռացված, դրված և նա գործարանային թանգարանում՝ վորպես վատ, ան ճաշակ աշխատանքի որինակ։

Իսկ Ռեպինի նկարը հայտնի չի ամբողջ աշխարհին։

Մի քանի տասնյակ տարիներ անցան և ճենապակե անոթը դարձավ տխուր, վհատ մի բան։ Միմ ու փայլատ արձանները անընդհատ նորեն կախել են գլուխները։ Նրանց մազերն արձակված են, հայելները՝ կոկիտ կերպով կիսախուփ։ Այդ արձանների անունները ուրախ չեն— «վիշտ», «հոգնածություն», «նահատակություն», «նավի վերջին հառաչանք»։

Նրանց կոշիկն—կանթեղներ, խաչեր, ձվեր՝ արբերի պատի դեմքերով։ Ցերկայն վոտ ծաղիկներն իրենց ցողուններն են ձգում դեպի վազերի պատերը։ Լացող ուռենիներն իրենց թախծոտ ճյուղերն են կախել սևատեղների վրա։ Թասերը ծածկված են գորշ, գորշ-կանաչ, գորշ-կապտագույն նախշով։

Նայում ես այդպիսի ճենապակու,—սիրտդ կաթկթես կատուներ են չանդուռ—այնքան թախծոտ են։

Այդ վերջին իբնակալների ճենապակին է։

Միապետությունը կործանվեց։ Հեղափոխությունը շեմքը կտրեց։ Թագավորները դողում եյին իրենց կյանքի համար։ Աշխարհից կորվածք, ապրում եյին նրանք իրենց պալատում, կանթեղներ եյին վառում, հավատում եյին նշանների, լսում եյին կախարդների պատմություններ։ Նրանք ապրում եյին տեսիլքների աշխարհում։ Նրանց շրջապատում եյին ուրվականների նման գորշ ու հուսալքված իրեր։

Կայսերական գործարանում որերը ձգվում եյին դանդաղ ու քարեհոգի։ Հոգսի առարկա չկար։ Կաոլինը, փայլաներկը, նկարիչը— այս բոլորը պատրաստ բերվում եյին արտասահմանից։ Գործարանն աշխատում եր առանց շտապելու, կամաց-կամաց։

«Ճենապակե անկեղանոց»,—ժռտովն անցնելիս ծաղրելով ասում եյին մետաղագործներն ու ատաղձագործները։

ՆԵՎՍԿԻ ՈՒՂԵԿԱԼԻՑ ԱՋՆ ԿՈՂՄԸ

Վիննոզրադովի մահից հարյուրհասուն տարի անցավ։ Նեվայի ձախ ափում, վորտեղ առաջ ճահիճներ ու վիտ անտառակ եր, այժմ կանգնած եյին նոր գործարաններ, ծխում եյին բարձր ծխնելույզներ։ Մեծ մյան նևսկովի գործարանը ժամանակներ եր շինում, Ալեքսանդրովսկոյեն շոշ եկատքեր. «Ալեսաը» չուգունն եր հալում։ ճանկում եյին մանանագործ-

Ծական դազգյանները. զժվժում էին հարուստ վաճառականները՝ Ծորընտովի, Մաքսվելլի, Պալի գործարանների իւրիկները։

Անառատ հրվանդանում, ուր Վինոգրադովը լուսնածագն էր դիմավորում, այժմ Որուխովյան պողպատաձուլական գործարանի հսկա կորպուսներն էին բարձրանում։



Նոր գործարաններում տասնյակ հազարավոր բանվորներ էին աշխատում։ Նեվայի ափին, Շլիսելբուրգյան ճանապարհի տասնմեկ վերստ չերկարությամբ տարածված էին Սմոլենկա, Ալեքսանդրովկա, Որուխովո, Մուրզինկա նոր ավանները։

Ֆարֆորովսկի փոքրիկ գյուղակը ջրափնյա ուռենիների թփուտներում ընկած իր հին փոքրիկ չեկիզացով կորչում էր հարեվան ադմիրալտեյ գյուղերի մեջ։

Ճենապակու գործարանը կարծես հնացել ու կպել էր գետնին։

Նրա վեց-այնքան բարձր, աննշան շենքում աշխատում էին, ինչպես հնում էր, չորս-հինգ հարյուր բանվոր։ Գործարանն ամառն աշխատում էր ութ, ձմեռը՝ վեց ժամ, իսկ գեկտեմբերյան մութ օրերին՝ գրանից էլ պակաս—որական չորեք ժամ։ Աղյամոզկին գործարանը դատարկվում ու լռում էր։ Ծանր չերկաթի կլկնափեղկերը ծածկում էին թանդարանի պատուհանները։ Դարպասի մոտ ծուլ-ծուլ ման էր գալիս պահապանը—պաշտոնաթող մի զինվոր՝ քարձր մազմզոտ գլխարկով։

Իսկ հարեվան մեծ գործարաններում որ ու գիշեր աշխատանք էր գնում։ Պատերի արանքից լսվում էին մեքենաների գղրդոցն ու զրնգոցը, մարմերի քրխկոցը, հնոցների բոցի բառաչը։ Գործարանամասերի պատուհաններն ադոտ կերպով լուսավորվում էին։ Մոմի կաորները գազգյաններին կպցրած, բանվորներն իրենց աշխատանքն ակսում էին լուսաբացից առաջ, իսկ վերջացնում էին կես գիշերին։

Մանածագործները պետք է աշխատին որական $14^1/_2$ ժամ։

— Մենք փականագործների ու չարխագործների պես չենք,— գանգատվում էին մանածագործները,— նրանք աշխատանքից տուն գալով, միանգամից մի ամբողջ կճուճ շիլա չեն ուտում, իսկ մենք հոգնածությունից ուտել անգամ չենք կարողանում։ Ուտելուց բոլորովին կորվել ենք։

Սակայն փականագործներն ու չարխագործներն էլ հեշտ չէին ապրում։ Որենքով նրանք պետք է աշխատին որական $10^1/_2$ ժամ,

սակայն վարպետները հաճախ նրանց դիշերային աշխատանքի էլ էին նշանակում։

— Ցես չէլի ապրում, այլ միայն աշխատում էլի, աշխատում էլի ցերեկը, աշխատում էլի լերեկոյան և դիշերը,—հիշում է Սեմյանովիչի գործարանի փականագործ Բարուշկինը։ Ցերբեմն լերկու որով էլ տուն չէլի գալիս։ Հիշում եմ մի ժամանակ, շատ շտապ աշխատանքի ժամանակ տեղավճած էլի աշխատել 60 ժամ՝ ընդմիջում անելով միայն դասելիս։ Բավական է ասել, որ լերբեմն գործարանից տուն գնալիս ճանապարհին քնում էլի և արթնանում էլի լապտերի սյունին դիպչելիս...

Այսպիսի ծանր աշխատանքի հետ միասին մանածագործները կիսաքաղց էլին ապրում։ Մանածագործներն ավելի շատ էլին վաստակում, սակայն աշխատանքով իրենց այնպես էլին ուժասպառ անում, որ ինչպես բարուշկինն է ասում, «որ ու արև չէլին տեսնում»։

Բանվորները պայքարում էլին տերերի դեմ՝ բանվորական որվա կրճատման, տուգանքների վերացման, աշխատավարձի հավելման համար։ Շլիսելբուրգի ճանապարհին ամեն տարի բանթոդներ ու գործադուլներ էլին լինում։

— Ասացեք խնդրեմ, բանվորի ինչքին է պետք ազատ ժամանակը,—վրդովվում էլին գործարանատերերը։ Աշխատանքից ազատ վիճակում ձեր պետի գնա, քնչ պետք է անի, պարզ է՝ միայն հարբեցողություն։

Բանվորները գիտելին, թե ազատ ժամերին ուր կդնան, ինչ կանեն։ Գործարանային չհանելները քնից կարվում էլին, որ կարգան։ Նրանցից շատերը սովորում էլին Շլիսելբուրգյան ճանապարհին բացված լերեկոյան դպրոցում։

Այս դպրոցի մասին լուրը հասավ Նեվսկի ուղեկալից այն կողմը։ Այդտեղ գործանալի ուսուցչուհիներ կային։ Նրանք բանվորներին վոչ միայն գրագիտություն ու թվաբանություն էլին սովորեցնում, այլև իրենց աշակերտներին հարցնում էլին նրանց կյանքի մասին։ Նրանք կարդացում էլին խելացի խորհուրդներ տալ, փոքրանքի մեջ ընկած մարդուն քաջալերել, սիրտ տալ։ Նրանք սիրում էլին իրենց դպրոցը։

Դասերից հետո աշակերտները շրջապատում էլին ուսուցչուհուն, ամեն մեկն ուզում էր թեկուզ մի բան ասել նրան։

«Փայտեղենի պահեստների ժողովի պահակը փայլուն դիմքով ջեկուցում էր ուսուչչուհուն, թե կինը տղա չի ծնել։ Թոքախտավոր մանածագործը նրան մի կարճ փնթացություն էր ցանկանում, վորովհետև իրեն զրպարտություն էր սովորցրել... «Միխայլան, վոր անցած տարի մեզ մոտ զրպարտություն էր սովորում, ուժից վեր աշխատելուց վնասվեց, մեռավ և մեռնելիս ձեղ էր հիշում. հրամայեց բարեկել ձեղ և միշտ կյանք ցանկանալ...», — պատմում է Նադեժդա Կոնստանտինովնան այդ դպրոցում ուսուցչուհի լինելու ժամերին աշխատելով զործարանում գեղի ու մեր մեջ, վարպետների հետ կռվելով, յուրաքանչյուր քայլում ստորությունների հանդիպելով՝ աշակերտը հիշում էր, վոր յերեկոյան մի լավ բան և պատմում իրեն — ինքը կգնա դպրոց և կմոռանա զործարանային անախորժությունները։ Նա ամբողջ ուժով աշխատում էր ազատվել յերեկոյան աշխատանքից։

— Դպրոցը պանդոկ չէ։ Պանդոկ կարելի յի կեղտոտ էլ գնալ, իսկ դպրոցն այլ բան է, այնտեղ կեղտոտ չես գնա, հարկավոր է լվացվել, շորերը փոխել, — ասում էին մեծատղաղործները՝ լվացվելով ջրատոր մակ և ձեռների կեղտը ոճառով լվանալով։

— Դպրոց գալով և նստարանի վրա նստելով, մենք մի առանձին զգացմունքով էինք սպասում ուսուցչուհուն, վորի գալը մեր մեջ մի անկարգարելի ուրախություն էր առաջ բերում, — հիշում է Բաբուշկինը։ Բոլոր աշակերտները, վորոնք դպրոց էին հաճախում, չէին կարող տեսածը լսածով չդարմանալ ու չդովել այն, հենց դրա համար էլ այդ դպրոցն այնպես բարձր էր կրում իր գիտելիքները։ Բիչ է այդ։ Հաճախ մի աշակերտ դպրոց էր քաշում իր ընկերոջը՝ գոնե մի անգամ տեսնելու և լսելու դպրոցի պարապմունքները և ուսուցչուհուն, և ինքս էլ նույն նպատակով գնացել եմ մյուս խմբերը։

Ուսուցչուհիները դասերի ժամանակ կարողանում էին անցղոտի կերպով պատմել աշակերտներին Ֆրանսիական Մեծ հեղափոխության, դեկաբրիստների խռովության, անգլիական բանվորական մխիթարությունների մասին։ Այս պատմություններն աշակերտները լսում էին ագահաբար։

Զարդացած բանվորները գիտի էին ընկնում, վոր ուսուցչուհիները վորևե հեղափոխական խմբակի չեն պատկանում։ Դասերի ժամանակ

Նրանք ուզում էին ակնարկել իրենց կառուցիների մասին, նշան տալ ուսուցչուհուն, վորպես թե՝ մենք էլ ձեզ հետ ենք։

Պատուհում էր—գրատախտակի մոտ կանչված աշակերտը, վորպես քերականական կանոնի որինակ մի «առանձին» տեսակի պարբերություն էր գրում—«չուտով մեր գործարանում գործադրել կլինեն», կամ «մենք գիտենք, թե բանվորական աշխատանքի հավելումն ուր է գնում», ու զննող հայացքով նայում էր ուսուցչուհուն։ Վերջինս չէր ցույց տալիս, թե ինքը զարմացած է, բայց դասից հետո աշակերտին մի կողմ կանչում ու խորհուրդ էր տալիս ավելի զգույշ լինել։ Պրիստավն էլ շարունակ գալոց էր գալիս։ Վոստիկանությունն առանց այն էլ հետևում էր ուսուցչուհիներին։ Դասարանում կարող էին լրտեսներ լինել։

Ուսուցչուհիների և աշակերտների լուռ համաձայնությամբ դասերի ժամանակ հեղափոխության մասին չէին խոսում։ Բայց յերբեմն պարապմունքներից հետո մի քանի աշակերտ մնում էին դասարանում։ Յուրաքանչյուրի առաջ մի տետրակ էր լինում դրված, վորոնց մեջ դերեր էին լինում արտագրած «Ներոսը»-ից, «Ժենիթաթա»-ից կամ մի այլ կոմեդիայից։ Յեթե պրիստավը գռնից նայում էր վոտ կոխեր և կասկածանքով նայելով դասարանին, հարցներ. «խոկ դուք, ազավնյակներ, ինչ եք շինում այստեղ դասերից դուրս ժամերին», ուսուցչուհին կպատասխաներ. «ա՛խ, բարեկինդան շաբաթում խազալու համար պիես ենք պատրաստում»։—Այ թե ինչ,—կասեր պրիստավն ու կհեռանար։ Բայց աշակերտները դերեր չէին սովորում։ Նրանք լսում էին ուսուցչուհու պատմածները բանտերում ու սիբիրյան տաժանվայրերում ընկած հեղափոխականների մասին։ Նրանք նայում էին Մինին Ռուսաստանի քաղցած գյուղացիների նկարներին։ Նրանք սովորում էին առել ինքնակալության։

Այսպիսի յերեկոներին դպրոցի դռների մոտ հերթապահում էին հատուկ նշանառուներ։ Նկատելով պրիստավի կամ վոստիկանի մոտենալը՝ նրանք վոռնգի մասին նախազգուշացնում էին աշակերտներին և ուսուցչուհուն։ Այդ ժամանակ ուսուցչուհին աշակերտների հետ սկսում էր վերլուծել կոմեդիան։

Դպրոցական քիչ զբաղմունք ունեցող բանվորները գաղտնի հավաքվում էին բնակարանները և սրբված գրքեր էին կարդում։ Հաջաքից նրանց մոտ գնկավարող ուսանողներ էին գալիս։

Աշակերտներն առանձնապես սիրում էին մի գնկավարի, վորին «ճաղատ» էին անվանում։ Նա մեծ, դուրս ընկած ճակատ և շեկ մորուք ուներ։ Պարապմունքի գալով և հին վերարկուն մի կողմ գցելով՝ նա գրպանից հանում էր մանր տառերով գրված թերթիկներ, պարզ ու հասկանալի լեզվով խոսում էր, թե բանվորներն ինչպես պետք է պայքարեն իրենց իրավունքների համար։

Գայքարը յերկար կանի։ Ցերերի թիկունքում կանգնած է թագավորը։ Նա ոգնում է կապիտալիստներին բանվորական աշխատանքի ավելցուկը քամելու։ Նա կազակներ է ուղարկում՝ բանվորներին ծեծելու։ Նա բանտ է նստեցնում բանվորական գործի լավագույն մարտիկներին։

Բանվորները պիտք է գահընկեց անեն թագավորին և վոչնչացնեն կապիտալիստներին։ Բանվոր գասակարգը նոր իրավակարգ կսահմանի, վորի ժամանակ վոչվոք չի կարող ուրիշի աշխատանքի հաշվին հարստանալ։ Այն ժամանակ վրա կհասնի սոցիալիզմը։

Ով լսում եը այս գասախոսին, գիտեր, վոր այդպես էլ կլինի։ Ամեն մեկի համար պարզ գարձավ, թե ինչ պիտք է անել այսոր և ինչ՝ վաղը, վոր կարելի լինի շարժվել գեպի հեռավոր նպատակը։ Աշակերտները գասախոսի համար գրություններ եյին բերում աշխատավարձի, տուգանքների և նեվոյի այն կողմի ուղեկալից գուրս գտնվող գործարանների աշխատանքային օրենքների մասին։

— Մենք միշտ հիանում եյինք մեր գասախոսի խելքով՝ շարունակեվ սարհոսել մեր մեջ, վոր խելքի միջոցներից մեզքը թափվում են,—ասում է Բարուշկինը։ Իմ գործիքների արկղը միշտ լիքն եր լինում գանազան տեսակ գրություններով, վոր հետո տալիս եյի գասախոսին։

Ընկերներն այս գասախոսին անվանում եյին «Ծերուկ»—գործ ձյալ մեծ խելքի և անսասան կամքի համար։ Իսկ անձնագրով նա կոչվում եր Վլադիմիր Իլյիչ Ուլյանով։ Բարուշկինը և մյուս բանվորհեղափոխականները նրա աշակերտներն եյին։

Վոստիկանությունը 1895 թվի աշնանը իմացավ, վոր Նեվսկի ուղեկալի այն կողմի գործարաններում մեկը հեղափոխական թերթիկներ և ցրում։ Բանվորներն այդ թերթիկները գտնում են կաթսաներում, շոգեքարշի շրջանակներում, իրենց վերարկուների գրպաններում, մինչև իսկ արաքչոցների պատերին կպցրած։ Նրանք այդ թերթիկները կարդում և պարտանում են, թե իրենց կյանքն ինչպես ճիշտ և իսկությանը համապատասխան և նկարագրած այդ թռուցիկներում։ Նրանք իրենց պահանջներով դիմում եյին իրենց տերերին։ Արդեն գործադուլ եր անում տոկոնոյան ջուլհակները, արդեն Լաֆերմ գործարանի ծխախոտ պատրաստող բանվորուհիները պատուհաններից գուրս են գցել պարկուճներով լի արկղներ, մյուս գործարաններում ևս շուտով անկարգություններ կսկսվեն։

Վոստիկանությունը քննելով իմացավ, վոր թռուցիկները կազմում են բանվորական խմբակների գնհավարները, իսկ գործարաններում ցրում են խմբակների անդամները։ Վոստիկանությունը ձերբակալեց Վլադիմիր Իլյիչին և նրա ընկերներին։

Իրենց գասախոսին կորցնելը խմբակների անդամների համար ծանր եր։ Ցերը Վլադիմիր Իլյիչի ձերբակալությունից հետո Նադեժդա

Կոնստանտինովկան առաջին անգամ դպրոց չեկավ, Բարուշկինը նրան սանդուխքների տակ մի անկյուն կանչեց և ցույց տվեց մի թռուցիկ, որը ինքն էր կազմել։

Թռուցիկում ասված էր, թե այն մարդիկ, որոնց վոսոկոսնուքյունը «քաղաքական հանցագործ» է անվանում ու բանտ նստեցնում, բանվորների ամենալավ բարեկամներն ու պաշտպաններն են։

Շուտով բանտ տարան նաև Բարուշկինին։ Բայց գործարաններում թռուցիկները ավելի հաճախ էին չերևում, գործադուլներն ավելի հաճախ էին անցնում։

Նեվսկի ուղեկալի մյուս կողմում աշխատում էր «Բանվոր դասակարգի ազատության համար պայքարի միությունը»։

ՖԱՐՖՈՐՈՎՑԻՆԵՐԸ

Նեվսկի ուղեկալի մյուս կողմում ընկած Ֆարֆորովոյն պրոլետարիատ էր իր առանձին կյանքով։ Ֆարֆորովցիք մյուս բանվորների շարքում կարծես առանձին ցեղ լինեին։ Նրանցից շատերը տոհմական «պետական աշխատավորներ» էին։ Նախկին գործարանատերն ճորտերից ժառանգաբար հորից մորդուն էին տրվում հենապակու արհեստ գաղտնիքները։ Ժառանգաբար էին տրվում նաև կույր յերկյուղն իշխանավորների առաջ և մեծամիտ արհամարանքը դեպի մյուս գործարանների բանվորները.—մենք ֆարֆորովցիներս, դե, սպիտակ վոսկր ենք, իսկ դուք—աղմկարարներդ, տրեխավորներդ վոչ թե մարդիկ, այլ մարդուկներ եք։

Ոտարները դժվարությամբ էին աշխատելու մտնում կայսերական գործարան։ Վարպետներն ընդունում էին միայն նրանց, ում քեռին, խնամին կամ քնակալն աշխատում էր գործարանում, միայն նրանց, որոնց համար ինքը պրեստավը կարող էր ասել. «Սրա վրա, փառք աստծու, վոչ մի «գաղափար» չի նկատված»։

Ֆարֆորովցիք իրենց բարձր դասն ու ավրտոն ունեին։ Նախընչները հավաքվում էին բարձր դաս, «լավ մարդիկ»։ Նրանք սերթուխներով էին գործարան գալիս։ Նրանց ձեռքի գործերն ամեն տարի թաղավորական պալատ էին տարվում։ Ինքը թագուհին կոթակոնցն անտարբեր աչքերին դրած, դիտում էր նրանց նախշած վաղերը, սկուտեղները, զատկական ձվերը։ Պալատական նախարարը հետևում էր նրա ժպիտին ու հայացքին։ Այն նկարիչը, ում գործերը դուր էին գալիս թագուհուն, վոսկե մեժացույց կամ պատվանշան էր ստանում։

Նկարիչներն ապրում էին սեփական տներում. այդ տներն ունեին վարագուրավոր ու խորդենավոր պատուհաններ։ Այդպիսի առաջին անկյունում վոսկեզոծ տապանակ էր փայլում։ Մեծափոր ինքնայիաը փայլում էր ասեղնագործած սփռոցի վրա։ Կամոդի վրա ճենապակե փոքրիկ վազերում փայլում էին ջրվեժ վարդեր, վորոնց վրա խիտ կերպով ճանճեր էին նստած։ Ամուր անդունդներում կուտակված էր այդ գյուղի հարստացուցիչի նախանձելի ոժիտը։

Մյուս բանվորների յերեխաներին անվանում էին Միշկաներ ու Գրիշկաներ, Մայկաներ ու Յուշկաներ, այս գյուղացիների տղաները կոչվում էին Ջնաթոլիներ, Ավետիրներ, Վալենտիններ, իսկ աղջիկները՝ Ազլաներ, Ադելաիդաներ, վոչ Մատրյոնաներ, այլ Մատիլդաներ, վոչ Գևորգեյաներ, այլ Գրիֆինաներ, վոչ Ջնյուտկաներ, այլ Նյուրոչկաներ։

«Ավել մարդիկ» ծնված որից գիրք չէին կարդացել ու թթվոտ հեռու էին Ջնում ամեն տեսակ ուսմունքից։

— Ինքդ դատիր, յես ինչու պետք է ինչ-վոր Հնդկաստանի մասին իմանամ,—ասում էր մի ֆարֆորովից մյուսին։ Ցավ տիրեղ է այդ Հնդկաստանը։ Մեր հայրերն այն չեն տեսել, մենք էլ յերբեք չենք տեսնի, ի՞նչ ոգուտ ինձ այդ Հնդկաստանից։

Խոսակիցը նրան լրացնում էր իր պատասխանով.

— Գիտես յես գնացի նրանց դպրոցը։ Չարաճճի ազգականս ինձ կանչեց։ Նստեցի, լսեցի ու թթվեցի։ Ուսուցչուհին, հասկանում ես, գրատախտակի վրա ինչ-վոր փոքրիկ յեռանկյունիներ է նկարում ու ասում է, թե այս անկյունները հավասար են, իսկ այն—հավասար չեն։ Աչքը ինչ է, յես յերեխա չեմ, ինչ է, սկսելու յեմ անկյուններով զբաղվել։ Յերեխաների համար, գուցե այդպիսի հեգիթաններ լսելը հետաքրքիր է, իսկ ընտանեքաղաղ մարդու համար, նույնիսկ ամոթ է։ Իսկ հավատում ես, այնտեղ մորուքավոր աշակերտներ կան նստարանների վրա նստած ու այդ նույն յեռանկյունիները նկարում են տետրակներում։

— Ի՞նչ ես ասում.

— Ասում եմ... իսկը— ինչպես գրշ սիսոյկաներ [1]։ Ծիծաղ է, ծիծաղ։

«Ավել մարդիկ» կիրակի որերը յեկեղեցի էին գնում, յեկեղեցուց հետո կարկանդակով սուրճ էին խմում, իսկ հետո ուղևորվում էին պանդոկ։

Ֆարֆորովցի վորևե ճախարակագործի հետ դուրեկան էր, յեթե նկարիչները ձեռք տալով բարևում էին նրան և թույլ էին տալիս, վոր իրենց սեղանին նստի։

---

1) Հնում մայրաքաղաքի բանվորները գյուղական բանվորներին սիսոյկա էին անվանում։

Ճախարակագործները, քանդակագործները, հղկիչները ավելի վատ ավելի աղքատ մարդիկ էին համարվում. բայց նրանք էլ էին լեռ-ում սեփական տուն ունենալ և «լավ մարդկանց» մեջ դուրս գալ Նրանց կանայք դառն արտասուքով դիմում էին իրենց մարդկանց. «Լավ մարդիկ ապրում են պողոտայի վրայի տներում, իսկ մենք, անարժանների պես ապրում ենք ուտիճալիճ ձեղքում—Շեմիլովիա փողոցում: Լավ մարդկանց կանայք յոկղեցի չեն գնում նորատա-, րազ սալոնները, իսկ մեզ—կտավավորներիս համար մարդկանց մեջ չերեվալն ամոթ է»:

Հնոցապանները, կավ տրորողները, վառարանագործները, կառ-ապանները գործարանում «անարժեք» մարդիկ էին հաշվվում: Նրանք ապրում էին բանվորական հանրակացարաններում՝ նեղված ու կիսոտա: Նրանք վարձվում էին սրա նրա համար փայտ կտրատելու, իսկ սահ-ը Նեվայում ձկնորսությամբ էին պարապում: «Լավ մարդիկ» նրանց հետ գործ չէին ունենում: «Լավ մարդն» իր շեմքից ամեն պա-տահածի ներս չէր թողնի: Ցեխե փող ունես, յեխե վարպետը քո նկատմամբ սիրալիր է, յեխե վոստիկանը քեզ անունով ու հայրա-նունով է կանչում, ներս մտիր, նստիր, հյուր կլինես: Իսկ «անարժեք» մարդը պատահում էր նախասենյակում վռնտվելն էր վեր ու վար ա-նում, խոնարհում էր սրբապատկերի առաջ, մինչև վոր տերը նրա վրա կնայեր ու կվճռեր փնթփնթար:

Ինչպե՞ս կարող էր շնորհ սրել մենք ձկնպետների հետ, կարծես, գործ չունենք... Ինձ հյուրին էլ մի լավ կտեսներ հենց նրա համար, վոր նա բաղնյի պես մեզ էր ու կոշիկներն էլ քրքրված էին:

Հարևան բանվորները ֆարֆորովցիներին չէին սիրում, պատա-հած տեղն էլ ծեծում էին: Որովհետև Յահիները Վասիլ կոչված ամառանոցի մոտ նրանց զազանակներով էին ապատում: Ամառվա ցիք ֆարֆորովցիներին ծեծում էին բաղնիքում՝ գործի գնալով բաղնիքի ավելներն ու փոքրիկ դույլերը: Բանն այնտեղ հասավ, վոր ֆար-ֆորովցիների դիրեկտորն իր բանվորների համար առանձին բաղնիք շինեց, այլապես ֆարֆորովցիք ամեն կղզարեցին լողանալ:

Ֆարֆորովցիք իրենց թշնամիների հետ կռվծք կռվծք էին տա-լիս ձևնամարտում—աշնանը՝ գարնում, յերբ կարտոֆիլ էին հանում, ձմեռը՝ մեծ տոներին—Նեվայի սառույցի վրա: Կռիվն սկսում էին յերեխաները—իրար ձնագնդի կապելով կամ վոտ ձգելով: Հետո չա-փահաս տղաները ասքանալով, սկսում էին ծեծել հակառակորդներին: Մեկ էլ տեսար՝ մորուքավորները գնդ շպրտեցին քարերը, վոր քշտեցին Թեվքերը և, մի կողմ հրելով լալկան կանանց, կռվի բռնվեցին: Ճըռ-ճըռում է Նեվայի սառույցը, ձյունի վրա կարմրին են տալիս

ջարդված թիակից թափված արյան հետքերը։ Առավոտ մարտիկներն աշխատանքի չեն դուրս գալիս—մեկը կոտրած առամով, մյուսն ուռած շրթունքով։

Ֆարֆորովցիներին թանգ նստել կուշտ կյանքն ու թագավորական պարգևները։ Իշխանությունն ամեն բանում ծիծաղում էր նրանց վրա։ Հայտնի չէր, որ ֆարֆորովցին տաքուկ տեղից վոչ մի տեղ չէին գնում։ Ամեն ոտաշոր տուգանք, ամեն տնասեկ ստորացում կտաներ, սակայն չէր հրաժարվի սեփական անասկ ունենալուց մաքից։ Իշխանավորների առաջ այսպիսի խոր խոնարհություն, այսպիսի հաճոյակատարություն ոչ մյուս գործարաններում չկար։

Ճորտատիրական կարգի վերացումից հետո էլ կայսերական գործարանի սանդուղքների տակ դեռ 15—20 տարի կանգնում էր այն նստարանը, վորի վրա ծնծում էին բանվորներին։ Բանվորներին հետևում էր դաժան վոստիկանապետը։ Պատահում էր, մի՝ տղա չէր անցնում գործարանի մուտքի, սաստիկ էլ սառնամանիք և։ Տնտուժ և՝ պատուհանի մոտ ցցված և վոստիկանապետը։ Տղան արագ չետ է տալիս բաշլըղը, գլխարիը թոցնում ու խոր գլուխ է տալիս նորին բարեծննդության։ Ցնծ գլուխ չտա, հայրը պատասխանատու կըզտանա։

Այն տարիները, չերբ նիվակի ուղեկալի մյուս կողմում բակից բակ էր անցնում վլադիմիր Իլյիչ Ուլյանովը, վոր յուհից լուռս չէլերթ այն բնակարանը, ուր նրան սպասում էին խմբակի անդամները, ճենապակու գործարանը կառավարում էր դիրեկտոր Գուրևը։

— Սա կատաղի խենթի մեկն էր։ Չեչեր հասկանա՝ խելագար և, թե ուղղակի տխմարի մեկը—հիշում են հին ֆարֆորովցիները։

Գուրևը բոլոր նկարիչներին գործարանից վոտարեց։ Նա ասում էր՝ «Ինչներին են պետք նկարիչները։ Մենք նոր բան չենք հնարի։ Մենք պետք է ընդօրինակենք ուրիշներից»։

Նրա հրամանով ընդօրինակողներն անդադար ընդօրինակում էին անգլիական ու գերմանական նկարները, և դիրեկտորին տեսնելիս՝ խուճն ոնարը կտրում էին այդ յուրաքանչյուրի տարօրինակություն ուներ.—նա ոտներն չէր սիրում և չէր թույլ տալիս, վոր նրանով նկարներ չնկնեն։

Ցերբ Գուրևը գործարան էր մտնում, բոլորը վոտքի էին կանգնում ու խոր գլուխ էին տալիս։ Գլուխ տալն էլ պետք է գիտենալով լիներ։ Մի բացատրեր դիրեկտորին գլուխ տվեց, իսկ հետո ակամա ուսերն ուղղեց և ձեռքով դռան բանեց։

— Դու ինչ ես թելադրե՞լ զգաստ,—գոռաց դիրեկտորը և հրամայեց կես տարի շաբաթական նրան կես ռոճիկ վճարել։

Տոնավաճառին բանվորները իրենց պատվանշանները կախած, գործադուլավոր էին պտտում։ Ունեցվածքը նրանց գույք-գույք կանգնեցնելով, ինչպես ինսուրանսի ագենտներին էին անում, չեկուցին չեր տանում։ Ցնկնեցում արդեն նրանց ընտանիքներն էին սպասում։ Դիրեկտորը, գեմ առաջ կանգնած, աչալուրջ հետևում եր, մոր ֆարիորովցիներն ապրիճեն ճշմարիտ և ջերմեռանդ կերպով։

Հայրերը տղաների գլխին չթաղնում, մայրերը աղրիկներին հյուսերից են քաշում։

— Ջերմեռանդ աղոթիր, ու, անտաղ։—Դիրեկտորը հորդ և նայում։

Համոյակատար տերտերը դիրեկտորին հայտնում եր, թե բանվորներից ով չի խոստովանվելու չկիր, ով և ուշացել առավոտյան ժամերգությանից։ Գալիս ես փող տանալու, տեսնում ես աշխատավարձիդ մի տասնոց հանված է։

— Ախր ինչու համար։

— Ջերմեռանդության պակաս լինելու համար։

Մեկ անգամ բանվորները նախասենյակում կանգնած փող տանալու եկին սպասում։ Մի չարաճճի ճնճղուկ ոդանցքով ներս թռավ, պատուհանի շրջանակների մեջ խփվեց և խճճվեց խծուծի մեջ։ Տղաներից մեկը դուրս քաշեց ճնճղուկը, մյուսն ազատեց նրան խծուծից։ Մատիկից անցնող դիրեկտորը նրանցից յուրաքանչյուրին քսանհինգ ռուբլով տուգանեց—փողի սպասելիս ճնճղուկով զբաղվելու համար։

Աշխատանքից հետո դիրեկտորն իր տան պատշգամբում նստած տուրճ եր խմում ու պղտոտան դեսում, թե ելի ձմ կլստղանա տուգանքը ֆարիորովցիք ժոռոմն անցնելիս խոնարհ գլուխ եկին տալիս նրան։

Մի նկարչի դիրեկտորը շատ եր ներելություն տալիս, վորովհետև նրա հաղուստը գնդեցիկ չեր։ Վերջապես նա իր համար նոր հագուստ ու գլխարկ գնեց և պղտոտա դուրս կեկավ՝ Գուրեղին յերևլուց վախկից, թե յեթանդից՝ նա նոր գլխարկը վայր գցեց ցեխի մեջ։ Դիրեկտորը նրան տուգանեց՝ գլուխ տալ չեմանալու համար։

Մեկ անգամ մի ծեր բանվոր դիրեկտորի պատշգամբի մոտով անցնելիս վայր ընկավ և ցանկապատի մոտ անշարժ պառկած մնաց։

Դիրեկտորը նրան տասն ռուբլի տուգանք գրեց—գլխի դիրեկտորական ցանկապատը հարդալիր վերաբերմունք չունենալու համար։ Գարմվեց, վոր բանվորը մեռած է. նա կաթվածահար եր կսկիծ։ Բայց և այնպես տուգանքը գանձեցին նրա աշրուց, յերբ վերջինս աշխատավարձ տանալու կեկավ։

Ֆարիորովցիները պանդոկից տուն վերադառնալիս յերբ յերեսում եկին խճուճ վրայ պառկած եկին դիրեկտորի տան մոտով անցնել։ Առաջ

Էլին — չէին նույնիսկ դիրեկտորը պատշգամբում նստած էլ չէ, մեկ-նույն է, հարբածին տեսնում էր։ Նրա սենյակի հայելիները այնպես էին դասավորված, որ նրա առաջին և ամբողջ պողոտան ինչպես իր ափի մեջ։ Նորին գերազանցությունը հարբածներին այնպես է հետապնդում, ինչպես վորսորդը՝ վորսին։

Այդ տարիներին Ֆարֆորովոյի գյուղում անուն էր հանել «Բերեժկի» պանդոկը։ Նա զանվում էր մի հին տան մեջ, վորի արտաքին սանդուխքի վրա կոտրած քիերուի քարե սֆինքսներ էլին ընկած և խիստ վեդտով նայում էլին անցորդներին։ Այդ Բերոնի արտաքաղաքային պալատն էր։ Դա դեռ Վիտգրադովի ժամանակից կար։ Գաղում էլին, թե տանից դեպի փոքրոջի տակով մի գաղտնի անցք է գնում, վորի յերկարն դուրն ուղղակի Նեվայի տակ է բացվում։ Վորպես թե այնվատոհմ իշխանն իր տանջած սպասավորների դիակներն այդտեղ էր անհետացնում։

Այժմ պալատն ավերվել էր։ Տախտակե այլանդակ ևից շենքերը ծածկել էլին շենքի յերեսների փառահեղ ճակատը։ Գաղտնանցք պատուհան ձգված պարանների վրա խղճուկ լաթեր էլին չորանում։ Բայց «Բերեժկի» պանդոկը միշտ լինքն էր լինում։ Այնտեղ յերգեր էլին ինդում։ Ինչ չի պատահել, յերբ ֆարֆորովցիք որոշելով դուրս էլին սողում գրսի սանդուխքն ու անցքի սֆինքսին գրկելով՝ պառկում էլին հինգ տան ճանապարհը։ Այն միտքը, թե դիրեկտորը նստած է պատշգամբում, հարբածությունը հանում էր նույնիսկ ամենազուսպ գլխից։ Ֆարֆորովցիք չնայել էլին։ վորը ափի մոտով սողալով էր անցնում, վորը քաշ գալով էր անցնում, վորին ընկերները պատկեցնում էլին սայլի մեջ և ծածկելով ձիրոպե տոպրակով, տանում էլին դիրեկտորի տան մոտով։

Ֆարֆորովցիներն իրենց կոնսպիրացիան և գաղտնի ժողովներն անելին՝ համլուզգրծում։ Այդ «կոնսպիրացիայի» վրա իշխանությունը ժառանգի արանքով էր նայում, միայն հարբեցողներին տուգանում էր։ Բայց յուրաքանչյուր բանվորն, վորին կասկածում էլին խռովարարների հետ ծանոթ լինելու մեջ, իսկույն վռնդում էլին գործարանից։ Առանձին ոստիկաններ—պաշտոնաթող գվարդիականներ—իմացնում էլին դիրեկտորին ամեն բան, ինչ վոր խոսում էլին բանվորները։

Բայց և այնպես, չնայելով ժառանգությունների, չնայելով քաղքենական կյանքի տաղտուկին ու թմրությանը, վոր աշխուժացնում էլին միայն կամն ու բամբասանքը, գործարանում սկսել էլին յերեկալ այնպիսի մարդիկ, վորոնք առաջին անհանգստացնում էլին իշխանատերերին։ Այդ այն տարիներին էր, յերբ Նեվսկու ուղիների մյուս կողմում սկսել էլին հեղափոխական կամքակներ աշխատել։

Բոլոր ֆարֆորովցիք վառների մասների վրա էլին ժան գալիս,

Վիշյն մի գրասենյակային ծառայող փոքր պաշ թմբթմփացնում եր գործարանում։ Բոլորի պարանոցները խոնարհ կերպով կռանում էին սովորական խոնարհումների համար, իսկ այդ գրասենյակայինի կռակը միշտ վեր եր ցցված լինում։ Իշխանությունը հետևում եր տարօրինակ գրասենյակային։

Մի յերեկո դիրեկտորը գրասենյակ մտավ։ Գրասենյակայինը մենակ նստել ու մի բան եր տալում գրամեքենայի վրա։ Դիրեկտորը կամացուկ մոտեցավ նրան, ուսի վրայից նայեց, ցնցվեց և թուղթը գլանից պոկելով, վազեց առանձնասենյակ։

Գրասենյակայինին հենց նույն գիշերը ձերբակալեցին։ Ֆարֆորովցիք շշուկով ասում էին, թե նա հեղափոխական թռուցիկ տպելիս և յեղել։

Հետո վոստիկանությունը հայտնեց դիրեկտորին՝ թե մեքանի ֆարֆորովցիք սկսել են դնալ Շլիսսելբուրգի ճանապարհի վրա գտնվող գյորոցը։

Իսկ այդ գյորոցում դրությունը լավ չեր։ Մի ուսուցչուհի այնտեղ դասախոսություն եր կարդում և հանդուգն ու վիրավորական խոսքեր եր արտասանում հանգուցյալ միապետի մասին։ Նա ասում եր. «Ալեքսանդր II գյուղացիությունը կթի կով եր համարում»։ Լավ վոր պարոն պրեստավը դահլիճում և յեղել։ Նա իր սուլիչով շշայցրել և ուսուցչուհուն հրամայել է լռել։ Մի ուրիշ անգամ աշակերտները դասարաններից մեկում միաինգ են կազմակերպել։ Բարեբախտաբար վոստիկաններն իմացել, բոլոր դռները փակել և ժողովականներին ցուցակագրել են։

Այսպիսի սարսափելի բաներ լսելով՝ ֆարֆորովյան դիրեկտորը գլուխը բռնեց։ Իսկ հանկարծ ֆարֆորովցիները ցուցակ ընկած լինին։ Ամբաստանություն կայսերական բանվորների համար։

Նա ֆարֆորովցիներին հայտարարեց.—ով ուզում և սովորել, նա կայսերական գործարանում տեղ չունի։

Ֆարֆորովցիները վախեցան և սովորելուց հրաժարվեցին։ Բայց գպրոցն արդեն կարողացել եր վնասել գործարանին։ Ձերբազատվել կենդանակից Նազարովը, վոր գործարանային աշակերտներից եր, իշխանության հպարտությունն ու պարծանքը, սկսել եր իրեն շատ տարօրինակ պահել։ Ամում էր—նա գպրոց և գնում, ծանոթություն և պահում կասկածելի մարդկանց հետ։ Ամում էր—նա այդ մարդկանցից արգելված թերթիկներ և ստանում։ Ընտեղը գործարանում տեսել է, թե ինչպես Նազարովը մի թերթիկ և տվել մի բանվորի։

— Ի՞նչ, նա քեզ ինչ տվեց,—հարցրել է ընտեղը։

— Ինչ վոր տվեց, վոչ վոք չտեսավ։ Դնա, ընտեղ, ասյտված քեզ հետ,—պատասխանել է բանվորը։

Նայել են նրա բանվորական արկղը — վոչինչ չեն գտել։ Իսկ Նազարովը ամեն ե յեկել, ծիծաղել Ներան հետևել են, բայց վորևե բանում բռնել չի հաջողվել։

Ֆարֆորովցիներն այնքան հին ընկճված ու վախեցած, վոր Նազարովը նրանց մի ծայրահեղ խիստ, թեկից փախած մարդ եր թվում։ Գործարանում վոչ վոք չեր համարձակվում բարձր հառաչել։ Գործարանային դպրոցում սովորում հին ֆարֆորովցիների յերեխաները — նրբությամբ հանդարտ ու հանգիստ, ինչպես և նրանց հայրերը։ Նրանք չարությունն անել չեին կարողանում. նրանք հազվադյուտ դեպքերում հին ծիծաղում այն էլ գաղտնի։

Գործարանում աղմկում ու վորոտում եր միայն դիրեկտոր Գուրևը։ Նա բանվորներից այնքան բարձր եր կանգնած, վոր նրանց վոչ թե մարդ, այլ ասամած եր թվում, չնայած իր հիմարությունների։

Իսկ աշխատանքը գործարանում վատ եր գնում։ Նկարիչները անշնորհք կերպով հին նախշում արտատահմանյան հնաձև նկարները մեծ վազերի վրա և աշխատում հին նկարչության թևերությունները ծածկել խիտ ու կոպիտ վոսկեզոծումով։ Նրանց նկարները անկյանք, անհամ հին դուբս գալիս, յերբեմն էլ ինչպես թղթե վարդերը «լավ մարդկանց» կոմոդների վրա։

Փարիզի 1900 թվականի համաշխարհային յուբիլեանդեսում կայսերական գործարանի ամած իրերը մյուս յերկրների ճենապակուց վատ դուրս յեկան։

— Ռուսական նկարներում քիչ ճաշակ կա և վարպետություն չի նկատվում։ Կայսերական գործարանում հնամոլություն և թագավորում,— ասում հին յեվրոպացիք։

Այսպիսի կարծիքներ լսելով՝ պալատական նախարարն անհանգըստանում եր։

— Ինչպես յերևում ե, դիրեկտոր Գուրևը ճենապակու արվեստը քիչ ե հասկանում։

Գուրևին հեռացրին։ Դիրեկտոր նշանակեցին բարոն Ֆոն Վոլֆին — մի յերկար, նիհար գլխանոցավոր։ Նա գեղարվեստը Գուրևից ավելի չեր հասկանում, բայց դրա փոխարեն գիտեր, վոր Յեվրոպայում այժմ մոդայում ե «նոր ոճը»։ Այդ ժամանակ փարիզյան յուբիլեանդեսում թնդում եր դանիական ճենապակին, վոր նկարազարդված եր փայլանկարչական կենդանագրով։ Տափակ յերկարացրած ծաղիկներ, միզապատ դաշտանկարներ, յերկարահեր հալեծիահասարներ,— ահա թե ինչն եր մոդա։

